ՅՈՎՀԱՆՆԷՍ
ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2011

ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞վ կու լայ այսպես խշտեակիս շեմքին.
- Քո՛յր, դարիպն է, բաց:

Կմա՞խք մը կ՚անցնի դուրսէն լալագին.
- Սովն է, դուռը բաց:

Տագա՞ռն է ջախջախ դրանը կուրծքին.
- Ցարդն է, դուռը բաց:

Ռուբէն Սեւակ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ

«ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ»

Այս կարճ նախադասութիւնը, բոլոր հայրենասէր հայերուն համար, սուրբ տեսլական ու խորհրդանիշ է: Եւ այս սուրբ խորհրդանիշ-պատգամը կու գար Սուրբ Վայրէ մը՝ Սուրբ Էջմիածինէն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի բարձր տնօրինութեամբ որոշուած էր, որ իր Սուրբ Հաւատքին հաւատարիմ մնալուն համար թրքանալու առաջարկը մերժած նահատակ-բանաստեղծ Ռուբէն Սեւակի անուան Նիս-ի մէջ գտնուող Յիշատակի Տունը...

«Հայաստան Պիտի Վերադառնար»...:

... Այս կերպով՝ երկար տարիներէ ի վեր մեր փայփայած ծրագիրը պիտի իրականանար:

Այս ձեւով՝ հերոս-նահատակ Ռուբէն Սեւակ իր արժանի տեղը, իր երազած Հայրենի հողը պիտի վերադառնար:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՁԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2011

ՀՏԴ 941 (479.25) : 070
ԳՄԴ 63.3 (2Հ) + 76.1
Զ 556

Զիլինկիրեան Յովհաննէս
Զ 556 Վերադարձ Հայաստան / Յովհաննէս Զիլինկիրեան. - Եր.: Հեղինակային հրատարակութիւն, 2011.- 160 էջ:

ՀՏԴ 941 (479.25) : 070
ԳՄԴ 63.3 (2Հ) + 76.1

ISBN 978-9939-0-0071-8
© Զիլինկիրեան Յովհաննէս, 2011

Les photos ont été prises par Monsieur Hagop AVAKIAN, que nous remercions

Այս գիրքը
խոնարհաբար կը նվիրենք
Հայոց Մեծ Հայրապետը Ս. Ս. Օ. Տ. Տ.

Գարեգին Երկրորդին

առ ի երախտագիտություն

Յովհաննես Չիլինկիրեան
11 մայիս 2011 թ.
Երև



ՄՈՌԱՑՈՒԹԵՆԷ ԴԷՊԻ ՅԱՒԵՐԺՈՒԹԻՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին հրաւերով՝
այցելութիւն մայր Հայրենիք եւ Սուրբ Էջմիածին։

«Թո՛ղ քարկոծեն զիս թերահաւատները։ Ես չեմ կրնար ուրանալ այն անջնջելի արցունքը, որ իմ մայրենի եկեղեցին կրցաւ կաթեցնել էութեանս մէջ, եւ որ բոլոր դիտութիւնները միացած չպիտի կարենային կաթեցնել...»։

Ռուբէն Սեւակ

Լօզան — 1913
«Փոխան Հարսանիքի» — հատուած

Մեր այս գրութիւնը...

Դէպի Մայր Հայրենիք, դէպի Սուրբ Էջմիածին կատարուած ուխտագնացութեան համազօր այցի մը տպաւորութեան տակ թուղթին յանձնուած՝ աւելի շատ պատկերազարդ պիտի ըլլայ... հաւատալով այն վարկածին, թէ՝ «երբեմն մէկ նկար՝ հազար էջնոց հատորէ մը աւելի «Խորհրդաստ» և պերճախօս է։

31 տարիներ յետոյ՝ 2 Մայիս 2009-ին, կրկին Մայր Հայաստանի հողը ոտք դնելու եւ Սուրբ Էջմիածինը տեսնելու երջանկութիւնը ունեցանք։ Հայաստանի մէջ, հարազատիս՝ Յակոբ Աւագեանի հետ, մեր առաջին պարտականութիւնը եղաւ՝ այցելել Սուրբ Էջմիածին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս, ստեղծագործ եւ չինարար Հայրապետ՝ Գարեգին Բ.ին աջը առնել։

Եւ տեսնելով սքանչելի Սուրբ Էջմիածինն ու համանուն համալիրը, Մայր Աթոռ այցի ու աղօթքի եկած խուռներամ ժողովուրդը, մեր հաւատքը զօտեպնդուեցաւ այն համոզումով, թէ՝ միածնաէջ կեդրոնին «լոյսը» յաւերժ պիտի լուսաւորէ եւ առաջնորդէ բոլոր հայերուն հոգիները եւ քայլերը։

2 Մայիս 2009.

Ս. Էջմիածնի Վեհարանին մէջ։ Ձախէն աջ՝ Հայաստանի «Թէքէեան» Մշակթ. Միութեան նախագահ՝ Ռուբէն Միրզախանեան, Յ. Ձ., Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Յակոբ Աւագեան [ժընեւաբնակ]։



Մայր Աթոռի շրջափակէն ներս, Վեհափառին հետ... [2-5-2009 թ.]։

Սուրբ Էջմիածնի համալիրին մէջ, Վեհափառ Տէր Գարեգին Բ.ի հետ։ Ձախէն աջ՝ Յ. Ջ., Վեհափառ Գարեգին Բ., Յակոբ Աւագեան, Ռուբէն Միրզախանեան [10 Մայիս 2009 թ.]։



Սուրբ Էջմիածին Մայրավանքի տաճարին առջև՝
Ռուբէն Միրզախանեան և Յ. Զ.:

Սեւանի ափին, «Վազգէնեան Դպրանոց»ի մատուռէն ներս..., Վեհափառ Գարեգին Բ., Խաժակ Արք. Պարսամեան, Յ. Ջ. [7-5-2009]:

«Վազգէնեան Դպրանոց»ի երգչախումբի ներկայութեան...
Սրտի խօսք կ'ուղղէ Յ. Զ.: [7 Մայիս 2009]:



Մայր Աթոռի Վեհարանէն ներս։
Ձախէն աջ՝ Ռուբէն Միրզախանեան, Տաթեւ Արք. Սարգիսեան, Յ. Ձ., Յակոբ Աւագեան [10-5-2009 թ.]։

Սեւանայ լիճի մօտ, «Վազգէնեան Դպրանոց» այցի ընթացքին:
Ձախէն դէպի աջ՝ Ռուբէն Միրզախանեան, Յ. Ձ., Վեհափառ Տէր Գարեգին Բ., Արեւելեան Ամերիկայի Առաջնորդ՝ Գերաշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, Յակոբ Աւագեան:



Սեւանի ափին, «Վազգէնեան Դպրանոց»ի բակին մէջ, Լուսահոգի Վազգէն Ա. Վեհափառ Կաթողիկոսի արձանին առջեւ, Յ. Ջ. և Ռուբէն Միրզախանեան։

Սեւանայ լիճի ափին՝ Յ. Զ. և Յակոբ Աւագեան [7 Մայիս 2009 թ.]։

Երեւանի Ռուբէն Սեւակի անուան միջնակարգ դպրոցի բակին կեդրոնը կանգնած Ռուբէն Սեւակի կիսանդրիին պատուանդանին ծաղկեփունջ կը մատուցէ Յ. Զ.։

5-5-2009 Թ.: Երեւանի Գրականութեան և արուեստի Թանգարանի տնօրէնութեան սենեակին մէջ, տնօրէն՝ Հենրիկ Բախչինեանի հետ:

Տնօրէնութեան սենեակին մէջ կը տեսնուի Ռ. Սեւակի դիմանկարը, որ գծագրուած է Լոզանի մէջ 1911-Թ.ին, նահատակին ընկերոջ՝ Լեւոն Ազնաւորեանի կողմէ:

Երեւանի Ռուբէն Սեւակի անուան միջնակարգ դպրոցի բակին մէջ, Ռուբէն Սեւակի կիսանդրիին առջեւ՝ տնօրէնուհի Ճուլիա Ղազարեան, Յ. Զ. և Յակոբ Աւագեան։

Երեւանի Գրականութեան և արուեստի Թանգարանին մուտքին... Հոս կը գտնուին Ռուբէն Սեւակի գրութիւններուն մէկ մասին բնագիրները [5-5-2009-թ.]։ Ձախէն աջ՝ Յ. Զ., Յակոբ Աւագեան։

Երեւանի Ռուբէն Սեւակի անուան միջնակարգ դպրոցի ընդարձակ պարտէզ-բակին կեդրոնը, պատուանդանի վրայ զետեղուած Ռուբէն Սեւակի կիսանդրիին առջեւ՝ տնօրէնութիւն-ուսուցչական կազմ և... հիւրեր՝ Յ. Զ. և Յակոբ Աւագեան:

5-5-2009-թ.– Երեւանի «Թէքէեան» Մշակութային Միութեան սրահին մէջ կայացած «Ռուբէն Սեւակ Յիշատակի Օր»ուան հանդէսին – Վահան Թէքէեանի կիսանդրիին առջեւ՝ Յ. Զ. և Միութեան նախագահ Ռուբէն Միրզախանեան:

Թէքէեան Մշակթ. Միութեան սրահին մէջ, Ռուբէն Սեւակի «Յիշատակի Օր»ի հանդիսութեան ընթացքին, նուագախումբը ելոյթ կ'ունենայ [5-5-2009-թ.]:

«Armenia» հիւրանոցին [Երեւան՝ ապահովութեան պատասխանատուն, շատ խորիմաստ հարցում մը կ'ուղղէ մեզի՝ «Ռուբէն Սեւակ 1914-ին ինչո՞ւ Լօզանի իր հանգիստ կեանքը ձգեց և Պոլիս վերադարձաւ»]:

Մեր պատասխանը.– Հերոսները չեն լքեր Պատերազմի դաշտը»:

[6-5-2009-թ.]:

5-5-2009-թ. Երեւան – Ռուբէն Սեւակի դիմանկարը [իւղաներկ], գործ՝ գեղանկարիչ Լեւոն Ազնաւորեանի [Լօզան 1911-թ.]: Ռուբէն Սեւակ բժիշկի սպիտակ «Խալաթ»ով: Այս պաստառը կը գտնուի Երեւանի Գրականութեան և արուեստի թանգարանի տնօրէնութեան սենեակին մէջ:

Հրաչեայ Աճառեանի անուան համալսարանի մէջ, ուսանողութեան առջեւ կատարուած բանախօսութիւն-հարցազրոյցին ընթացքին, համալսարանի ուսանողներու և Ընդհ. Տեսուչի ներկայութեան [6-5-2009-թ. Երեւան]։

Թ.Մ.Մ.-ի նախագահ Ռ. Միրզախանեան, «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն»ին կը նուիրէ Ախթամար եկեղեցիին մէկ գեղանկարը [5-5-2009-թ.]։



Մարտիրոս Սարեանի արձանին առջեւ,
Փրոֆ. Վլատիմիր Պետրոսեանի հետ [6-5-2009-Թ.]:



9-5-2009-Թ. Երեւան:

Երեւանի մէջ մեզ շատ տպաւորած անձնաւորութեան մը... [որ Հայաստանի ապագայի մասին մեր ունեցած յոյսերը բազմապատկեց] Գագիկ Աբրահամեանի նորակառոյց տան մէջ... ձախէն աջ՝ Արմէն Աբրահամեան [Արա Աբրահամեանի եղբայրը՝ ՀՀ Ազգ. Ժողովի Պատգամաւոր], Յ. Ձ. – Ռուբէն Միրզախանեան, Փրոֆ. Վարդան Պոստանճեան՝ ՀՀ Ազգային Ժողովի Պատգամաւոր, Գագիկ Աբրահամեան [Արա Աբրահամեանի երէց եղբայրը], ՀՀ Ազգային Ժողովի Պատգամաւոր – Երեւանի իր գոհարեղէնի գործարանին մէջ հազարէ աւելի գործաւոր կ'աշխատին:



Սեւանի Թերակղզի.
«Վազգէնեան Հոգեւոր Դպրանոց»ը։

... Ու երբ դեռ երկրի վրա Ազատության
Համար մեռնեն ապի մը մարդեր չնչին,
Անոնք պիտ ըլլան Մարդկության վերջին
Վերջին Հայերը...

6-5-2009 Երեւան:
«Armenia» Պանդոկի մէջ. ձախէն աջ՝
Ռուբէն Միրզախանեան, Յակոբ Աւետիքեան [«Ազգ» թերթի Պատասխանատու խմբագիր]:



Այստեղ կը հրատարակենք Երեւանի «Business» [Պիզնես] պարբերաթերթին առաջին էջին հրատարակուած Գագիկ Աբրահամեանի նկարը։

10-5-2009-թ. – Դէպի Եղեռնի Յուշարձան՝
Ձախէն աջ՝ Յ. Աւագեան, Փրոֆ. Վլատիմիր Պետրոսեան, Յ. Զ., տնօրէնուհի [«Ռուբէն Սեւակ» միջնակարգ դպրոցի] Տիկ. Ճուլիա Ղազարեան:

10-5-2009-Թ. – Եղեռնի Յուշահամալիրին առջեւ:
Ձախէն աջ՝ Յ. Ջ., Յ. Աւագեան, Փրոֆ. Վ. Պետրոսեան, Տիկ. Ճ. Ղազարեան, Բժիշկ Ա. Ղազարեան և մեր ապագայի յոյսը՝ փոքրիկն Լեւոն Ղազարեան:

10-5-2009-Թ., Դէպի ցեղասպանութեան Թանգարան:
Ձախէն աջ՝ Բժիշկ Ա. Ղազարեան, Փոքրիկն Լ. Ղազարեան,
Փրոֆ. Վլատիմիր Պետրոսեան, Յ. Ջ., Յ. Աւագեան:



10-5-2009-թ., Յաւերժական բոցին առջեւ։
Ձախէն աջ՝ Յ. Զ., Ճ. Ղազարեան, Յ. Աւագեան, Փրոֆ. Վ. Պետրոսեան։

Ցեղասպանութեան խորհրդանիշը – ցեղասպանութեան թանգարանին մէջ, 24 Ապրիլ 1915-թ.ի խումբ մը մտաւորական նահատակներու նկարներուն առջեւ կեցած՝ տնօրէնուհի Ճուլիա Ղազարեան և Յ. Զ.։

* * *

Հպարտութեամբ պիտի չարունակենք ըսել, որ Սփիւռքի մէջ ապրող եւ օտար միջավայրի ճնշիչ ազդեցութեան պատճառաւ մեր հայկականութենէն շատ բան կորսնցուցած հայ մը ըլլալով՝ մեր Հայաստան եւ Սուրբ Էջմիածին այցելութեան օրերուն ձեւով մը խաւարէն գալով լոյս աշխարհ մտնելու տպաւորութիւնը ունեցանք։

Այսօրուան Հայաստանը իր բնութեան գեղեցկութեամբ, պատմական յուշարձաններով, եւ մանաւանդ՝ խորհրդային շրջանի հայկական պատմական ճարտարապետութեան ոճով կերտուած հրաշալի կառոյցներով, եւ դեռ՝ վերջին տասնամեակին կառուցուած արդիական շէնքերով... քիչ մը ամէն մարդի մէջ, կրնայ մրցիլ որեւէ եւրոպական երկրի հետ։

Մանաւանդ երբ Սուրբ Էջմիածնի Մայր դարպասէն ներս մտանք, Էջմիածինը իր մոգական գեղեցկութեամբ մեզ ուրիշ աշխարհ մը՝ Հայոց պատմական փայլուն աշխարհը փոխադրեց։

... Եւ Սուրբ Էջմիածնի Վեհարանին մէջ ունեցանք երջանկութիւնը ծանօթանալու Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի հետ։

Եւ մենք, անհուն ուրախութիւնը ունեցանք Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ.ի մէջ տեսնելու՝ հայ ազգային իսկական մեծ առաջնորդ-ղեկավարի մը տիպարը։

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ին մեր ներկայացած օրը և ստացած առաջին տպաւորութիւնը այն եղաւ, որ Ան՝ իսկապէ՛ս Ամենայն Հայոց Հայրապետ է...։

... Իր չատ համեստ, հաղորդական և ջերմ կեցուածքով Ան մեզ, առաջին վայրկեանէն իսկ, հմայեց... բնաւ գոռոզութիւն չունէր... ընդհակառակը՝ մեզի հետ չատ մտերմաբար խօսեցաւ, ընկերոջ մը պէս...

... Այս յատկութիւնը՝ միայն մեծ «Ղեկավարներու» բնորոշ բարեմասնութիւն է:

* * *

Մեր Սուրբ Էջմիածին այցելած օրերուն, Վեհարանին մէջ ծանօթացանք նաեւ Սփիւռքի զանազան երկիրներէն ժամանած հայ բարերարներու, որոնք եկած էին Վեհափառին աջը առնելու և իրենց կատարած ազգանուէր գործունէութեան մասին և բարի ծրագրումներուն շուրջ խորհուրդն առնելու Նորին Սրբութեան...

Սուրբ Էջմիածնի Վեհարանէն ներս այս բարերարները տեսնելը, մեզի մեծ գոհունակութիւն պատճառեց:

Որովհետեւ, 25 տարիներէ ի վեր մեր յայտնած գաղափարներուն, ունեցած երազներուն և տեսիլքներուն ձեւով մը իրականացումն էր, որ ստեղծագործ և չինարար Կաթողիկոս Գարեգին Բ.ին շնորհիւ, կեանքի կը կոչուէին...

Տարիներ շարունակ հառաջեցինք՝ «Սփիւռքի հայերը պէտք եղած չափով չեն օգներ իրենց Մայր հայրենիքին՝ Հայաստանին...:

Այսօրուան Հայաստանը մեր վերջին յոյսն է... Եթէ հիմա չօգնենք մեր Մայր հայրենիքին՝ յետոյ չատ ուշ պիտի ըլլայ...

... Քիչ մը դաս առնենք Սփիւռքի հրեաներէն, որոնք իրենց եկամուտին հարիւրին տասը՝ կը յատկացնեն Իսրայէլի...»:

* * *

Հայաստանին պէտք եղած չափով չօգնելու հարցի մէջ, մեղքը միայն Սփիւռքի հայերուն ճիտին չէ որ կը ծանրանայ։

Սփիւռքահայերուն վստահութիւն ներշնչել պէտք էր։ Սփիւռքի հայերը տատամսոտ և մտահոգ էին շրջող զրոյցներուն պատճառաւ...։

Եւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ունեցաւ այդ բացառիկ կարողութիւնը... վստահութիւն ներշնչելու...։

Եւ հայերը հաւատացին և վստահեցան՝ ստեղծագործ և չինարար Վեհափառ Հայրապետին։

* * *

Երբ Հայաստանին օգնելու հարցը կ'արծարծենք՝ անկարելի է, որ չյիշատակենք Պօղոս Նուպար Փաշան եւ Ալեք Մանուկեանը... Պօղոս Նուպար Փաշան [1851–1930] իբր հեռատես և հայրենասէր Հայ գիտէր՝ թէ վարչաձեւերը կ'անցնին ու կ'երթան... Բայց Հայրենիքը կը մնայ...։

Եւ Պօղոս Նուպար Փաշան, այդ շրջաններուն իր կարելիութեան չափով օգնեց Հայաստանին։ [Երբ մեր ազգասէր կարծուածները թշնամացած էին Խորհրդային Հայաստանին]...։ Պօղոս Նուպար Փաշայի Հայաստանի մէջ կատարած բարերարութիւններէն՝ յիշենք «Նուպարաշէն» աւանը և շատ ու շատ ուրիշ կառոյցներ...։

Պօղոս Նուպար Փաշան հայրենասիրութեան գաղափարախօսութեան մարմնացումն էր։

Իր հիմնած «Բարեգործական կազմակերպութիւնը», Հ.Բ.Ը.Մ.ը ասոր ապացոյցն է։

* * *

Բարեգործական Ընդհանուր Միութեան ցկեանս Նախագահը՝ Ալեք Մանուկեան, [1901–1996] մեր համոզումով, նոր շրջաններու Պողոս Նուպար Փաշան է։

Մենք կը հաւատանք, որ Ալեք Մանուկեանը իբր հայրենասէր, իբր բարերար և մանաւանդ իբր ղեկավար՝ հայ ժողովուրդին վերջին շրջաններուն ունեցած մեծագոյն անձնաւորութիւններէն է։

Ալեք Մանուկեանի Հայրենիքի և Սփիւռքի մէջ կատարած բարերարութիւնները անհամար են։

Ալեք Մանուկեանին նախագահութեան շրջանին է, որ Բարեգործական Միութեան գործունէութիւնը իր գագաթնակէտին հասաւ...։

Մեր Սուրբ Էջմիածին ուխտագնացութեան օրերուն, այցելեցինք նաեւ Վեհարանին գրեթէ կից գտնուող «Ալեք և Մարի Մանուկեան» թանգարանը, որ իսկական պալատ մըն է։

Այս թանգարանին մէջ կը ցուցադրուին հայ պատմական և գեղարուեստական բացառիկ իրեր-արժէքներ, որոնք ապացոյցներն են «ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ»ի մեծութեան։

* * *

Սուրբ Էջմիածին մեր ուխտագնացութեան միջոցին, մոգական Աշխարհէ մը ներս մտնելու տպաւորութիւնը ունեցանք։

Այս տողերը թուղթի յանձնելով՝ չենք չափազանցեր։

Այցելած ենք Յունաստանի Mont Athos-ի Բիւզանդական եկեղեցիները...

Այցելած ենք Յունաստանի METEORA ըսուած շրջանի բիւզանդական վանքերը...:

Բոլորն ալ պատմական եկեղեցիներ են, որոնց մէջ կը գտնուին մեծ թիւով և բացառիկ սրբապատկերներ (ICON):

Բայց, ոչ մէկ բիւզանդական եկեղեցի, ոչ մէկ բիւզանդական վանք կրնանք բաղդատել՝ Սուրբ Էջմիածնին ունեցած վեհութեան հետ...:

Շատ անգամ այցելելու առիթը ունեցած ենք Հռոմի Վատիկանը, Սրբ. Պետրոս եկեղեցին և ասոր յարակից թանգարանները:

16-րդ դարու հոյակապ կառոյցներու համալիր մըն է Վատիկանը, ուր կը գտնուին գեղարուեստական բացառիկ ստեղծագործութիւններ:

Բայց Վատիկանը չունի Էջմիածնի հնագոյն շրջաններու «Բոյրը»: Այստեղ ձեր տեսածները կրնան հիացում առթել ձեզի:

Մինչդեռ Էջմիածնէն ներս՝ կախարդական աշխարհի մը մէջ գտնուելու տպաւորութիւնը կ'ունենանք: Սուրբ Էջմիածնի մէջ է, որ կ'զգանք, իբր «Մարդ» և իբր «Կենդանի արարած», թէ մեր մէջ ուրիշ բան մըն ալ ունինք՝ հոգեւոր կողմ մը...:

Թերեւս անհասկնալի և անբացատրելի՝ բայց իրական հոգեւոր Աշխարհ մը:

* * *

Ինչ դիպուած, որ երբ Հայաստանէ վերադարձի օրերուն կրկին Մայր Հայրենիքին մոգական գեղեցկութեան մասին կը մտածէինք, բացիկ-գրութիւն մը ստացանք, որ

ուղարկուած էր մեր Ֆրանսացի ատամնաբոյժ-բժիշկին կողմէ, Հայաստանէն:

Այս բացիկ-գրութիւնը կը ներկայացնէր Արարատը՝ իր հոյակապ տեսքով: Եւ Արարատի կողքին՝ Խոր Վիրապի վանքը:

Բայց Արարատի և Խոր Վիրապի նկարին չափ մեզ տպաւորեց՝ Ֆրանսացի բժիշկին մեզի գրածները:

Այստեղ կը հրատարակենք Հայաստանէն ուղարկուած այս բացիկ-նամակ-նկարը, անոր, Ֆրանսերէն գրութիւնը ու նաեւ՝ ասոր Հայերէն թարգմանութիւնը՝

«Լաւագոյն յիշատակներ Ձեր գեղեցիկ երկրէն, ուր մենք անցուցինք հոյակապ արձակուրդ մը:

(Dr.) Joncour.



* * *

Վատիկանը՝ միջազգային Կաթողիկէ եկեղեցիին կեդրոնն է: Եւ Իտալական Պետութեան կողմէ ան, իբր անկախ պետութիւն ընդունուած է:

Սուրբ Էջմիածինն ալ՝ բոլոր հայերուն համար, հայկականութեան կեդրոնն է...:

Եւ Սուրբ Էջմիածինը իր շրջաններով, իբր տարածք՝ Վատիկան-ի պետութեան տարածքէն աւելի մեծ է:

Եւ Ա.Հ.Կ. Գարեգին Բ.ի աշխատանքներուն շնորհիւ՝ Էջմիածինը իր պատմական շրջանի հողամասերուն տիրացած է...:

Սուրբ Էջմիածինը՝ բաղդատաբար Վատիկանի՝ մոգական գեղեցկութիւն մ'ունի ըսած էինք:

Ա.Հ.Կ. Գարեգին Բ.ի ջանքերով՝ Ս. Էջմիածինը Վատիկանի նման թանգարաններու համալիր մը, հայկական տաղանդներուն ստեղծած փայլուն գործերուն գանձարանը ըլլալու ճամբուն մէջ է:

* * *

1999-թ.ին, Ա.Հ.Կ. Գարեգին Բ.ի դեռ նոր ընտրուած ամիսներուն էր:

Մեզի բարեկամ եկեղեցականի մը հարցուցինք. «Սրբազան, ի՞նչ է ձեր կարծիքը Գարեգին Բ.ի մասին»:

Տրուած պատասխանը մեզ շատ տպաւորեց.— «Ստեղծագործ, չինարար Կաթողիկոս է»:

Սրբազանին տուած պատասխանին մէջ, Գարեգին Բ.ի մասին ըսուածներուն ճշգրտութիւնը այսօր, շատ աւելի լաւ կը հասկնանք:

Այստեղ ալ պիտի ջանանք Գարեգին Բ.ին ստեղծա-

գործութիւններէն միայն երկու հատին մասին արտայայտուիլ։

Երեւանի կեդրոնը կառուցուած Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Տաճարը աշխարհի վրայ այսօր գտնուող հայկական եկեղեցիներուն մեծագոյնն է։

Թէեւ այս մեծ եկեղեցիին հիմերը նետելու օրերուն ինք կաթողիկոս չէր։ Բայց Երեւանի շրջանի Առաջնորդը ըլլալուն՝ ինքն էր եկեղեցիին շինութեան պատասխանատուն։

Եւ եկեղեցիին բացումը կատարուեցաւ Գարեգին Բ. Կաթողիկոսի ձեռամբ։

* * *

7 Մայիս 2009-թ.ը, Հայաստանի մէջ, մեզի համար կրկնակի պատմական օր մըն էր։

Այդ օր այցելեցինք նաեւ Սեւանի թերակղզիին վրայ գտնուող նորակերտ Վազգէնեան Դպրանոցը։

Բացառիկ համալիր մըն այլ այս մէկն է՝ Վազգէնեան Դպրանոցը։

Գերարդիական սարքաւորումներով օժտուած, Եւրոպական մակարդակի ուսումնարան մըն է։

Եւ այս Վազգէնեան Դպրանոցը ստեղծողը, Ա-էն մին - չեւ Ֆ-ը՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսն է։

Այստեղ կը հրատարակենք նկար մը՝ ուր կը տեսնուի Գարեգին Բ.ն Սեւանի Վազգէնեան Դպրանոցին մէջ, շրջապատուած ուսանողներէ, եկեղեցականներէ և կառոյցի բարերարներէն՝ Տէր և Տիկին Յակոբեաններու հետ։

Վեհափառ Հայրապետը Տէր. և Տիկ. Յակոբեաններու հետ։

* * *

«Եկեղեցին հայերուն միութիւնն է»

31 Մարտ 1911 – Լօզան Ռուբէն Սեւակ

Մենք այստեղ՝ Ռուբէն Սեւակի մարգարէական խօսքերուն ներքեւ, կ՚ուզենք մեր հիացումը և երախտագիտութիւնը յայտնել Ամենայն Հայոց Կաթողիկոս, ստեղծագործ և շինարար Հայրապետ Գարեգին Բ.ին։

Եւ իրեն կը մաղթենք արեւշատութիւն, որ կարենայ շարունակել իր ազգանուէր ստեղծագործութիւններն ու նորարարութիւնները։

* * *

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինութեամբ, 8 Մայիս 2009-թ.ին, Ս. Էջմիածնի «Շողակաթ» հեռուստատեսիլի չէնքին մէջ, կայանի Տնօրէն՝ Հայկ Համբարձումեան մեզ հետ կատարեց հարցազրոյց մը, որ Հայաստանի «Հ.1»-էն սփռուեցաւ 27 Յունիս 2009-ին, հետեւեալ սխրալի վերտառութեամբ՝ «Վերադարձ Հայաստան»:

4 Մայիս 2009-թ.ին, առաջին անգամ ըլլալով, այցելեցինք Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցը: Եւ ունեցանք ծանօթանալու ուրախութիւնը դպրոցի տնօրէնութեան ու վարչական կազմին հետ... եւ աւելի ետք ալ՝ ուսուցիչներուն:

Մեզի համար բացառիկ եւ նաեւ յուզիչ օր մըն էր: Ու մեր երախտագիտութիւնը եւ հիացումը յայտնեցինք իրենց:

Եւ ուսուցիչներուն հետ ունեցած տեսակցութեան ընթացքին, մեր մտահոգութիւնը չծածկեցինք... — «Հայաստան այսօր ենթարկուած է շատ լուրջ վտանգի մը՝ եւրոպականացման վտանգին, որ Հայկականութեան «ոգի»ն կ'այլասերէ»:

5 Մայիս 2009-թ.ին, Երեւանի «Վահան Թէքէեան»ի անուան Մշակութային Միութեան սրահին մէջ, Ռուբէն Սեւակի յիշատակին նուիրուած բացառիկ հանդիսութիւն մը կատարուեցաւ... Եւ մենք յափշտակութեամբ հետեւեցանք յարգելի անձնաւորութեանց բոլոր ելոյթներուն որոնց, միտք բանին հետեւեալն էր՝ «Նահատակ Ռուբէն Սեւակի անձնազոհութեան ոգին օրինակ ըլլալու է Հայութեան»:



Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի բարձր տնօրինութեամբ, 8 Մայիս 2009-ին, Ս. Էջմիածնի «Շողակաթ» հեռուստատեսային կայանի չէնքին մէջ, կայանի տնօրէն՝ Հայկ Համբարձումեան մեզի հետ հարցազրոյց մը կատարեց: Եւ այս հարցազրոյցը 27 Յունիս 2009-թ.ին Հայաստանի հեռատեսիլի «Քանալ 1»էն ցուցադրուեցաւ հետեւեալ սխրալի վերտառութեամբ՝

«ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ»:

Յ. Զիլինկիրեան Ռուբէն Սեւակի կիսանդրիին ծաղկեփունջ մատուցելու պահուն։

4 Մայիս 2009-թ.ին, առաջին անգամ ըլլալով, այցելեցինք Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցը։ Եւ ծանօթանալու ուրախութիւնը ունեցանք դպրոցի տնօրէնութեան և վարչական կազմին հետ։ Եւ աւելի ետք ալ՝ ուսուցիչներուն հետ։ Մեզի համար բացառիկ և նաեւ յուզիչ օր մըն էր։ Եւ մեր երախտագիտութիւնը և անկեղծ հիացումը յայտնեցինք իրենց... ուսուցիչներուն հետ մեր կատարած տեսակցութեան ընթացքին, և մեր խոր մտահոգութիւնը մատնանշեցինք չեչտելով՝ Հայաստան այսօր ենթարկուած է մեծ վտանգի մը՝ Եւրոպականացման սա Վտանգին, որ հայութեան վեհ «ոգի»ն կը բնաջնջէ։



Ռուբէն Սեւակի յիշատակին նուիրուած հանդիսութեան բացումը կատարեց Հ.Թ.Մ.Մ.-ի Նախագահ, Պատմագէտ Դոկտ. Ռուբէն Միրզախանեան:

Մեծ գոհունակութեամբ հետեւեցանք իր բանախօսութեան: Ան բացառիկ հմտութեամբ ներկայացուց Ռուբէն Սեւակը իբր հայրենասէր, բանաստեղծ և նահատակ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիւանապետ Գերաշ. Արշակ Եպիսկ. Խաչատրեան, օրհնութեան իր խօսքը տուաւ... և Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ին յաջողութեան մաղթանքները փոխանցեց օրուան հանդիսութեան ներկաներուն:

Մենք սքանչացանք, Արշակ Եպիսկ.ին կատարած ելոյթին:

Պետական Մանկավարժական Համալսարանի ժողովրդական գործիքներու նուագախումբը – երկսեռ երիտասարդ համալսարանականներէ կազմուած այս նուագախումբը, պատմական մեղեդիներու իր կատարմամբ, բոլորովին նոր շունչ տուաւ:

Հայաստանի Գրողներու Միութեան Նախագահ Լեւոն Անանեան – Ռուբէն Սեւակի անձնազոհութեան ոգին մատնանշելէ յետոյ, մասնաւորապէս կեդրոնացաւ 2010-թ.ին կատարուելիք Ռուբէն Սեւակի ծննդեան 125-ամեակի հանդիսաւոր յիշատակման ծրագիրներուն վրայ:



Հայաստանի Մշակոյթի Փոխ-Նախարար Դաւիթ Մուրատեան:

Պիտի խոստովանինք, որ մեզի համար, անակնկալ մը եղաւ Մշակոյթի Փոխ-Նախարար Դաւիթ Մուրատեանի ելոյթը:

Ալեքսանդր Թոփչեան –

Բնական է՝ հանդիսութեան ամենէն ցայտուն բանախօսը՝ իբր առաջնակարգ Սեւակագէտ՝ Ալեքսանդր Թոփչեանն էր։

Անահիտ Թոփչեան – Վաստակաւոր ժողովրդական արտիստ Անահիտ Թոփչեան... միշտ եղածին պէս՝ Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնները մեկնաբանեց արտիստական բացառիկ կարողութեամբ։

Բանասիրական Գիտութիւններու Դոկտոր՝ Սերժ Սրապիոնեան –

Պիտի խոստովանինք, որ Ս. Սրապիոնեանի այս հանդիսութեան օրը Ռուբէն Սեւակի մասին ունեցած ելոյթը, մեզի համար յայտնութիւն մը եղաւ։

Հայաստանի Ազգային Ակադեմիայի Արտասահմանեան անդամ-գրականագէտ Երուանդ Ազատեան։

– Ռ. Սեւակի յիշատակի հանդիսութեան օրը, ելոյթ ունեցող միակ սփիւռքահայ մտաւորականը՝ մեր վաղեմի բարեկամ Երուանդ Ազատեանն էր։

Ասմունքող՝ Աննա Հէքէքեան – Մեզի համար անակնկալ մըն էր Աննա Հէքէքեանը, որ նախ՝ Ռուբէն Սեւակ բանաստեղծը ներկայացուց: Յետոյ՝ Ռ. Սեւակէն քերթուածներ արտասանեց:

Ռուբէն Սեւակի անուան դպրոցի Տնօրէնուհի Ճուլիա Ղազարեան... որ վերջին ելոյթ ունեցողը եղաւ:



Յովհաննէս Զիլինկիրեան կը կատարէ «Հուսկ Բանք»:

Շամիրամ Սեւակ իր հօր անուանակիր դպրոցի ցուցասրահին մէջ նկարուած – Երեւան, Հայաստան:

«Ռուբէն Սեւակ»ի անուան դպրոցի ուսուցչուհիներ:

Յովհաննէս Զիլինկիրեան «Ռուբէն Սեւակ»ի անուան դպրոցի տեսչարանին մէջ:

Յովհաննէս Զիլինկիրեան նախակրթարանի աշակերտներու հետ:

Յ. Զիլինկիրեան Տնօրէնուհի Ճուլիա Ղազարեանի հետ:

Յ. Զիլինկիրեան կը խօսի ուսանողութեան:

Ռ. Սեւակի անուան դպրոցին մէջ։

Յ. Զիլինկիրեան ցոյց կու տայ Թուրքերու կողմէ 1917-Թ.ին Պոլիս լոյս տեսած գիրքը, որ կը խօսի Հայ կուսակցութիւններու մասին և ուր Թարգմանուած է Ռ. Սեւակի «Օրօր» քերթուածը։

Յ. Զիլինկիրեան կը պատասխանէ լրագրողներու հարցումներուն։

«ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ»

Մեր այս գրութիւնը կը ձօնենք՝ մեր հոգեղբայր Ժիրայր Նայիրիին ու իր ազնուափայլ տիկնոջ, որոնք 15 տարիներէ ի վեր, մեր գրութիւնները կը վերծանեն եւ կը խմբագրեն:

Այստեղ կ'ուզենք կրկին մեր երախտագիտութիւնը յայտնել՝ Ժիրայր եւ Մարի Նայիրիներուն:

* * *

Երբ 27 Յունիս 2009-թ.ին Երեւանի «Հ.1» և Ս. Էջմիածնի «Շողակաթ» կայաններէն սփռուած յայտագիրները դիտեցինք, և մանաւանդ՝ «Վերադարձ Հայաստան» շատ խօսուն վերնագիրը կարդացինք, բառին իսկական իմաստով՝ ցնցուեցանք:

Հայութեան համար «Վերադարձ Հայաստան»էն աւելի խորհրդանշական ու սրտաբուխ նպատակ մը չէր կրնար ըլլալ...

Այս մասին մեր գրութիւններով, երկար տարիներէ ի վեր, կը հառաչենք՝ «... Հայը՝ Թրքական հալածանքներու հետեւանքով, տեւական փախչիլ սորվեցաւ, և պարպեց հայրենի, մայր հողը, և հաստատուեցաւ աւելի ապահով և «Շահաբեր» տեղեր, մանաւանդ՝ Պոլիս և շրջակայքը:

Այս ձեւով Հայը կորսնցուց իր հողին վրայ միասնաբար, ազգովին ու համախումբ ապրելու առավելութիւնը, և շուտով վերածուեցաւ հոս ու հոն տարտղնուած և իրարու հետ կապ չունեցող մանր, կղզեակ-գաղութներու:

Հայը՝ օսմանեան գրաւման շրջանին, Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ, բառիս բուն իմաստով՝ մէկ հատիկ հայկական քաղաք չկրցաւ հիմնել, Անի քաղաք մը չկրցաւ վերակառուցել:

Որովհետեւ հաւաքաբար ապրելու, իրարու զօրավիգ ըլլալու և թշնամիին դէմ համատեղ պայքարելու կարողութիւնը չունէր...: Ոչ ալ իմաստութիւնը... դժբախտաբար:

... Թէեւ 1885-թ.ին կարգ մը հայրենասէր հայեր, Վանի մէջ ստեղծեցին՝ «Վերադարձ դէպի հայրենիք» Արմէնական շարժումը, բայց շատ ուշ էր... Հայերը փախցուցած էին առիթը՝ 1876-թ.ին:

Ռուսերուն Արեւմտեան Հայաստանը ազատագրած տարիներուն՝ հայերը միացան Արեւմտեան Մասոնա-Սիոնական [և իբր թէ Ընկերվար] խմբակներուն, և այս ձեւով կորսնցուցին ռուսական թիկունքը...

... Եւ [իբր թէ] ազգայնասէր որոշ հայերուն մինչեւ 1920-թ. Արեւմտեան պետութիւններուն հետ զինակցիլը՝ մեր հայրենիքին ութսուն առ հարիւրին կորուստին պատճառ եղաւ...: Քանի որ այդ Արեւմուտքը մեզ խաբեց:

Բարեբախտաբար 1920-թ.ին, Ռուսերուն թիկունքով, ունեցանք փոքր հայրենիք մը՝ բարգաւաճ Խորհրդային Հայաստանը, որ բոլոր հայրենասէր հայերուն համար՝ Սուրբ Հող մը, Յոյսի աղբիւր մըն էր:

Բայց մեր ծանօթ Փանջունի «Ազգայնական» ղեկավարները, Արեւմտեան պետութիւններէն մոլորուելով,

1920-թ.էն մինչեւ 1991-թ.ը, պայքարեցան Խորհրդային Հայաստանի դէմ և, 1991-թ.էն ետք՝ կրցան զայն քանդել...:

Բայց այսօր, երբ Հայաստան որպէս թէ «Ազատ և Անկախ» է, կրկին՝ այդ ծանօթ, կարծեցեալ հայրենասէրները իրենց աւելի շատ շրթնային ու միամիտ արտայայտութիւններով, «իբր թէ» կ'օգնեն Հայաստանին:

Նոյնիսկ՝ 1988-թ.ի Հայաստանի երկրաշարժի օրերուն, այս Փանջունիներուն Սփիւռքի մէջ երկրաշարժի զոհերուն համար հաւաքած մեծ գումարներուն մէկ մասը, յատկացուցին տարբեր նպատակներու:

* * *

«Միայն Մայր հայրենիքին հողն է իրականը և յաւիտենականը»...

... Հայաստան և Սփիւռք, փոխադարձաբար իրարու զօրավիգ ըլլալով լո՛կ, պիտի կրնանք լուծել մեր բոլոր խնդիրները:

Մեր ապրած երկիրներուն օրէնքներուն [կարելիութեան սահմաններուն մէջ] հնազանդ մնալով հանդերձ՝ ոչ մէկը արգելք կրնայ ըլլալ որ մենք, մեր պարտականութիւնը չկատարենք մեր Մայր Հայրենիքին հանդէպ»...:

... «Այսօրուան Հայաստանը՝ մեր վերջին յոյսն է... եթէ հիմա չօգնենք մեր Մայր Հայրենիքին՝ յետոյ շատ ուշ պիտի ըլլայ»... գրած էինք դեռ անցեալին:

* * *

«ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ»

Այս մէկ կարճ նախադասութիւնը, բոլոր հայրենասէր հայերուն համար, Սուրբ տեսլական ու խորհրդանիշ է:

Եւ այս սուրբ խորհրդանիշ-պատգամը կու գար Սուրբ վայրէ մը՝ Սուրբ Էջմիածինէն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի բարձր տնօրինութեամբ որոշուած է, որ իր Սուրբ Հաւատքին հաւատարիմ մնալուն համար թրքանալու առաջարկը մերժած նահատակ-բանաստեղծ Ռուբէն Սեւակի անուան Նիս-ի մէջ գտնուող Յիշատակի Տունը «Հայաստան Պիտի Վերադառնար»...

... Այս կերպով՝ երկար տարիներէ ի վեր մեր փայփայած ծրագիրը պիտի իրականանար:

Այս ձեւով հերոս-նահատակ Ռուբէն Սեւակ, իր արժանի տեղը, իր երազած հայրենի հողը պիտի վերադառնար:

* * *

Այստեղ կը հրատարակենք 8 Մայիս 2009-թ.ին, Սուրբ Էջմիածնի «Շողակաթ» հեռուստատեսիլի կեդրոնին մէջ, «Շողակաթ» կայանի Տնօրէն Հայկ Համբարձումեանի հետ կատարուած մեր հարցազրոյցը:

Հաղորդավարը.– Բարեւ Ձեզ.

Այսօր «Շողակաթ» հեռուստաընկերութեան տաղաւարում հիւրընկալել ենք վերջին օրերին Մայր Աթոռ, Սրբ. Էջմիածին գտնուող Ազգային գործիչ, իր բազմաթիւ բարեգործութիւններով յայտնի Պրն. Յովհաննէս Չիլինկիրեանին: Այստեղ նշենք նաեւ, որ Պրն. Յովհաննէս Չիլին-

կիրեանը մեր մեծ բանաստեղծ, 1915 թուականին նահատակուած Ռուբէն Սեւակի եղբօրորդին է:

«Ռուբէն Սեւակ — Արեւմտահայ բանաստեղծ, արձակագիր, բժիշկ, հայոց Մեծ Եղեռնի զոհ ու գործիչ, որ ցեղասպանութիւնից շատ առաջ, դեռեւս Ատանայում, 1909-թ.ին երիտթուրքերին կազմակերպած ջարդերից յետոյ, տեսաւ ու հասկացաւ թուրքական պետութեան իրական դէմքը: Ռ. Սեւակի առաջին բանաստեղծութիւնը, արարման խօսքերը գրուել են 1905 թուականին: 1910 թուականին հրատարակուել է նրա «Կարմիր Գիրք»ը, բանաստեղծութիւնների այս ժողովածուն: Սեւակ բանաստեղծը, նպատակ է ունեցել ի մի հաւաքել տարբեր շրջաններում գրած իր բանաստեղծութիւնները և հրատարակել «Սիրոյ Գիրք»ը, «Քառս»ը և «Վերջին Հայեր»ը խորագրերով ժողովածուներ: Սակայն ողբերգական մահն անկատար է թողել նրա այդ և շատ ուրիշ մտայղացումներ:

Սեւակի գործերը ցրուած են մնացել պարբերականների շատ էջերում: Ռ. Սեւակի գրական ժառանգութեան հաւաքման, պահպանութեան ու հրատարակութեան, բանաստեղծի կենսագրութեան լուսաբանման գործում անգնահատելի է եղբօրորդու՝ Յովհաննէս Զիլինկիրեանի դերը: Յովհաննէս Զիլինկիրեանը բանաստեղծին նուիրուած բազմաթիւ յայտնի գրքերի հեղինակ է: Եւ նաեւ՝ նրա տրամադրած շատ նիւթերի աջակցութեամբ են լոյս տեսել Ռուբէն Սեւակի հատորները:

Յովհ. Զիլինկիրեան.— *Կ'ուզեմ ջերմ շնորհակալութիւն յայտնել Վեհափառ Հայրապետին, յետոյ՝ ձեզի և ձեր ընկերներուն: Յայտնեմ նաեւ, որ Մայիսի սկիզբէն ի վեր Երեւան կը գտնուիմ ինծի համար սուրբ ծրագիրով մը, և*

ուրախութիւնը ունիմ ձեզի ըսելու, թէ այս ծրագիրը Վեհափառ Հայրապետին որոշումով պիտի մօտերս իրագործուի: Իմ 50 տարիէ ի վեր երազած ծրագիրս:

Հ.— Գիտենք, թէ ձեր ամբողջ գիտակցական կեանքը նուիրել էք Ռուբէն Սեւակի գրական ծառայութեան ուսումնասիրութեանը:

Պ.— Շատ ճիշդ:

Հ.— Ինչի՞ց սկսուեց ամէն ինչ:

Պ.— Ռուբէն Սեւակի եղբօր զաւակն եմ: Անկարելի էր, որ չխօսէինք, մեր տան մէջ, Ռ. Սեւակի մասին: Սա եւս ըսեմ, որ օրին, թրքական շատ դաժան լուծին ենթարկուած ընտանիքներուն մէջ, կար վախ... նոյինսկ իրենց զաւակներուն իրականութիւնը, Եղեռնը պատմելու վախը կար... միշտ կը խուսափէին... թերեւս ուրիշ լուրջ պատճառ մըն ալ կար՝ չէին ուզեր այդ օրերը ապրիլ, որովհետեւ հոգեկան տառապանք կու տար այդ խօսակցութիւնը: Բայց, այնուամենայնիւ, շատ խօսողներ կային: Բնական է, անկարելի է որ մեր տան մէջ, գոնէ քիչ չափերով չխօսուէր այդ բոլորի մասին: Այո: Խօսուեցաւ... ամէն բան շուտ յստակացաւ: Եւ երբ, իբր երիտասարդ ես տեղեկացայ Ռ. Սեւակի՝ հօրեղբօրս ողբալի ճակատագրին մասին, անոր համար ամէն ջանք ու ճիգ թափեցի որ իր վաստակը, իր նահատակութիւնը արժեւորուի և հետեւանք ըլլալով, նպատակ ըլլալով՝ մտածեցի անոր բոլոր արժէքները Հայաստան փոխադրել: Հայաստանի մէջ «Ռ. Սեւակի Յիշատակի Տուն» մը ստեղծել: Այս մտածումով դիմումներ կատարեցի Խորհրդային շրջանին, բայց՝ չիրականացաւ: Մինչ այդ՝ իշխանափոխութեան ժամանակաշրջանին, շատ փոթորկալից շրջաններ անցան, և խոս-

տումներ ալ եղան. մենք չհամաձայնեցանք... և վերջապէս հիմա, չնորհիւ Վեհափառ Հայրապետին, այս ծրագիրը, իմ երազը՝ Հայաստանի մէջ «Ռ. Սեւակի Յիշատակի Տուն» մը ստեղծելու իմ ծրագիրը, իրագործուելու ճամբուն մէջ է:

Հ.– Նաեւ շատ լաւ գիտենք, թէ այդպիսի մի «Յիշատակի Տուն» ստեղծուել է Նիսում:

Պ.– Երբ որ մերժուեցաւ... մենք, ստիպողաբար, իմ կարելիութեանս չափերով, Նիսի մէջ յարկաբաժին մը յատկացուցի Ռուբէն Սեւակի յիշատակին: Անունը՝ «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն»ը: 1986-թ.ին բացումը կատարուեցաւ անոր, Նիսի մէջ:

Հ.– Մեր՝ Հայաստանեան արդի իրականութեան, Հայաստանեան գրականութեան սիրահարներին, շրջանակներին գրեթէ անծանօթ էր Ռ. Սեւակի կեանքի շատ էջեր: Կը խնդրենք՝ ներկայացնել:

Պ.– Այո: Նախ կ'ուզեմ ըսել, թէ Սովետական շրջանին նոյնիսկ, Ռուբէն Սեւակի մասին, 1955-էն յետոյ, գիրքեր հրատարակուեցան: 1985-ին Ալեքսանդր Թօփչեանի կողմէ «Երկեր» անունով բացառիկ հատոր մը հրատարակուեցաւ: Ճիշդ այդ տարիներուն, այդ ամիսներուն, Անթիլիասի մէջ եւս, իրենց ջանքերով, նոյն անունով՝ «Ռուբէն Սեւակ-Երկեր» անունով հրատարակութիւն մը լոյս տեսաւ 1986ին, որ նոյն մակարդակի է գրեթէ, Ալեքսանդր Թօփչեանի հրատարակած գիրքի հետ: Եւ այդ գիրքը կրկին, երբ Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոս Մայր Աթոռի Կաթողիկոս եղաւ Գարեգին Ա. ըլլալով, այդ գիրքը վերահրատարակուեցաւ Ս. Էջմիածնի մէջ: 1997ին «Ռուբէն Սեւակ երկեր» անունով:

Մինչ այդ՝ շատ մը գիրքեր հրատարակուեցան Սփիւռքի և Հայաստանի մէջ, Ալեքսանդր Թօփչեանի և այլոց կողմէ նաեւ... չորս-հինգ հատ մեծարժէք վէպեր կան Ռուբէն Սեւակի կեանքին վերաբերեալ։

Հ.— Այսինքն՝ հայ իրականութեան միշտ հետաքրքրած է Ռուբէն Սեւակի կնոջ՝ ազգութեամբ Գերմանուհի Եաննի Աբէլի պահուածքը և հետագայ ճակատագիրը։ Եաննին ու Սեւակը ծանօթացել են Լոզանում 1907 թուականին, ուր իրենց սիրավէպը, յաղթահարելով բոլոր դժուարութիւնները, աւարտւում է ամուսնութեամբ 1910-թ.ին։

Սեւակն ու Եաննին երկու զաւակ են ունենում։

Ռուբէն Սեւակի ձերբակալութիւնից յետոյ, Եաննին և նրա մայրը ամէն ինչ անում են բանաստեղծին փրկելու համար։ Սակայն՝ ապարդիւն։

Բանաստեղծի եղերական սպանութիւնից յետոյ, Եաննի Սեւակը հրաժարուեց գերմանական հպատակութիւնից։ Դադարեց խօսել գերմաներէն։ Նա իր երեխաներին տուեց հայկական կրթութիւն։ Իսկ աւելի ուշ՝ 1925–30-ական թ.ներուն, դժբախտ կինը խաղում է Փարիզի բեմերում։ Հրատարակել է բանաստեղծութիւնների մի քանի ժողովածուներ, ֆրանսերէն լեզուով։

Ռուբէն Սեւակին ձերբակալուած գիշերը, ուշ ժամերուն, իր գերմանացի կինը՝ Յաննի Սեւակը Զուիցերիա բնակող իր մորը հեռագիր մը կ'ուղարկէ, որուն մէջ սապէս գրուած է. «Մայր, շուտ եգուր»։ Եւ մայրը Պոլիս կու գայ։ Մայր ու աղջիկ կը դիմեն այդ չրջանին, այն ատենուան Պոլսոյ դեսպան — նկատելով, որ Պոլիսը այն ատեն մայրաքաղաք էր — Գերման. կայսրութեան դեսպան Վանկէնհայմին — հրէչին մէկը,— ճիշդ եղեռնի օրերուն, և

Վանկէնհայմը երբ կը տեսնէ իր դէմ գերմանացի այրի կին մը, կը պոռայ անոր երեսին.

— Դուն, Գերմանուհի մը... լքեցիր ազգութիւնդ և եկած ես ինձմէ խնդրելու, որ ազատե՞մ ամուսինդ: Անոնք մեռնելու գացին և ետ պիտի չգան:

Գերմանուհի աղջիկը, Ռուբէն Սեւակի կինը, կը պատասխանէ բարկաճայթ.

— Երկու զաւակ ունիմ. և այդ երկու զաւակներս իբր հայ պիտի մեծցնեմ... և անոնք վրէժը պիտի լուծեն իրենց Հօր»:

Շատ հետաքրքրական է այս աղջկան կեցուածքը: Որովհետեւ, անկէ ետք, իր ամբողջ կեանքի ընթացքին գերմաներէն չէ խօսած, ինքը՝ Գերմանուհին: Երկրորդ՝ իր զաւակներուն մէկ բառ իսկ գերմաներէն չէ սորվեցուցած, Վանկէնհայմին երեսին կը նետէ գերմանական անձնագիրը և Զուիցերիոյ մէջ կը ստանայ այն ատենուան Հայկական Հանրապետութեան անձնագիրը: Իր զաւակներուն անուններն ալ նշուած են իրենց մօր անձնագրին մէջ: Եւ «Օրիկինալ»ն, բնօրինակն ալ մօտս է այդ անձնագրին, Ֆրանսա: Եւ այդ իսկ պատճառաւ ալ, Ռուբէն Սեւակի զաւակները Հայերէն չէին գիտեր: Եւ ուրիշ պարագայ մը կայ. ասիկա շատերը չեն գիտեր, որովհետեւ շատ կարեւոր նամակ մըն է, Ռուբէն Սեւակի կնոջ կողմէ 1915-թ.ի վերջաւորութեան ուղղուած Պոլսոյ Գերմանական դեսպանութեան, որուն մէջ ան կը գրէ.— Խնդրեմ, փրկեցէք մնացող Հայերը... եթէ չազատէք՝ ամբողջ աշխարհի անէծքը ձեր վրայ պիտի տեղայ»:

Հ.— Սեւակի ազգային-Հայրենասիրական բանաստեղծութիւնները և պոէմները գրուել են 1909-թ.ին, Կիլիկեան

ջարդերի անմիջական տպաւորութեան տակ: «Զանգակներ, Զանգակներ», «Ով Իմ Հայրենիք», «Հայաստան», «Կիլիկիան Երգեր» և... դեռ՝ մի շարք այլ բանաստեղծութիւններ, որոնք նախապատրաստեցին նրա եղերական վախճանը:

Պ.— Նամակ մը կայ... գրուած այն ատենուան գերմանական դեսպանատան պատասխանատուներէն մէկուն կողմէ, որուն անունը Ֆրայհէր Ֆոն Նոյրաթ էր: Ո՞վ էր Ֆրայհէր Ֆոն Նոյրաթ: Ան Հիթլէրի [Ֆիւհրեր] շրջանի Չեխոսլովաքիոյ Պոհէմիայի մարզի Կաուլայթըր — Կուսակալ-նախարար եղող անձնաւորութիւնն էր, որ Նիւրէնպէրկի մէջ 20 տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ:

Այս անձը գաղտնի նամակ մը կը գրէ Պոլիսէն՝ Պերլին, Ռայխ Քանցլերին — վարչապետութեան: Այդ նամակին մէջ, հետաքրքրականը սա մէկն է. Ան կ'ըսէ, թէ՝ ինք դիմած է Պոլսոյ ոստիկանապետին [որ իսկական հրէշ մըն էր, Պետրի անունով, որուն հայերը սպաննել փորձեցին բայց չյաջողեցան... կարծեմ]: Ան սապէս կ'ըսէ, իր նամակին մէջ, Ռուբէն Սեւակի համար.

— Տօքթ. Չիլինկիրեան կը նկատուի այն մտաւորականներէն, որոնց ժողովուրդին վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի»:

1917-թ.ին, թուրքերը, նախ արաբատառ թրքերէնով, յետոյ ալ, տարի մը ետք, ֆրանսերէն լեզուով գիրք մը կը հրատարակեն: Անոր անունը՝ «Հայկական Գոմիթաճիներուն Գործունէութիւնը»: Այս գիրքը լոյս կ'ընծայեն ինքզինքին արդարացնելու համար, Եղեռնին կատարած ողբերգութիւնը թեթեւցնելու նպատակաւ, և համոզելու,

լոլոզելու համար աշխարհը: Նպատակը, միտք բանին համոզել էր՝ որ հայե՛րը ջարդած են թուրքերը: Հոն կան մեր հերոսներուն, ֆետայիներուն նկարները, իրենց զէնքերով ամբողջ: Ուրեմն՝ փլատակ մզկիթներուն, ճամիներուն նկարները, բռնուած զէնքերը ամբողջ, 600 էջ գրեթէ: Եւ մեր ամբողջ պատմութիւնը, հայկական կուսակցութիւններուն գործունէութիւնը: Եւ ամէնէն կարեւորը ինծի համար՝ այս թրքական գիրքի մէջ կա՛յ բանաստեղծութիւն մը, միակ բանաստեղծութիւն մը՝ ոչ մէկ ուրիշ բանաստեղծութիւն և բանաստեղծի անուն կայ այնտեղ, այլ՝ հոն տեղ գտած է Ռուբէն Սեւակի «Օրօր» բանաստեղծութիւնը:

[Հաղորդավարը այստեղ կ՚արտասանէ «Օրօր» քերթուածը]:

Թուրք ծանօթ պատմաբան մը, 10 տարիներէ ի վեր Սփիւռք հաստատուած թուրք պատմաբան և բանաստեղծ մը կայ, անունը՝ Թանէր Աքչամ: Անիկա անցեալ տարի՝ 2008-թ.ին նոր գիրք մը հրատարակեց: Անունը՝ «Հայկական Հարցը Լուծուած է»: Այդ գիրքին մէջ 20 էջնոց հատուած մը կայ.— Տօքթ. Զիլինկիրեան ճինայէթի»-ցցուն վերնագրով: [Տօքթ. Զիլինկիրեանի ոճիրը], ուր յստակ կը նշուի, թէ Թալաաթ անձնապէս կը հետաքրքրուի այդ մարդասպաններով: Ինքն է այդ մարդասպանութիւնը կազմակերպողը: Եւ ան ազատ կ՚արձակէ ոճրագործները, և ոչ թէ մահուան կը դատապարտէ զանոնք:

Հայերը չէին հասկցած Ռուբէն Սեւակի արժէքը: Յուսամ, որ ասկէ ետք, շատ աւելի պիտի արժեւորուի Ռ. Սեւակը: Ուրիշ պարագայ մը՝ կրկին — 24 Ապրիլին աքսորուածներուն, նահատակուածներուն մէջ չէ Ռուբէն

Սեւակ: Ինչպէս որ Գրիգոր Զօհրապն և Վարդգէսը անոնց մէջ չէին: Որովհետեւ երեսփոխաններ էին, վտանգաւոր էր: Ծածկուեցան անոնք: Նոյնպէս՝ Ռ. Սեւակը, որուն աքսորը ուշացուցին երկու ամիս: Որովհետեւ անոր կինը Գերմանուհի էր: Յաւելուած՝ Սեւակ հարիւրապետ սպայ-բժիշկ էր: Եւ Թուրք շատ մօտիկ բարեկամներ ունէր: Նկատելով, որ Ռ. Սեւակի Լոզան բժիշկ եղած չրջանին, շատ մը Թուրք անձնաւորութիւններ, փաշաներ ու նա-խարարներ կու գան եղեր օգտուելու Ռ. Սեւակին աջակ-ցութենէն, տեղի հիւանդանոցներուն մէջ անգամ: Եւ այդ փաշաները կ'ըսեն Սեւակին, որ գայ և պաշտօնավարէ Թրքական հիւանդանոցներուն մէջ: Եւ օր մը Սեւակ, Պո-լիս, կեդրոնական մեծ հրապարակէն անցած միջոցին, հայ մտաւորական Զիթունիին հետ դէմ-դիմացը կ'ելլէ: Սեւակ անոր սապէս կ'արտայայտուի.— Մեզի մեծ ամօթ չէ՞, որ դեռ հոս ենք»: Նայեցէք, ուշադրութիւն: Այդ աքսորեալ-ներուն հետ... չաքսորուելուն ամօթը ունի Ռ. Սեւակ:

Հ.— Հետաքրքական է, յատկապէս, Սեւակ—Կոմիտաս մտերմութիւնը, որ սկսում է դեռեւս ուսանողութեան տա-րիներին և չարունակւում մինչեւ բանաստեղծի մահը: Սե-ւակի և Կոմիտասի այս բարեկամութիւնը սերտանում է յատկապէս բանաստեղծի ձերբակալութիւնից առաջ, երբ Կոմիտաս գտնւում էր Կոստանդնուպոլսում:

Պ.— Այդ միջոցին Կոմիտաս վարդապետ, որ աքսորուած էր, զանազան միջամտութիւններով — կարծեմ՝ սուլթանի ազգականներէն մէկուն չնորհիւ ալ — ազատ կ'արձակուի և կու գայ Պոլիս: Եւ Ռուբէն Սեւակի երկու զաւակները կը մկրտուին Պոլսոյ եկեղեցիին մէջ, որ իրենց բնակավայրին շատ մօտ է — երկու զաւակներէն մէկուն կնքահայրը Կո-

միտաս վարդապետը կ'ըլլայ: Երկու կամ երեք գիշեր յետոյ՝ 22 Յունիսի գիշերը՝ Ռ. Սեւակի բնակարանը կու գան.— «Տօքթ. Պէյ, ձեզի հիւանդի մը պիտի տանինք» — ըսելով զինք կը տանին երկու գաղտնի ոստիկաններ: Անկէ ետք կը սկսի Ռուբէնին ողիսականը, իր ողբերգական կեանքը, հերոսական կեանքը, մահը... ինչպէս կ'ուզէք մակագրեցէք:

Ես, տարիներ առաջ, իմացած էի հօրաքրոջմէս՝ Հայկանուշ Զիլինկիրեանէն, որ ըսած էր ինծի, թէ՝ Ռ. Սեւակ մերժած է թրքանալը և ըսած է. «Իմ անունիս պէս պիտի չսեւցնեմ իմ հոգիս»:

Ռուբէն Սեւակ կ'ապրի հոն չուրջ երկու ամիս: Յունիսէն մինչեւ Օգոստոսի 25-թ.ը: Իբր Եւրոպա ուսանած բժիշկ [սա իմ խօսքը չէ՝ այլ Արամ Անտոնեանին] «Աստուածացուցած» են զինք իր կատարած բուժումներուն համար: Այդ գնահատութիւնը տրուած է իրեն ծանօթ թուրքերու կողմէ: Ռուբէն Սեւակ յաճախ ըսած է իր չուրջիններուն.— Մենք, այս մարդոց լաւութիւն պիտի ընենք, որ հասկնան, թէ ինչ է մարդկայնութիւնը»: Եւ այս տեսակ արտայայտութիւններ...:

Եւ այդ նոյն միջոցին [ամենէն կենսականը հոս է], Ռ. Սեւակ կը դարմանէ թուրք ծանօթ անձնաւորութեան մը աղջիկը: Եւ հոս է, որ կը պատահի անսպասելին: Աղջիկը կը սիրահարի Ռուբէն Սեւակին: Եւ այն մարդը, որ դահիճ մըն էր, ստիպողաբար կը դիմէ Ռ. Սեւակին ըսելով.

— Տղաս, դուք, բոլորդ ալ, մեռնելու դատապարտուած էք: Ոեւէ մէկը չի կրնար ազատել ձեզ: Բայց եթէ ես ուզեմ՝ կրնամ քեզ փրկել: Պայմանաւ, որ իսլամանաս և ամուսնանաս աղջկանս հետ:

Սեւակ կը պատասխանէ.— Ես ամուսնացած եմ: «Վնաս չունի: Իսլամական մեր կրօնքով մէկը կրնայ նոյնիսկ չորս կին առնել» — կը պնդէ Թուրքը:

Սեւակ կը վերադառնայ ընկերներուն մօտ: Կը պատմէ եղելութիւնը իր մտերիմներուն, Թէ... ասանկ պարագայ մը կայ:

Բոլորն ալ, առանց բացառութեան կ'ըսեն.— Առժամաբար ընդունէ, փրկէ կեանքդ»:

Ռուբէն Սեւակին հակադարձութիւնը կ'ըլլայ.— Թրքանալը նուաստանալ է: Եթէ մենք դաւաճանենք մեր դատին, հայ ժողովուրդը պիտի ընդմիշտ կորսնցնէ հայկականութեան ոգին, կամքը: Մենք պիտի մեռնինք... որ հայ ժողովուրդը ապրի»:

Ռուբէն Սեւակի սա վերջին գրութիւնը՝ 25 օգոստոս 1915 թվակիր հեռագիր մըն է, կրկին գրուած թրքերէն լեզուով: Ուր ըսուած է.— Վաղը մենք Այաշ պիտի մեկնինք, Դանիէլ Վարուժանին հետ: Ուստի, նամակնիդ հոն ղրկեցէք:

Հաղորդավարը.— 1915-թ.ի Օգոստոսի 26-ի վաղ լուսադէմին, հինգ հոգուց բաղկացած խումբը ուղարկուում է Այաշ, մօտակայ փոքրիկ քաղաքը: Եւ Այաշի ճանապարհին, Քալէջիկ գիւղի մօտ Թիւնէյ կոչուող վայրում, ձերբակալուածները գաղանաբար սպանուում են քրդերի կողմից:

[Այստեղ ալ կ'արտասանուի հէք Ռուբէն Սեւակի չատ ծանօթ «Երթալ, Երթալ...»] քերթուածը:

ԵՐԹԱԼ...

Երթալ, երթալ, երթալ անձայն, անհանդէս.
Երթալ առուի՛ն պէս՝ մարգերու տակ անտես.
Կապոյտին մէջ՝ հեզ, հողմնավար ամպին պէս...:

Երթալ՝ առա՛նց գիտնալու թէ դէպի ո՞ւր,
Երթալ՝ հեռո՛ւ ոստաններէն այս տխուր.
Երթալ խաւար գիշերին մէջ թաքթաքուր...:

Երթալ, երթալ, երթալ առանց ճրագի.
Երթալ առա՛նց սուգի, լացի, փափաքի.
Երթալ՝ առա՛նց սովի, առա՛նց պապակի...:

Երթալ՝ մարդոց կոյտին մէջէն լռելեայն.
Օտար մընալ իրենց Ցաւին, Գիտութեան.
Երթալ տգէ՛տ, խո՛ւլ, յա՛մբը, կո՛յր յաւիտեան...:

Զը գիտնա՛լ որ Իտէալը չիկա՛յ...:
Ուխտագընա՛ց երթալ ափերն հեռակայ,
Դէպի ուղին Երջանկութեան մչտակայ...:

Աննիւթանա՛լ, անրջանա՛լ, վըսե՛մ, վէս.
Երթալ անցա՛յգ, անա՛յգ, երթա՛լ վերջապէս.
Աչքերը գոց՝ ցայգաչրջիկ խնդին պէս...:

Երթա՛լ, երթա՛լ, չը ճանչնալ Մա՛րդ ու Աստուա՛ծ,
Զո՛յգ երթալ, ձեռքըդ քո՛յր ձեռքի մէջ դըրած
Անրջանքին ու Սիրոյն պէս — աքսորուա՛ծ...:

Լոզան, 1912

Հ.— Աստուածները կարեւորագոյն փաստեր են և առընչուում են ինչպէս մեր ժողովրդի պատմութեան, այնպէս էլ՝ Թուրքիայի պատմութեան: Բայց ինչպէս էք դուք կարողացել դժուարութիւնները յաղթահարել և Պոլսոյ միջավայրում էդ փաստերը հաւաքել ու հրատարակել:

Պ.— Հիմա... պիտի թոյլատրէք որ... ես... այդ մասին ըսելու ջանամ հետեւեալը, քանի մը ամիս ետք, չենք գիտեր ինչ ձեւով, Ռուբէնի մեծ եղբայրը կը յաջողի Պոլիս երթալ և տէր դառնալ այդ տան, Ռ. Սեւակի բնակարանին: Ինչ որ կարելի է՝ կը փրկէ և իր տունը կը տանի: Եւ այդ նոյն տան մէջէն ալ յետոյ, տարիներ յետոյ, իրերը ուրիշ տեղ փոխադրուած էին... և այդ տան մէջ սնտուկ մը կար: Սնտուկին մէջ ինչ որ կար [ասիկա կը պատահի 1946-թ.ին] հաւաքեցի մինչեւ անգամ փոքրագոյն թուղթի կտորը, Սեւակի նամակները, նկարները... ինչ որ կար, մնացած էր... և ատոնք վերցուցի և տունս բերի: Շատ ու շատ տարիներ յետոյ ալ 1970-թ.ներուն, ինքնաշարժով փոխադրեցի զանոնք բնակարանս և ապա՝ վերջնական հանգրուան ըլլալով՝ Ֆրանսայի Նիս քաղաքը, ուր հիմնուեցաւ «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն»ը, ուր կը գտնուին այժմ, ինչ որ մնացած է Ռուբէն Սեւակէն»:

Մինչ այդ, շատ բնականաբար՝ կարելիութեանս սահմաններուն մէջ, ջանացի փրկել Ռուբէն Սեւակի ժառանգութենէն ինչ որ կրնայի:

Հ.— Հարց տալով դա նկատի ունէի... որ դուք շատ մեծ դժուարութիւններ յաղթահարելով, տարբեր ճանապարհներով, էդ ամբողջը ձեռք էք բերել, և էսօր հայ ժողովուրդը Հայաստանում շատ ուրախ կը լինի, եթէ այդ ամէնը փոխադրուեն Հայաստան և այստեղ, Մայր Հողի վրայ, հնարաւոր լինի էդ բոլորը ցուցադրել և ուսումնասիրել:

Պ.— Ուրեմն, չակերտի մէջ սա եւս ըսեմ, որ ձեզի այս ըսածներուս 99 առ հարիւրը արդէն հրատարակուած են: Իսկ շատ բաներ, որ տակաւին չեն հրատարակուած,

անոնք ալ, իմ ողջութեանս, հրատարակելու առիթը կ'ունենամ:

Հ.— Շնորհակալութիւն՝ հետաքրքիր այս բոլոր փաստերի ներկայացման համար: Պրն. Զիլինկիրեան՝ Մայր Աթոռ Սրբ. Էջմիածնի հետ համագործակցութիւնը չարունակուելո՞ւ է: Ինչ որ միասնական ծրագիրներ կարո՞ղ են լինել:

Յովհ. Զիլինկիրեան.— *Ըսի, որ ունիմ այն մեծ ուրախութիւնը, որ այս իմ երազը պիտի իրականանայ: Միջոց մը յետոյ, մէկ ամիս, մէկ տարի՝ չեմ գիտեր:*

Հաղորդավար.— Ձերմ շնորհակալութիւններ: Այսօր, մեր՝ «Շողակաթ» հեռուստաընկերութեան տաղաւարում, զրուցում էինք Ազգային գործիչ, հրապարակագիր և հատորներու հեղինակ՝ Յովհաննէս Զիլինկիրեանի հետ:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՒԱՆ ԴՊՐՈՑԻՆ ՄԷՋ

Յ. Չիլինկիրեան.– 15 տարիներ յետոյ, առաջին անգամ ըլլալով, այցելեցինք Երեւանի «Ռուբէն Սեւակ» անունը կրող միջնակարգ դպրոցը:

1994-թ.ին այս կրթարանին Ռուբէն Սեւակի անունով մկրտուելէն ի վեր, տնօրէնուհի Ճուլիա Ղազարեանին ուղարկած Video-ներուն շնորհիւ, կը հետեւէինք դպրոցի մէջ կատարուած հանդիսութիւններուն:

... Եւ վերջապէս՝ 4 Մայիս 2009-ին, մեր Հարազատին՝ Յակոբ Աւագեանի ընկերակցութեամբ, այցելեցինք Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցը:

... Մեզ դիմաւորեցին՝ Տնօրէնուհին և տնօրէնութեան ու վարչութեան կազմը...:

... Եւ առաջին դասարանի փոքրիկ աշակերտներն անգամ մեզի բարի գալուստ մաղթեցին... Շատ յուզիչ էր այդ վայրկեանը:

Ռուբէն Սեւակի կիսանդրիին առջեւ խոնարհելէ յետոյ, դպրոցի թանգարանի սրահին մէջ, ունեցանք զրոյց տնօրէնութեան և հաստատութեան վարչական կազմին հետ: Եւ շնորհաւորեցինք զիրենք:

Ապա՝ դասարաններ այցելելէ յետոյ, հանդիսասրահին մէջ, դպրոցի «Զանգակներ» երգչախումբը ելոյթ ունեցաւ՝ հայրենասիրական երգերով...

... Փոքր աշակերտներ և յետոյ, աւելի բարձր դասա-

բաններու աշակերտուհիներ, շատ տպաւորիչ առոգանութեամբ՝ Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններէն արտասանեցին։

Այս բոլոր հայաշունչ ելոյթներուն հպարտութեամբ հետեւեցանք։ Որովհետեւ տեսանք, թէ Ռուբէն Սեւակի ոգին կ'ապրէր ու կը գոյատեւէր նոր սերունդներուն մէջ։

* * *

Քանի մը օր յետոյ, կրկին այցելեցինք Ռուբէն Սեւակի անուան Միջնակարգ դպրոցը...

Այս անգամուան այցելութեան նպատակը՝ ծանօթանալ էր ուսուցչական կազմին հետ...

... Դպրոցի թանգարանի սրահը հաւաքուած էինք բոլորս՝

Ռուբէն Սեւակի յիշատակներով լեցուն թանգարանին մէջ...

50-է աւելի ուսուցիչներ... կրնաք երեւակայել՝ 50 հայ ուսուցիչներ...

Այս «Հարստութիւնը» միայն Հայաստանի մէջ կրնանք տեսնել։

Եւ այս ուսուցիչները Ռուբէն Սեւակի անուան կրթարանի աշակերտներուն հայերէն լեզու և գիտութիւն, ու մանաւանդ՝ Ռուբէն Սեւակեան «Ոգի» կը ջամբէին՝ այսօրուան Հայաստանի դժուարին պայմաններուն մէջ...

Շատ տպաւորիչ էր այս հանդիպումը, մեզի համար։

Այդ վայրկեանին մտածեցինք և երազեցինք՝ ամենակարող անձ մը ըլլալ, և հայկական ոգի-ով սերունդներ հասցնող ուսուցիչներուն ամէն ինչ տալ, ինչ բանի կարիքը որ ունէին անոնք։

Աւա՜ղ... շատ սահմանափակ էին մեր կարելիութիւնները...

... Եւ խօսեցանք ուսուցիչներուն հետ: Եւ իրենց՝ մեր գաղափարները, մեր մտահոգութիւնները բացատրելու ջանացինք:

Եւ մասնաւորապէս ըսինք թէ՝ «Հայաստան այսօր ենթարկուած է շատ մեծ վտանգի մը... Այդ վտանգը՝ կեղծ Եւրոպականացման վտանգն է, որ Հայութեան «ոգի»ն գրեթէ կը բնաջնջէ, Ռ. Սեւակի երբեմնի ըրած ախտաճանաչում-բնորոշումով՝ «Կ'այլասերէ»:

... Այստեղ տալու պիտի ջանանք՝ Մայիս 2009-ին և այնուհետև Ռուբէն Սեւակի անուան դպրոց ու այլուր տրուած այցերուն, եղելութեանց ու կատարուած զրոյցներուն նկարագրութիւնները:

5 Մայիս 2009-թ.ին, Երեւանի «Թէքէեան Մշակութային Միութիւն»ի սրահին մէջ, Ռուբէն Սեւակի յիշատակին նուիրուած բառացիկ հանդիսութիւն մը տեղի ունեցաւ:

Այս հանդիսութիւնը կազմակերպողը՝ Հայաստանի Թէքէեան Մշակութային Միութեան նախագահ, պատմական գիտութիւններու դոկտոր Ռուբէն Միրզախանեանն էր, որուն կ'ուզենք սրտանց շնորհակալութիւն յայտնել Ռուբէն Սեւակեան հայրենասիրական ոգին հայութեան մէջ տարածելու ծառայող այս ձեռնարկը կազմակերպելուն համար:

Պատմութեան համար՝ նշենք հոս, հանդիսութեան ներկայ եղած մեզի ծանօթ անձնաւորութիւններէն զոնէ մէկ քանի անուններ.— Հայաստանի առաջնակարգ ղեկավարներէն եղած Վլատիմիր Մովսիսեան, Ալեք Մանուկեան հիմնարկի նախագահ՝ Գրականագէտ և Ակա-

դեմիայի անդամ՝ Երուանդ Ազատեան, Հայաստանի ճարտարարուեստականներէն՝ Գագիկ Աբրահամեան, «Ազգ» թերթի խմբագրապետ Յակոբ Աւետիքեան, Հ.Բ.Ը.Մ.ի Ֆրանսայի պատասխանատուներէն՝ Լեւոն Քեպապճեան, Գրականագէտ Փրոֆ. Վլատիմիր Կիրակոսեան, Պատմագէտ Փրոֆ. Վլատիմիր Պետրոսեան:

Ներկայ էին մանաւանդ՝ դպրոցի մեծ թիւով ուսուցիչներ և բարձր կարգերու աշակերտներ:

Ու նաեւ՝ շատ ու շատ երիտասարդներ... մեզի անծանօթ:

ՌՈՒԲԷՆ ՄԻՐԶԱԽԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Ռուբէն Սեւակի յիշատակի հանդիսութեան բացումը կատարեց Հ.Թ.Մ.Մ. Նախագահ Դոկտ. Ռուբէն Միրզախանեան:

Մեծ գոհունակութեամբ հետեւեցանք իր բանախօսութեան՝ որ ներկայացուց Ռուբէն Սեւակը՝ իբր հայրենասէր բանաստեղծ և նահատակ:

Գերչ. Սրբազան հայր, Յարգելի ներկաներ,

Գիշերը Տէր Զօրում, մինչ այսօր, խորհրդաւոր լոյս կայ: Դա, մեր նահատակներու ոսկորներն են: Եւ կարծես, այդ սարսափելի լոյսի մէջ, մի խորհուրդ կայ, խորհուրդ՝ ուղղուած բոլորին՝ «Մի մոռացէք»: Միշտ յիշէք, հաւատարիմ եղէք Հայ Դատին: Զմոռանաք մեզ: Երբ Թրքական իշխանութիւնը ուզեց իրականացնել 20-րդ դարի մեծագոյն յանցագործութիւնը, եղեռնը, նա իր համար կատարեց տրամաբանական որոշում: Նախ և առաջ գլխատել Ազգի մեծերի: Նրանց կարգին էր Ռուբէն Սեւակը՝ մտաւորական- բանաստեղծ, որի իրական արժէքը ցաւօք սրտի՝ առ

այսօր մենք չունենք: Յաճախ մենք փնտռում ենք և աւելի յաճախ չենք գտնում այն անձերին, ում օրինակով պէտք է կրթուեն և դաստիարակուեն հայորդիները: Եւ այդ խնդիրը, իրապէս կարեւորագոյն խնդիրը իր լուծումը չի ստանում, քանի չենք կարողանում ներկայացնել մեր անցեալի և նաեւ ներկայի ազգային մեծութիւնները: Այդպիսի մեծութիւն էր Ռուբէն Սեւակը, որ ժամանակի համար ստացաւ փայլուն կրթութիւն Լօզանի համալսարանի մէջ, որ նշանաւորեց Նէօ-ռէալիզմը Արեւմտահայ գրականութեան մէջ և որին բանաստեղծական իւրաքանչիւր տողը մեծ լիրիկա է: Եւ որի յիշատակը մենք բոլոր միջոցներով հասցնելու ենք մեր երիտասարդութեան:

Թէքէեան Մշակութային Միութիւնը կազմակերպելով այս ձեռնարկը, իր առջեւ նաեւ նպատակ է դրել, որոշակի չափով, միայն որոշակի չափով լրացնելու այն բացը, որ կայ, իրականութեան մէջ, որ անշուշտ զգացւում է մեր իրականութեան մէջ:

Ես հաճոյքով ուզում եմ բեմ հրաւիրել Մայր Աթոռ Սրբ. Էջմիածնի դիւանապետ Գերշ. Արշակ Եպսկ. Խաչատրեանին, օրհնութեան խօսք ասելու համար:

Ուզում եմ նաեւ շնորհակալութիւն յայտնել Պրն. Յովհաննէս Չիլինկիրեանին, մեծ բանաստեղծի, մեծ հայորդու եղբօր որդուն, որ իր կեանքի տասնեակ տարիներ նուիրել է Ռուբէն Սեւակի յիշատակի, նրա ստեղծագործութիւնների և կեանքին մէջ մասնակից դարձնելու համար և որի ջանքերով այսօր գործում է Ռուբէն Սեւակի անունը կրող թանգարանը, և որը այսօր մեր մէջ է: Ուզում եմ յատուկ ողջունել նրան, որ գտնւում է Հայաստան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի անձնական հրաւէրով:

ԱՅՍՏԵՂ ՀԻԱՅՈՒՄՈՎ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԵՆՔ ԳԵՐԱՇ. Տ. ԱՐՇԱԿ ԵՊՍ. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Դիւանապետ Գերշ. Արշակ Եպիսկոպոս Խաչատրեան ներկաներուն փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջոյնի խօսքն ու յաջողութեան մաղթանքները:

... Մեզ տպաւորեց Արշակ Եպս.ի սա նկատողութիւնը.— «Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ, որովհետեւ հաւատարիմ մնալ ուզեց իր սուրբ հաւատքին:

Բայց ներկայիս ի՞նչ կը տեսնենք: Այսօր չկայ թրքական եղեռնը: Բայց հայերը իրենց ազատ կամքով կը լքեն իրենց հաւատքը»:

Յարգելի Պրն. Զիլինկիրեան,

Սիրելի ներկաներ՝

Օրեր առաջ յիշում եմ, քննարկումներ էին կատարւում մեր հասարակութեան մէջ, պարզաբանելու համար այն խնդիրը, թէ հասարակութեան մէջ ովքեր էին ընտրանիին, էլիտային պատկանում:

Այսօրուան միջոցառումը ինծի համար պատասխանն է այդ հարցադրումին: Այսօր Թէքէեան Մշակութային Միութիւնը նախաձեռնել է մի հանդիսութիւն, որին իր յարգարժան մասնակցութիւնն է բերում նաեւ յարգարժան, եղերական մահով ի Տէր հանգեալ Ռուբէն Սեւակի

ազգականը՝ Պրն. Յովհաննէս Չիլինկիրեան: Եւ Ռուբէն Սեւակի կեանքի և գործի մտածման մեր ուշադրութեան բերումը, իմ մտածումների մէջ, պատասխանն է այդ քննարկումին, թէ ով է Ազգին ընդհանուր պատկանը:

Ռուբէն Սեւակը ինքը մասնագիտութեամբ բժիշկ էր, և իւրաքանչիւր հայորդի իրերի բերումով իր պատկանելիութիւնը հռչակելով որեւէ մասնագիտութեամբ, դրանով չէ որ իր վերնախաւին պատկանելիութիւնը հաստատում է, այլ հոգեւոր-բարոյական, մշակութային արժէքների նկատմամբ իր վերաբերմունքովը, որ այդ վերնախաւին պատկանելիութիւնը հաստատում է:

Չափազանց վիպական և չափազանց օրինակելի մի դրուագ՝ ընդամէնը Ռուբէն Սեւակի կեանքից, որ մասնակի ընթերցումների արդիւնքում չէ, որ իւրաքանչիւրի աչքին կարող է զարնել:

Ասում են, որ 15 թուականին եղերական դէպքերի ընթացքին, իրեն խոստացուեց կեանքը խնայել եթէ իսլամութիւնը ընդունի և ամուսնանայ մահմետական կնոջ հետ: Եւ տաղանդաւոր բանաստեղծը-արձակագիրը ինքը հրաժարուել է: Այդպէս կոչուած առանձնաշնորհումից: Նախընտրելով իր հայրենիքի, իր ազգի հոգեւոր-բարոյական մշակութային միջավայրից ու մթնոլորտից չհեռանալ անգամ կեանքը կորսնցընելու գնով:

Եւ սա՝ այսօրուայ ժամանակներում շատ, չափազանց վիպական և խրախուսելի մի օրինակ է: Երբ չկայ նման մի վտանգ ֆիզիքական ոչնչացման և չկայ նման մի վտանգ՝ կեանքի գնով հատուցել սեփական հաւատքի համար: Եւ անգամս, երբեմն-երբեմն կամաւոր կերպով մեր ազգի շատ զաւակներ հեռանում են իրենց ազգային հոգեւոր

միջավայրից և մթնոլորտից: Եւ Ռուբէն Սեւակի կերպարի վերականգնումը և վերարժեւորումը մեծապէս նպաստելու է որպէսզի մէկ անգամ եւս մենք անդրադառնանք մեր ազգային ակունքներին: Անդրադառնանք, թէ ինչն է կապում մեզ հայութեան հետ, որն է մեր ազգային ինքնութեան բաղադրիչը:

Ահա, այս զգացումներով է որ, ես ուրախ եմ, որպէս խոնարհ սպասաւոր մեր եկեղեցու, փոխանցելու այստեղ ներկայ ամէնքիդ, Ազգիս Վեհափառ Հայրապետ Նորին Ս. Օծութիւն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութիւններն ու բարեմաղթանքները:

Վեհափառ Հայրապետը չափազանց մխիթարական է գտնում նման միջոցառումների կազմակերպումը՝ Թէքէեան Մշակութային Միութեան կողմից յատկապէս նաեւ այս անգամ, երբ Նորին Սրբութեան հրաւէրով Մայր Հայաստան գտնուում է Ռուբէն Սեւակի ազգականը՝ Տիար Յովհաննէս Զիլինկիրեանը:

Շնորհաւորում եմ բոլոր ներկաներին այս առիթով. երբ վերստին մեր մտքերն ու մտածումները հնարաւորութիւն ունենք սեւեռելու մեր ազգի մեծերի կեանքին և ճակատագրին: Եւ նաեւ շնորհակալութիւն եմ յայտնում Թէքէեան Մշակութային Միութեանը, յաջողութեան իմ մաղթանքով, որպէսզի նման միջոցառումներ և հանդիսութիւններ շարունակուեն, այս նուիրական և հայրենասիրական զերազանց աւանդութիւններով շատ յագեցած հանդիսութիւնները:

* * *

Պ. Մ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԸ

Երեւանի Պետական Մանկավարժական Համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի ժողովրդական գործիքներու նուագախումբը, երկսեռ երիտասարդ համալսարանականներէ կազմուած... իր կատարած մեղեդիներով՝ նոր չունչ մը տուին ձեռնարկին:

* * *

Պիտի խոստովանինք, որ մեզի համար շատ տպաւորիչ եղաւ Հայաստանի Մշակոյթի Փոխ Նախարար՝ Դաւիթ Մուրատեանի ելոյթը. իր սա գնահատութիւնը մանաւանդ թէ՝ «Ռուբէն Սեւակի բարոյական արժէքներու հանդէպ ցուցաբերած հաւատարմութիւնը և անձնազոհութեան ոգին, օրինակ պէտք է ըլլայ ներկայ հայ սերունդներուն»:

Իր խօսքերը անակնկալ մ'եղան նաեւ այն պատճառով, որ նախարարութեան ենթակայ Հայաստանի «Հ–1» հեռատեսիլի կայանէն շատ անգամ ներկայացուած յայտագիրները՝ հայկական աւանդութիւնները... խաթարելու կը ծառայեն:

ԴԱՒԻԹ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Սիրելի բարեկամներ, Յարգարժան ներկաներ...

Ամէն անգամ երբ մենք հաւաքւում մենք մեր մեծ բանաստեղծների անուան շուրջ, իրականում հաւաքւում ենք մեր շուրջ, իրականում հանդիպում ենք ինքներս մեր

չուրջ, հայկական, մարդկային և մշակութային էութեան հետ: Ամէն անգամ նրանք օգնում են ճանաչելու վերստին ինքներս մեզ, մեր պատմութեան խորհուրդը: Ամէն անգամ նրանց շնորհիւ մենք նորից կարողանում ենք հաւասարուել մեր ժառանգութեանը: Ես կարծում եմ որ այս խնդիրը սեփական ժառանգութեան հաւասարուելու խնդիրը, չափազանց կարեւոր է մանաւանդ մեր ժամանակներում, որովհետեւ այդ ժառանգութիւնը, մանաւանդ մեր այս ժամանակներում մեզ, հնարաւորութիւն է տալիս քայլելու աւելի չիտակ, ճիշդ կողմնորոշուելու այս յարափոփոխ և դժուար աշխարհի բաւիղներում: Եւ աւելի խորը կապերով կապուելու մեր հոգեւոր խորհուրդի հետ մեր ժողովրդին, մեր պատմութեան և մեր մշակոյթին:

Ռուբէն Սեւակը Արեւմտահայ այդ հրաշալի սերնդի, այդ նահատակ, մարտիրոս սերնդի հզօրագոյն պայծառ անուններից մէկը, իսկապէս թողնում է մեզ դասեր, որոնց մասին հենց նոր այստեղ խօսեցին ինձանից առաջ ելոյթ ունեցողները, հռետորները:

Բայց կ'ուզենայի որ այսօր նրա յիշատակը ոգեկոչելիս, հասկանայինք, վերստին անգամ, իմաստաւորէինք մեզ համար բանաստեղծի դերը մեր ժողովուրդի կեանքում:

Բանաստեղծ՝ որը կարողանում է ճակատագրական պահերին իր մասնաւոր կեանքի վրայ վերցնել համազգային կեանքի բեռը: Ուրեմն կարողանում է իր մասնաւոր ճակատագրի վրայ պահել համազգային կեանքի բեռը: Կարողանում է այդ բեռը տանել բարոյական խիզախութեամբ, կարող է տանել այդ բեռը ազնուօրէն. բայց որպէսզի կարողանայ տանել այդ բեռը, նա պէտք է որ լինի վաւերական բանաստեղծ, իսկական գրող, որը գիրը հա-

մարում է մի խորհուրդ, յատուկ խորհուրդ որը կապուած է ամենավերին իմաստների հետ։

Ռուբէն Սեւակ այսօր կարօտ է որպէսզի նրա բանաստեղծութիւնները, նրա գործը, նրա անունը վերստին վերադարձուի այս նոր սերունդին։ Եւ այս իմաստով ես պիտի գնահատեմ Ալեքսանդր Թօփչեանին դերը։ Ես պիտի գնահատեմ այն վէպը, որը արդէն Ալեքսանդր Թօփչեանը սրանից երկու տարի առաջ հրատարակեց, նուիրելով բաւական երկար իր ժամանակից, իր ստեղծագործական կեանքից զայն նուիրելով բաւական երկար ժամանակ իր ստեղծագործական կեանքից՝ Ռուբէն Սեւակի ճակատագրին։

Նա ընտրեց հենց այդ կերպարին և կարծում եմ, որ վէպը Ալեքսանդր Թօփչեանի իսկապէս մեր լաւագոյն խոնարհումն է Ռուբէն Սեւակի յիշատակին, և նրան մեր օրերում վերակենդանացնող, մեր օրին բնակիչը դարձնող ստեղծագործութիւն է։ Այդ վէպը այսօր ընթերցողը, կարողանում է արդէն մտովի սուզուել այդ ժամանակի մէջ որ այնքան ճակատագրական էր մեր ժողովուրդի համար, վերապրել այդ ժամանակը, հասկանալ այդ ժամանակի իրողութիւնները և հասկանալ գրող մտաւորականի առաքելութիւնը այդ ժամանակներում։

Ուստի կարծում եմ որ այսպէս, հենց մեր ժամանակների մէջ ասուած խօսքով, մենք պիտի վերադարձնենք և մեր ժամանակի մասնակիցը դարձնենք նրան ովքեր թւում է, որ անցեալումն են։ Վստահ եմ, որ հնարաւոր է այս վէպի հիման վրայ հեռուստատեսային սերիալ հանել, և սա խնդիր է, որ գուցէ մենք փորձենք համատեղ ուժերով իրականացնել։ Որովհետեւ, մանաւանդ այսօր, երբ

հայկական հեռուստատեսային էկրանները հեղեղուած են զանազան սերիալներով որոնք ըստ էութեան չեն կապում հայ մարդուն իր իսկական արժէքների հետ, և հակառակը՝ նաեւ յաճախ խորթացնում և օտարացնում են մեզ այդ արժէքներից, ահա այսպիսի կերպարը, Ռուբէն Սեւակի նման կերպարը, իրօք կարող է դառնալ մագնիսական ոյժ որը կարող է փոխարինել, լցնել այդ «վակում»ը, այն վակումը, պարապը որ յառաջացել է մեր հեռուստասերիալային այս ամբողջ ծրագիր-սփոռումներով, որոնցմով լեցուն են մեր «էկրան»ները:

Սա՝ այսպիսի գործը յիշում էք, թէ՝ ասենք վերջերս ռուսները Եսենինի նուիրուած սերիալ նկարահանելով ինչպիսի մեծ հոգեբանական արդիւնքի հասան, և իմ բարեկամներն ու ընկերները ինձ ասում էին, թէ գրադարաններում կտրուկ աճել է Եսենինի հատորեակները պահանջողների թիւը, և ժամանակակից ռուս հրատարակիչները այդ պահանջի ալիքի վրայ սկսել են Եսենինի նոր հրատարակութիւններ փլանաւորել: Որովհետեւ այդ ֆիլմը յանկարծ, Ռուսաստանի նոր սերունդին դէմքը շրջել է դէպի Ռուսաստանի ազգային պոէտը:

Կարծում եմ, որ ահա, այսպիսի նախաձեռնութիւններով և այսպիսի նպատակներով, այսպիսի երեկոներով մենք կը կարողանանք վերականգնել այն ընդհանուր ժառանգականութիւնը, որը այնքան բնորոշ է եղել մեր ժողովուրդի ամենատարբեր սերունդների սեփական մշակոյթի հետ հաշտ և սեփական մշակոյթի հետ սնուելով ապրելու այդ գիտակցութիւնը, և ի հարկէ ունենալով այնպիսի պայծառ ուղեղներ, ինչպիսին հենց Ռուբէն Սեւակն է:

Կարծում եմ, որ, չգիտեմ ինձանից յետոյ հիմա ով ելոյթ է ունենալու՝ բայց ես անգամ հետաքրքրութեամբ կը լսէի Ալեքսանդր Թօփչեանինը:

* * *

Բնական է՝ հանդիսութեան ամէնէն աւելի ուշադիր ունկնդրուած բանախօսը, իբր առաջնակարգ Սեւակագէտ՝ Ալեքսանդր Թօփչեանն էր:

Ան կրկին Ռուբէն Սեւակը ներկայացուց իբր մեծատաղանդ և նախագուշակ բանաստեղծ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՕՓՉԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Ինձ մի դժուար առաքելութիւն է ընկել այստեղ՝ խօսիլ մի մարդու մասին, որին կենսագրութիւնը, չափազանց սերտ կերպարը, էութիւնը անչափ դժուար է ամփոփել մի քանի տառերի մէջ, և առաւել դժուար է, եթէ դու լաւ գիտես նրան: Քանզի որքան աւելի խորանում ես նրա էութեան և կեանքի մանրամասներին մէջ, այնքան աւելի ես զգում, թէ ինչպիսի նոր մօտեցում է պէտք, ինչպիսի նոր հայեացք հասկանալու համար այդ մարդու վաստակը և ժառանգութիւնը մեր ժողովուրդին:

Եթէ խօսենք որպէս բանաստեղծ՝ նախ և առաջ նա՝ մեզ համար, բանաստեղծ է, նա եզակի է իր էութեամբ, այնքան եզակի՝ որ մեր քաջահմուտ գրագէտները սկսած Օշականից որ իրօք, մեծ երեւոյթ է, և շատ բան կռահեց, չեն կարողացել խորանալ նրա էութեան մէջ: Մինչեւ մեր վերջին ակադեմիկոսները որոնք ենթադրելով, որ արժանին են մատուցում այդ բանաստեղծին, նրան դրեցին իր

ժամանակի մեծերին այդպէս ասաց՝ ուշիմ աշակերտների չարքում: Վստահ լինելով որ իրօք, բարձր գնահատում են նրան արժանութիւնը: Մինչդեռ ես չէի ուզի ասել, թէ մեծ էր միւսներից կամ փոքր է՝ նա ինքն իրեն հաստատել է պոէզիայի մէջ, գրականութեան, և կարողացաւ հաստատել: Նա նման չէր ոչ մէկին իր ժամանակակիցներից: Լինելով ընդհանուր այդ գեղագիտութեան մէջ, նա եզակի էր: Եւ իրօք նա եզակի էր ոչ միայն հայկական առումով. նա իր ժամանակի [ամենայն վստահութեամբ եմ սա ասում] եւրոպական պոէզիայի խոշոր դէմքերից մէկն էր: Որը կտրուկ պիտի փոխէր իր ճակատագիրը ինքն իր՝ այսպէս ասաց՝ այդ բեկումը անուանելով Կիլիկեան երգերի մէջ, ասում էր որ հիմա, այն ցաւով, ուսով պիտի հրենք մեր ցաւին անիւը դարագլոր: Այս բառերի մէջ արդէն ողբերգականութիւն կայ որ նորից ստիպուած են մեր արուեստը թողնել իր մեծ առաքելութիւնը, գեղեցկութիւն, սէր և մարդերգութիւն երգելու ցաւ մինչեւ հիմա մնում է մեր գրականութեան մայրուղիներից մէկը՝ ցաւոք սրտի: Կարելի՞է առանձին խօսել գիտնական մտածողութեան տէր Սեւակի մասին, որը դարձեալ եզակի է իր տեսակի մէջ: Վկայ նրա «Բժշկի Գիրքէն փրցուած էջեր»ը, որը մի ամբողջ գաղափարախօսութիւն էր, դրա էութիւնն էր՝ ազգը, ժողովուրդը, ցեղը պատրաստել, նախապատրաստել արհաւիրքի, որ կանխազգաց իր բանաստեղծութիւնների և յօդուածների մէջ:

Եւ վերջապէս՝ պէտք է խօսեմ այսօրուայ մեր ազգային քաղաքական համատեքստին մէջ, հեռատես, մարգարէացած մտաւորականի կերպարի մասին:

Ես չեմ ասում որ նրա գրչակից ընկերները չկարողա-

ցան, ինչպէս հարկն է, որ դեռեւս դարասկզբին ճիշդ որակեց երիտթուրքերու էութիւնը: Նրանք բանաստեղծներ էին, գրողներ էին, կարող էին շատ բաներ չնկատել: Բայց որ նա աւելի հեռատես եղաւ քան իր ժամանակի քաղաքական գործիչները, դա ուղղակի աննրելի է այդ գործիչների համար: Եւ դա խօսում է Սեւակի բացառիկ տաղանդի, նոյնիսկ դժուար է ասել — ժամանակից առաջ անցնելու կարողութեան մասին: Սենեկան ասում էր, որ Պատմութիւնը ցանկացողների անունը իր հետ չցանկացողին քարշ էր տալիս իր ետեւից: Սեւակի պարագայում նա առաջ անցաւ իր ժամանակից, բայց ժամանակը դա չներեց: Զարմանալի է նրա կեանքը. նա փաստօրէն վերջին ութ-ինը տարին կարողացաւ ամբողջութեամբ նուիրուել գրականութեան: Եւ դրանք եղան խտացած տարիներ, և որքան լաւ ես ճանաչում նրա տողերը, այնտեղ մշտապէս կայ մահուան ներկայութիւն. դա ոչ միայն դարասկիզբի գեղագիտութիւնը սէրն ու արտադրութիւնը և կանխազգացումը մեծ նախճիրի որ պիտի տեսնէր որպէս Ա. Աշխարհամարտին պատերազմ, դա նաեւ իր մահուան կանխազգացումն էր: Նա անընդհատ ծեր էր անուանում, նա անընդհատ իրեն ասում էր, որ կեանքից յոգնած եմ: Պիտի մեկնեմ: Սա միայն ռոմանթիկ կեցուածք չէր բանաստեղծների յատուկ այդ ժամանակուան՝ 25, 26, 27 տարեկան երիտասարդ որ ասում է. սա իրօք իր կանխազգացումն էր: Դա յատուկ էր. իր ժամանակի շատ արուեստագէտներ ունեցել են այդ համոզումները, Ափոլիները և միւսները... այդ կանխազգացումը ունեցել են, և Սեւակը դրանից մէկն էր, և իր մահուան կանխազգացումը նա, դեռեւս որպէս պարտաւորութիւն ունէր հնարաւորին

չափ շատ բան ասելու և տեսնելու: Ես առաւել կերպով կ'ուզենայի ձեր ուշադրութիւնը հրաւիրել մի հանգամանքի վրայ, որ արտայայտուած է նրա «Այլասերում» յօդուածի մէջ: Ես դա կը դնէի բոլոր դասագրքերում և խորհուրդ կը տայի մանաւանդ այսօր, մեր քաղաքական գործիչներուն որ կարդան այդ յօդուածը, այդ մտորումները:

Ուղղակի ապշեցնող կանխատեսումներ կան այնտեղ որ թւում է թէ, յատկապէս այսօրուա համար է գրուած: Բայց եթէ տասը տարով ետ գնանք կը պարզուի, որ այդ ժամանակների համար է գրուած, և չէի ուզի որ տասը տարի յետոյ կարդաք և ասէք նաեւ, որ 2019 թուականի համար է գրուած:

Սա գրուել է 1912 թուականին, լոյս է տեսել 1913 թուականին «Ազատամարտում»: Եւ դա արդէն կանխատեսում էր, բաւական յստակ՝ Մեծ Եղեռնը:

Սեւակը դեռեւս միակն էր, ո՛ր շատ ճիշդ հետեւութիւն արեց Ատանայի կոտորածի մասին, այն կոտորածին որին մենք մէկ ամիս առաջ վերջապէս, հարիւր տարուան ուշացումով կարողացանք քաղաքական գնահատութիւն տալ: Ձեմ ասում թէ անտեսուել է: Բայց քաղաքական գնահատութիւնը ճշգրիտ հիմա եղաւ: Իր ժամանակին էլ Արշակուհի Թէոդիկը հոյակապ գիրք մը գրեց, Սուրէն Պարթեւեանը գրեց, Զապէլ Եսայեանը գրեց: Միւս բանաստեղծները անդրադարձան՝ Սիամանթօն, Վարուժանը՝ եղան, անդրադարձներ եղան. բայց հետեւութիւնները ճիշդ՝ միայն Սեւակը կարողացաւ անել, վկայ նրա ամբողջ գրականութիւնը, որը արդէն գրեթէ մնում էր որ նա ասէր օրն ու ժամը, թէ երբ է լինելու յաջորդ եղեռնը:

Զարմանալի է՝ հարիւր տարի առաջ եղած այդ նախա-

զգուշացումը երիտթուրքերի բացարձակապէս անցաւ աննկատ: Եւ ես հասկանում եմ այդ «էֆորիա»ն թէ ահա, վերջապէս, բարբարոսը քաղաքակրթուելու է և թւում էր՝ ցանկալին իրականի տեղ անցկացնել, չատերին էր նա կուրացրել, անգամ Զօհրապի նման մարդուն որ ասում էր՝ ինչի՞ց էք բողոքում, տասը հոգու... ահա թուրքերը կախաղան են հանել, և յետոյ պարզուեց, որ այդ տասից հինգը հայեր են: Ատանայի մեղաւորներ իբր թէ: Մի խօսքով՝ ես ուզում եմ նաեւ ուշադրութիւն հրաւիրել այդ մարգարէացող մտաւորականին:

Եւ վերջապէս ուզում եմ աւարտել իմ խօսքը երկու հետաքրքիր, ուրեմն փաստով՝ կապուած իմ վէպին: Ես քանի որ հանգամանալից ուսումնասիրել էի նրա ձեռագրերը, նրա կեանքը, նրա կենսագրութիւնը, ամբողջ նրա ժամանակը, և թւում էր թէ իմ նախասիրած ժամը ինձ պիտի ստիպէր գիտական ուսումնասիրութիւն գրել Ռուբէն Սեւակի մասին, չնայած ինձնից առաջ արդէն գրել էին յուշագրքեր և հեղինակներից մէկը ներկայ է այստեղ, այնուամենայնիւ, ինչ որ բան պակսում էր... Պրն. Չիլինկիրեան դուք կը յիշեք անշուշտ, թէ ինչպէս Պրն. Անդրանիկ Ծառուկեանի մօտ հիւր էինք 1988 թուականի Յունուարի 21-ին, ես, Անահիտը և դուք, և նա նուիրեց իր վէպը՝ «Սէրը Եղեռնի Մէջ» և ասաց... Յուսամ կարդաս և շաբաթ մը ետք կը հանդիպենք և կը խօսենք»: Ասի՝ վարպետ չեմ խոստանում: «Կը հասկնամ. Փարիզի հմայքները չպիտի ձգեն հոս գիրքեր կարդալու»: Ասի «Փարիզի հմայքները մեղաւոր չեն»: «Հապա ինչո՞ւ, պիտի չկարդաս: Ասի «Չեմ խոստանում, վարպետ ինչո՞ւ, ի՞նչ պատահեց քեզ»: Ասի ինքս էլ պիտի գրեմ: Դա ուղղակի իմ

բերանից դուրս եկաւ, և ես հիմա եմ հասկանում, որ Սեւակի կերպարը ներկայացնելու համար ժողովուրդին, պէտք էր իսկապէս նրան ներկայացնել գեղարուեստական ժանրի սահմաններում: Դա ինքնին վիպական կերպար է, նրա կենսագրութիւնը, նրա ժամանակը, բաւական չէր միայն գիտականօրէն վերլուծել: Դա կարեւոր է, բայց իսկապէս մատուցելու համար նրան, պէտք էր անպայման ներկայացնել գեղարուեստական իր շրջանակներում: Եւ ուրեմն, ես հիմա եմ հասկանում՝ իսկապէս այդ ներքին մղումը որ իմ ձեռքն բռնում է որ ես չանեմ ակնարկութիւններ և բերեմ ձեզ որ չնորհակալ եմ այստեղ եղած ջերմ խօսքերի համար, որ ասաւ իմ կրտսեր գրչեղբայրը Դաւիթ Մուրատեանը — մենք խօսել ենք, նա ուրիշ առիթներով է ասել, և երեւի ես կարող եմ բաց ճակատով ասել որ կարողացայ իսկապէս ներկայացնել այդ կերպարը: Եւ այդ առթիւ կ'ուզէի, աւարտելով յիշել եւս մէկ այլ հանդիպում դարձեալ ոչ նուազ յարգելի և վաստակաշատ մի մարդու հետ, խօսքը վերաբերում է Կարլէն Դալլաքեանի որի հանդէպ կարծում եմ, բոլոր ներկաներս տածում ենք յարգանք: Ես գիրքը լոյս տեսնելուց յետոյ, նուիրեցի նրան, միշտ նուիրել եմ, և խնդրեցի որ նա հնարաւորին չափ շուտ կարդայ որպէսզի զրուցենք՝ նրա կարծիքը ինձի համար շատ կարեւոր էր: Նա իսկապէս մէկ շաբաթ յետոյ զանգեց. չնայած ինչ որ ծաւալուն մենագրութեան վրայ աշխատում էր, և խօսեցինք բաւական, մօտ մէկ ժամ, յիշում եմ, հեռախօսով ենք խօսել, շատ հետաքրքիր բաներ ասաց, բայց մի՝ դիտողութիւն չէ, ուղղակի մի դիտարկում կատարեց: Ասաց՝ ես չեմ հասկանում... ասաց... քո վէպում Սեւակը նախայարձակ չէ,

միշտ կանայք, նախայարձակը կանայք են... ինչպէս հասկանալ սա: Ասի.— «կը ներէք, ես հիմա նկատեցի դա», բայց ինքնին բնական ստացուեց... և հարցը այն չէր, որ ինք գեղեցկադէմ տղամարդ է եղել, պիտի որ հելվեցուհիներ և հիւսիսային կանայք այսպէս ասաց՝ խլխլէին, դա բնական է. բայց դրա մէջ ուրիշ աւելի մեծ կարեւորութիւն ունէր: Նա մարմնաւորում էր անհետացող ասպետութիւնը, և կանայք կարօտ էին այդպիսի տղամարդու, և բնական է, որ կանայք պիտի գնային դէպի այդ ասպետը: Դրա մէջ գեղագիտական իմաստ կայ: Ինձնից անկախ է ստացուել: Սա իրօք գրողական տարերքի, աշխատանքի հետեւանք է: Թէ որ մենք խօսեցինք Դալլաքեանը ասաց.— «Այդ համատեքստում դա ակնկալելի է: Այդպէս է ստացում»: Եւ պատահական չէ՝ Սեւակը ունի մեղաւոր, հեռացող ասպետի կերպարը իր բանաստեղծութիւններում: Նա իրեն համարում էր ոգեծին մի թրուպատուր, ուշ ծնած: Թրուպատուրը միայն թարգմանւում է որպէս աշուղ, բայց միայն աշուղ չէ. թրուպատուրները միջնադարի ասպետ քնարերգակներն են: Նրանք ասպետական ուխտ են կատարում, իրենց տիկնոջը նուիրուելու իրենց կեանքը և քնարը: Նրա մէջ խորհուրդ կայ: Եւ պատահական չէ նաեւ որ, մեծ փիլիսոփայ Տենի Ռուչօն ասում էր.— Առաջին Համաշխարհային Պատերազմին ծնունդ տուող պատճառներից մէկը կարեւոր — նա ընդունում էր որ կար այստեղ տնտեսական, քաղաքական և այլ պատճառներ — բայց կարեւոր պատճառների թւում դնում էր նաեւ ասպետականութեան կորուստը: Ասում էր միայն ասպետականութեան կորուստը թոյլ կտայ այսպիսի նախճիր: Եւ նա իրաւացի էր: Սեւակը դարձեալ իր մեծ

արուեստագէտի բնազդով կարողացել էր դա արտայայտել իր ստեղծագործութիւններում: Եւ ես կ'ուզէի որ հիմա իսկապէս, ճիշդ ասել այստեղ, որ Սեւակը պիտի լինի այն իտէալներից մէկը, որ կրթի մեր սերունդներին: Բայց եկէք չիտակ լինենք մանաւանդ ինք՝ Սեւակն է մեզ պարտադրում, նա չէր ընդունում կեղծ խօքեր երբեք: Եւ չէր ուզի որ այստեղ կեղծ խօսքեր հնչի, նրա ոգեկոչումի օրը: Եկէք անկեղծորէն հարց տանք մեր երիտասարդներին նստած այստեղ, թէ ովքեր են նրանց կուռքերը այսօր Հայաստանում: Ես հասկանում եմ, որ ունենք կարիքներ և դժուարութիւններ, ունենք շատ ու շատ խնդիրներ: Հին սերունդներն յետ պատերազմի անցել են շատ դժուար օրերի միջով, բայց ես չեմ յիշում որ հարստութիւնը, դիրքը, եւայլն, եւայլն... մեզ համար լինէին կեանքի ուղենիշներ, այսպէս ասաց՝ տենչալի բարձունքներ:

Հարցում պէտք չէ անել այդ բաները իրօք հաստատելու համար, թէ՛ որոնք են մեր այս օրուայ երիտասարդութեան իտէալները: Աւում է, թէ Սեւակը քիչ է ծանօթ այսօր: Ոչ, Սեւակը ծանօթ է. և ես ուրիշ կերպ կ'ասէի: Ոչ, Սեւակը անջատուած չէ այսօրուայ իտէալների շրջանակում — իտէալ բառն էլ չի սազում այդ ձգտումների հետ: Իտէալը ենթադրում է վսեմ բաներ: Արդեօ՞ք Սեւակի կարիքը ունի այն երիտասարդութիւնը որը այսօր [չէի ուզի ասել որ ունի] բայց կարծում եմ որ գոնէ մեծամասնութիւնը ունի: Ես նրանց չեմ մեղադրում: Նրանք չեն հասկանում: Այսպէս ասաց՝ Յիսուսի պէս՝ չեն գիտեր թէ ինչ են ասում և ինչ են անում: Բայց նրանց պէտք է ուղղել, նրանց պէտք է կրթել, ձեռքը պէտք է բռնել-տանել և ասել — Այս ուղիով դու քայլիր, և ոչ թէ միւսով: Եւ ահա,

այն ուղենիշները որոնց որ գիտեն, լինեն, որոնցից մէկը կարեւորագոյններից մէկը պէտք է լինի Ռ. Սեւակը:

Եւ թոյլ տուէք մի վերջին նախադասութիւն – այստեղ մեզ հետ ներկայ է ուրեմն Սեւակի ընտանիքից նրա եղբօրորդին, զարմիկը, Յովհաննէս Չիլինկիրեանը որը իր էութեամբ, իր գործով, իր բարոյականով կենդանի մարմնաւորումն է Ռուբէն Սեւակի:

Եւ նա շատ-շատ գործեր է առել և՛ մշակութային և՛ կազմակերպչական [ինչպէս ասուեց] բանաստեղծ Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մասին: Նա նիւթապէս խրախուսել է բազմաթիւ ծանրակշիռ գիրքերի հրատարակութեանը, մշակութային միջոցառումների, շատ-շատ բաներ կան [ես չէի ուզեր թուարկել... ժամանակը խնայելու առումով], բայց կ'ուզէի վերջացընել միայն երկու-երեք բառով – եթէ տա՛ր Աստուած՝ Ռուբէն Սեւակ յարութիւն առնէր ու գար այստեղ, ապա, առանց վարանելու ասում եմ՝ նա կը համբուրէր Պրն. Յովհաննէս Չիլինկիրեանի ճակատը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ

* * *

Հայաստանի Գրողներու Միութեան Նախագահ՝ Լեւոն Անանեան նոյնիմաստ ելոյթով մը, Ռուբէն Սեւակի անձնագրոհութեան ոգին մատնանշելէ յետոյ, մասնաւորապէս կեդրոնացաւ 2010-թ.ին Ռուբէն Սեւակի ծննդեան 125-ամեակի նշման ծրագրին վրայ:

Այսօրուան մեր հանդիպումը, հանդիսութիւնը յոբելեա-

նական չի, և լաւ է որ յոբելեանական չի, որովհետեւ մի տեսակ վարժուել ենք մեր մեծերի առիթով հաւաքուել յոբելեանից յոբելեան:

Ռուբէն Սեւակ կրկնեց իւրովի իր ժողովուրդի ճակատագիրը և էն ինչ որ նա ստեղծել է, պատկանում է սերունդներին, պատկանում է մեր անցնելիք ճանապարհին ես կ'ուզենայի որ յիշենք հետեւեալ փաստը որ եկող տարի Փետրուարի 15-ին լրանում է մեծ բանաստեղծի, Ռուբէն Սեւակի 125-ամեակը:

Օգտուելով Սեւակագէտների, Սեւակասէրների՝ շատ գեղեցիկ լսարանի ներկայութիւնից ես ուզում եմ շատ համառօտ ներկայացնել էն ծրագիրը որ Գրողների Միութիւնը ներկայացրել է կառավարութիւն օրերս, ի հարկէ խորհրդակցելով նաեւ Ալեքսանդր Թօփչեանի հետ որը Եւրոպայում է, Գրողների Միութեան ներկայացուցիչն է. և ես կ'ուզենայի որ դուք նաեւ, համառօտ ծրագրին տեղեկանալով, նաե՛ւ ձեր յաւելումները անէք յետագայում:

Ուրեմն, անշուշտ պիտի անցկացուի Ռուբէն Սեւակի ստեղծագործութեանը նուիրուած մեծ գիտաժողով, տրանսպորտի և փօսթի նախարարութեանը յանձնարարւում է յոբելեանական դրոշմանիշ տպագրել Ռուբէն Սեւակի դիմանկարով: Այնուհետեւ հանրային հեռուստատեսութեանը կ'առաջարկուի պատրաստել վաւերագրական ֆիլմ Ռ. Սեւակի կեանքի ու գործունէութեան մասին: Այնուհետեւ այստեղ շատ ճիշտ և տեղին խօսուեց Ալեքսանդր Թօփչեանի վէպի մասին՝ «Եւ Անգամ Մահից Յետոյ» որը մեծ ներդրում էր Սեւակագիտութեան ոլորտում և որը ուղղակի բացառիկ իր տեսակով. ոչ միայն Ռուբէն Սեւակի կերպարն է մեզի մատուցում, այլեւ էն ժամանա-

կուայ գեղագիտութիւնը որը տիրում էր Եւրոպայում էդ թուականներին, ժողովուրդի ողբերգութիւնը մի այլ չափանիշով, և սովորաբար մենք ասում ենք թէ՝ Եղեռնի թեման [որոշ հիմքեր ունենք] մեր գրողներին չի յաջողում ներկայացնել այնպէս ինչպէս որ օտարներին է յաջողում: Ալեքսանդր Թօփչեանը կարծես նաեւ էս դէպքում կոտրեց էդ գաղափարը, և ես կարծում եմ, որ Սեւակի 125-ամեակի առթիւ պիտի կարողանանք թարգմանաբար ներկայացնել Ալեքսանդր Թօփչեանի վէպը, ֆրանսերէն, ռուսերէն, և արդէն պիտի նայենք ըստ թարգմանական հնարաւորութիւններին:

Առաջարկում է նաեւ Սեւակի Պոէզիան ասմունքով ներկայացնող խտասալիկի թողարկում, ինչպէս նաեւ Սեւակի անունը կրող 151 դպրոցին յարող փողոցներից մէկը կոչել բանաստեղծին անունով: Եւ ամենակարեւորը՝ նոյն տարածքում կառավարութեան միջոցներով կառուցել առանձնատուն ուր կը գետեղուեն Ֆրանսայի – Նիս–Կայն-Սիւր Մէր քաղաքում Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մէջ պահուող բանաստեղծի ձեռագրերը, լուսանկարները, գրքերը և այն մեծարժէք իրերը: Եւ ի Հարկէ Յանձնաժողովի մէջ պիտի անպայման խնդրուի որպէսզի իր ներկայութիւնը ապահովուի Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան տնօրէն Պրն. Յովհաննէս Չիլինկիրեանին:

Այնուհետեւ առաջարկում է 125-ամեայ Յոբելեանական միջոցառումների շրջանակում հաստատուի Ռ. Սեւակի անուան կրթաթոշակ Երեւանի Համալսարանի բանասիրական ֆակուլտետում, ինչպէս նաեւ բանասիրական ֆակուլտետի լսարաններից մէկը անուանել Ռուբէն Սեւակի անունով:

Ի հարկէ՝ արդէն հասունացել է բանաստեղծի եռահատոր ակադեմիական հրատարակութեան ստեղծման գաղափարը, և ես կարծում եմ՝ մենք պիտի կարողանանք Գրականութեան ինստիտուտի և նաեւ Չարենցի անուան գրականութեան և արուեստի թանգարանի համատեղ ջանքերով, իրականացնել նաեւ Ա. հատորի տպագրութիւնը:

Վերջապէս՝ առաջարկւում է՝ Յոբելեանի օրերին կազմակերպել Յոբելեանական ցուցահանդէս «Ռուբէն Սեւակը և նրա ժամանակը» վերնագրով, և նաեւ կազմակերպելով յոբելեանական տարբեր միջոցառումներ և եզրափակիչ Յոբելեանական արարողութիւնը:

Ռուբէն Սեւակը մեր մեծ արժէքներից է, որոնք թերեւս պէտք չունեն յոբելեաններով նշուելու, որովհետեւ նրանք իրենց ներկայութեամբ միշտ կան մեր կեանքում և պիտի լինեն իրերայաջորդ սերունդների կեանքում: Բայց մենք նշելով Ռուբէն Սեւակի Յոբելեանը, մենք պանծացնում ենք մեր ժողովրդին որ ծնել է Ռուբէն Սեւակը:

Եւ ես կարծում եմ էսօր, յետ պանծացումի և յետ ժառանգութեան մի շարք սիրուն դրուագներ էս ջահելների ներկայութիւնը հրաշալի, էս երիտասարդութիւնը ովքեր եկել են հաղորդակցուելու Ռուբէն Սեւակի գրականութեանը և իրենց ուսերի վրայ էդ առաքելութիւնն են տանելու յաւերժաբար, հայեցի արժէքներ, ազգային արժէքներ, գրական արժէքներ փոխանցել սերունդէ սերունդ:

Շնորհակալութիւն

* * *

ԱՆԱՀԻՏ ԹՕՓՋԵԱՆ Կ'ԱՍՄՈՒՆՔԷ

Յետոյ բեմ հրաւիրուեցաւ վաստակաւոր ժողովրդական Արտիստ Անահիտ Թօփչեանը։

Եւ ինչպէս միշտ՝ արուեստագիտուհին Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններէն մեկնաբանեց՝ իր տաղանդաւոր ասմունքողի չնորհներով։

Այստեղ կը նշենք՝ ասմունքած բանաստեղծութիւններուն անունները՝

1.— Երազներ, 2.— Վաղը, 3.— Ինչո՞ւ, 4.—Ո՛չ։

ՎԱ՛ՂԸ

— Վա՛ղը... — ըսիր ինձ տրտմաբար
Ակս այդ մէկ վանկը անհընար,
Յաւիտեաններ կը խոստանար.
Շրթունքիդ այդ խաղը՝ «Վա՛ղը...»։

«Վաղը...» ինչո՞ւ. մինչդեռ այսօր
Այնքան չքնաղ ես ու բոսո՛ր.
Ու մինչ մեր վրայ ա՛յնքան հրզօր
Կ'իշխէ այս պահն այսօ՛ր... «Վա՞ղը...»։

Այսօր սէրն է այսօրն հմայք.
Այսօրն յոյսն է, այսօրը կեանք,
Այսօր երազ այսօրը խաբկանք
Մինչ դուն ինծի ըսիր *«Վա՛ղը...»։*

Ու երկչոտ սիրտըդ աղջըկայ
Մաղթեց որ այդ վաղը չի գայ,
Վաղն ինչ է որ, վաղը չիկա՛յ,
Գերեզման մ'է, հոգի՛ս, վաղը...։

ԵՐԱԶՆԵՐ...

Երբեմն հոգւոյս ծովուն վրայ վէս,
Դիցաբանական հին նաւերու պէս
Կ'անցնին երազներ.
Առագաստներն խունկ ու հովով լեցուն
Արշալոյսներու կ'երթան Աստուծուն,
Շուշան երազներ:

Երբեմն մտքին դաշտին վրայ դալար,
Եօթ մուսաներու նըման միալար,
Կ'անցնին երազներ.
Ձեռք մը պաշտելի մատներն իմ նիհար
Կը տանին իրենն չուրթին սիրահար.
Սիրո՛յ երազներ:

Երբեմն սրտիս գերեզմանոցէն
Ինձ հին սիրելի մահերու խուցէն
Կ'անցնին երազներ.
Իրենց քայլին տակ ոսկրեր կը հնչեն
Ու անոնք իմ մէջ ի սպառ կը ջնջեն
Ամէն երազներ:

Ակս, կ'ուզեմ մոռնալ կերտուածքս հողեղէն,
Կ'ուզեմ բարձրանալ, երկնի աստղերէն
Գողնա՛լ երազնե՛ր.
Տղու պէս թռչի՛լ անուրջիս մէջէն.
Բայց բիւր ցաւեր զիս ի հող կը խաչեն.
Ո՞ւր էք երազնե՛ր...:

Եկէք փռուելու ճամբուս վրայ վերջին,
Արիւնոտ ոտներս հողին կը դպչին.
Եկէ՛ք երազներ
Ծեր արծուի թեւերս հովով լեցնելու,
Հպարտ հոգիս մե՛ծ յոյսով լացնելու
Սո՛ւտ, սո՛ւրբ երազներ...:

Լոզան

ԻՆՉՈ՞Ւ

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր,
Փոքրիկ աղջիկ, քեզի մեղք էր.
Փոքրիկ ծոցիդ թիթեռ պէտք էր,
Դուն ծեր արծիւ մը բանտեցիր...:

Կապոյտ աչուիդ երբոր բացիր,
Կապո՜յտ աղջիկ՝ պլպուլն երգէր.
Քե՛զ ալ սիրոյ մրմունջ պէտք էր,
Դուն գուժկան մոռ՛նչ ընտրեցիր...:

Ես կ՚երթամ մի՛չտ, անծայրածի՛ր,
Դամբաններ են ոտքիս հետքեր.
Քեզ սիրոյ մեղմ սիւք մը պէտք էր,
Դուն փոթորկին կուրծքդդ բացիր...:
Կ՚այրին աչերդդ սեւածիր,
Պիտի մեռնիս, այդպէս մ՚երգե՛ր.
Քեզի փոքրիկ սէր մը պէտք էր,
Դուն Սէ՛ր-Աստուածը սիրեցիր...:

[1911]

Ո՛Չ

«Եկո՜ւր,– կ՝ըսէ ինձ տարտամ ձայն մ՝անդադրում.
– Եկո՜ւր, եկո՜ւր սիրահարի քու տրտում
Սիրտը՝ բաց ինձ՝ տերևներու չուքին տակ,
Բանաստեղծի փոթորկող սիրտդ անյատակ...:

Դու՝ սիրելէն ու խաբուելէն ալ յոգնած,
Եկո՜ւր, եկո՜ւր, անտառներուն ուխտագնաց՝
Թռչներու երգը մութ հոգւոյդ ալէլո՜ւ,
Ծառէ ի ծառ թափառելու ու լալու...:

Եկո՜ւր , ես ծեր Վիհին սիրտն եմ գահավէժ.
Ես անտառին ծերուկ սի՜րտն եմ խոռվուն.
Վերջալոյսի արիւնող սի՜րտն եմ յաւերժ.
Հեծող սիրտն եմ գերեզմանի ցո՛ւրտ հովուն...:

Եկո՛ւր, եկո՛ւր, հասունցեր ես ինձ համար.
Մտիր սրտիս մէջ, նոյնացի՛ր անհամար
Ձեւերուս հետ էերուս հետ մահազօր.
Քեզի քանի՜ պիտի ըսեմ իմ հրզօր...:

Ինչ հաճոյք ալ մեռած սիրտ մը կըրելէն...
Եկո՜ւր քարիս տակ դիր գլուխդ լալէն,
Ոչինչիս մէջ ոչնչացիր դու անա՜հ,
Յաւե՜րժ նոյնիս հետ նոյնացիր դուն անմահ...»:

ՍԵՐԺ ՍՐԱՊԻՈՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ

* * *

Այստեղ պիտի խոստովանինք, որ բանասիրական գիտութիւններու Դոկտ. Սերժ Սրապիոնեանի այս Հանդիսութեան ունեցած ելոյթը, Ռուբէն Սեւակի մասին, մեզի յայտնութիւն մը եղաւ:

Անկեղծ ասաց մի քիչ դժուար է այսքան մեծ վաստակ ունեցող սեւակագէտներից յետոյ ելոյթ ունենալ: Բայց ես ուզում եմ իմ խօսքը սկսել քառորդ դարի հեռաւորութիւնից՝ 1984 թուականին, երբ եղիշէ Չարենցի անուան արուեստի և գրականութեան թանգարանում ես փորձում էի ճարել Ռուբէն Սեւակի ձեռագրերը, թէզ էի պատրաստում Արեւմտահայ քաղաքացիական պոէզիայի մասին, այնտեղ առաջին անգամ Հանդիպեցի յարգարժան Ալեքսանդր Թօփչեանին, զարմանալի մանրակրկիտութեամբ, սիրով և արտասովոր նուիրուածութեամբ հանել էր արդէն այդ ամբողջ նիւթը ինչ գոյութիւն ունէր Գրականութեան և արուեստի թանգարանում և որ ամենակարեւորն է՝ ես խօսքս անպայման մասնաւորեցնում եմ՝ գտնվում էր արդէն Ռուբէն Սեւակի տիրական ազդեցութեան տակ: Ռուբէն Սեւակի երգը, Ռուբէն Սեւակի միտքը, Ռուբէն Սեւակի անձը մարդուն մղում է ազնուութեան: Ես ի հարկէ Թօփչեանների գերդաստանը լաւ գիտեմ: Եւ գիտեմ որ դա նուիրեալների գերդաստան է և շատ չափով նպաստել են հայ արուեստի և մշակոյթի զարգացման ու բարձրացմանը: Բայց նաեւ չեմ բացառում այն բանը, որ Ալեքսանդր Թօփչեանը նոր, ազնուացման ուղի է յայտնաբերել իր համար, որի ապացոյցն այսօր այս

վէպն է, և նաեւ այն որ նա, առանց որ մեր գրական շրջանակներին երբեմն դըժբախտաբար հանդիպող նախանձի, առանց որեւէ ցաւի, իր իսկ աշխատանքի արդիւքը տուեց ինձ-ինք կ'երեւի հիմա չի էլ յիշում — մի ամբողջ ձեռագիր և մեքենագիր օրինակներ որի հիմքի վրայ եղաւ նաեւ իմ թեկնածուական թէզը: Շնորհակալութիւն ձեզ, և այն նուիրումի համար որ դուք բացում էք մեր ազգի դժբախտաբար երկար ժամանակ փակ մնացած էջերից մէկը: Այո. Ռուբէն Սեւակը գրական ասպարէզ եկաւ իր համար չափազանց աննպաստ պայմաններում: Հրապարակի վրայ արդէն գրքեր կային, դրանց հեղինակները՝ Դանիէլ Վարուժան ու Սիամանթօն էին, ճանաչուած չոնթալից մուտքով գրականութիւն էր մտել Միսաք Մեծարենցը, և այս հսկաների կողքին, առանց ճշմարիտ-իրական տաղանդի, առանց Աստուածային օժտուածութեան չատ դժուար էր բանաստեղծի դերը գրաւել: Մանաւանդ, որ բժիշկի ճանապարհն էր ընտրել, ինչ որ չխանգարեց, այլ և չատ չափով օգնեց այդ տարօրինակ, զարմանալի, առեղծուածային բանաստեղծին յայտնաբերել իր Ազգի ուղին որ ոչ Մեծարենցինն էր, ոչ Սիամանթոյինն էր և ոչ էլ Վարուժանինն էր լինելու: Մարմինի գիտութիւնը օգնեց Ռուբէն Սեւակին թափանցելու հոգու գիտութեան մէջ, մտա-հոգեբանութեան մէջ, կերտեց սիրային քնարերգութիւն որ չես համեմատի սիրերգութեամբ հարուստ հայ գրականութեան մէջ, ոեւէ մէկի սիրերգութեան հետ: Դա ապրուած սիրերգութիւնն էր: Դա գերմանուհի Եաննի Աբէլի հետ ապրուած անզուգական օրերն էին որոնք, դժբախտաբար, լինելու էին գրողի համար չափազանց կարճ և չափազանց եղերականօրէն վերջացած: Բայց կարո՞ղ ենք մենք մեր կեան-

քում ցոյց տալ մի ուրիշ հայ բանաստեղծի որի կինը այլազգի էր և որի կինը կարող էր գերմանական Հիւպատոսի երեսին չպրտել բառերը թէ՝ անիկա երկու զաւակ ձգած է, մէկը պիտի մեծցնեմ Թուրքիոյ դէմ, մէկը՝ Գերմանիոյ դէմ: Այդ տարօրինակ ու զարմանալի բանաստեղծի ազդեցութիւնն էր որ հիւսում էր երգեր «Սէր Աստուծոյ» ու «Ծեր Արծուի» ու բանտուելու մասին: Որ կրում է իր երկրային փիլիսոփայութիւնը: Որ հիւսում էր թրուբատուրների ծանր երգը, երբ արուեստը արտաքնապէս տանում էր կախաղան: Երբ հիւսում էր կարմիր կարօտի երգերուն համանուն բանաստեղծութեան մէջ: Երբ խօսում էր «Զանգակներ, Զանգակներ»ի մասին որտեղ առաջին անգամ էր բանաստեղծութեան մէջ. մեռելոց ողբն էր, ապրողաց կոչն էր, չանթեր բեկանելու կառուցուածքներ: Սա այդ բանաստեղծն էր:

Անշուշտ ունեցեր է էջեր որոնք շատ ազդեցիկ չեն: Բայց պոռթկումները արդէն անչափելի էին: Գլուխ գործոցները արդէն անհամեմատելի էին: Եւ երբ խտացնում էր ամբողջ հայ ժողովրդի ճակատագիրը իր վեցտողեայ բանաստեղծութեան մէջ որ վերցրել և տեղափոխել է մէկ ուրիշ բանաստեղծութեան մէջ, որին թարգմանիչը նոյն յարգարժան Ալեքսանդր Թօփչեանն է, և հիւսում էր բացառապէս Հայաստանի ճակատագրի խտացուած արտայայտութիւնը — դա արդէն որեւէ մէկին տրուած չէ:

Նրա կեանքի մանրամասները դժբախտաբար այսօր յայտնի են: Բայց այս գրողը իր ժողովուրդի կեանքից յիսուն տարի բացակայեց. գուցէ և աւելի: Միայն վաթսունական թուականների սկզբում — գրող՝ Գէորգ Հատիտեանին նկատի ունեմ, ապա մի քիչ աւելի համարձակ բայց զուտ բանուորական երգերի մեկնաբանութեամբ՝

Եդուարդ Ջրբաշեանին նկատի ունեմ, աւելի շատ աւելի ամբողջական և կերպարը ամբողջացնելու միտում ունեցող ֆունտամենտալ գիրք՝ Վլատիմիր Կիրակոսեանի գիրքը նկատի ունեմ, և նաեւ այս վերջին տասնամեակի արտասովոր հետաքրքրութիւնը ցոյց են տալիս որ Ռուբէն Սեւակը ուշ է գալիս, բայց ուշացած չի գալիս: Արդէն վէպեր են գրւում, արդէն գրւում են ծաւալուն գիտական աշխատութիւններ, և անպայման Ռուբէն Սեւակ Զիլինկիրեանի ծառայութիւնը, Ռուբէն Սեւակ Զիլինկիրեանի հայկականութիւնը և հայեցիութիւնը իր ուրոյն տեղը ունենալու է, արժանաւոր տեղը հայոց միւս մեծերի կողքին:

Եւ այսօր վստահաբար կարելի է ասել՝ Ռուբէն Սեւակը հայոց ազգի մեծագոյն վկայագիրներից մէկն է, և զուտ Սեւակեան վկայագիրն է: Եւ սա՝ արդէն անուրանալի ճշմարտութիւնն է:

* * *

Ռուբէն Սեւակի Յիշատակի այդ օր՝ ելոյթ ունեցող միակ Սփիւռքահայ մտաւորականը՝ մեր վաղեմի բարեկամ, Հայաստանի Ազգային Ակադեմիայի արտասահմանեան անդամ, գրականագէտ Երուանդ Ազատեանն էր:

Ան ներկայացուց Ռուբէն Սեւակ Մարդը, Բանաստեղծը և Նահատակը:

Եւ Երուանդ Ազատեան պատմեց Նիս-ի «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն» այցելութեան և Սեւակի դստեր՝ Շամիրամի հետ ունեցած հանդիպման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱՆԴԱՄ ԳՐԱԿԱՆԱԳԷՏ ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Ռուբէն Սեւակի յիշատակով յագեցած այս երեկոյին դժուար է խօսք ըսել, որ ըլլայ նորութիւն կամ ինքնուրոյն:

Հաւանաբար միակ ձայնը որ ես պիտի բերեմ կ'երեւի Սփիւռքի ձայնն է, որուն ժառանգորդն է, ուղղակիօրէն Ռուբէն Սեւակի գրականութեան:

Ռուբէն Սեւակ՝ բժիշկ, մարդասէր, գրող, մեր արեւմտահայ իրապաշտ գրականութեան ռահվիրաներէն է. իր նպաստը մեր արձակին և բանաստեղծութեան բոլորովին ինքնուրոյն է: Իր արձակը բեղմնաւորուած է իր բանաստեղծական երեւակայութեամբ, և իր բժշկական ասպարէզը հաւանաբար խորքն է այն մարդկայնականութեան զոր մենք կը գտնենք իր արձակին և բանաստեղծութեան մէջ:

Իր կեանքը ամբողջ եղած է առասպել մը, թէեւ՝ կիսաւարտ առասպել մը, և լի է բարոյական խորհուրդներով և ազգասիրական անբեկանելի հաւատքով:

Ես կը յիշեմ՝ նոյնիսկ մեր դպրոցական դասագիրքերուն մէջ կարդացած ըլլալ, «Բժիշկի Գիրքէն Փրցուած Էջեր», ուր մտքիս մէջ թեւաւոր, յաւիտենականութեամբ դրոշմուած է իր բացատրութիւններէն մէկը — երբ ինք Լօզանի մէջ ուսանող էր, և իր պանդուխտի կեանքին ու ճակատագրին մասին միշտ կը խորհրդածէ այնտեղ, իր խօսքը կռունկին ուղղելով կ'ըսէր.— «Կռունկ թեւաւոր հառաչ» ինչպիսի՜ բանաստեղծական պատկեր: Տարիներ, աւելի քան քառասուն տարիներ, մտքիս մէջ կը թեւածեն Սեւակի չունչով և խօսքերով:

Ըսի, թէ Սեւակի գործը ինքնին առասպելական էր, և զարմանալի չէ որ իր կեանքը նիւթ դարձած է երկու յատկանշական վէպերու. մէկը Սփիւռքի մէջ՝ Անդրանիկ Ծառուկեանի «Սէրը Եղեռնին Մէջ», և կոթողային վէպը Ալեքսանդր Թօփչեանին՝ «Եւ Անգամ Մահից Յետոյ»ն:

Հաւանաբար Պրն. Ա. Թօփչեան բնազդով ճիշդ զգացած է որ չկարդար Ա. Ծառուկեանին վէպը: Որովհետեւ նոյն կարծիքի են նաեւ նոյնինքն իր հարազատը՝ Շամիրամը որուն հանդիպելու առիթը ունեցայ, Սեւակի տուած դասերէն մէկը, որ Պրն. Թօփչեանի նաեւ վէպին վերջընթեր էջերուն վրայ է — երբ Սեւակին կ'առաջարկուի ամուսնանալ Թրքուհիի հետ և կեանքը փրկել, մոռնալով իր ընտանիքը, հակառակ որ իր կինն ալ Գերմանուհի էր, բայց խոր սիրով կապուած էր ոչ միայն Սեւակին, այլ՝ Սեւակի հայկական ժառանգութեան, Սեւակ կը պասասխանէ.— Երբեմն մեռնիլ կայ, որ ձեր առաջարկած կեանքէն աւելի լաւ է: Եւ այսօրուան մեր բարոյական չափանիշները բաղդատելով կրնանք անդրադառնալ, թէ՝ հայկական բարոյականը ինչպիսի ճանապարհ կտրած է Սեւակի օրէն մինչեւ այսօր:

Ռուբէն Սեւակ, Սիամանթօ, Երուխան, Զօհրապ՝ դամբան չունեցան, և Տէր Զօրի մահատանը դարձաւ իրենց դամբանը: Դամբան չունեցաւ նաեւ Ռուբէն Սեւակը. բարեբախտաբար, գոնէ ունեցաւ թանգարան, իր ժառանգութիւնը պահպանող:

Ինծի համար ամէնէն հոգեխռով, ազնիւ ուխտագնացութիւններէն մէկն էր որ անմոռանալի պիտի մնայ իմ կեանքիս մէջ, երբ իր պատմական ժառանգորդ Պրն. Յովհաննէս Զիլինկիրեան օր մը հանդիպեցաւ ինծի Մարսէյլի մէջ և իմ ձեռքս բռնելով ուխտի առաջնորդեց Ռուբէն

Սեւակի թանգարան, ուր այդտեղ ծանօթացանք Ռուբէն Սեւակի ժառանգութեան և մասունքներուն, ինչպէս նաեւ առիթը ունեցանք հոգեչահ զրոյց ունենալ իր հարազատ դստեր՝ Շամիրամի հետ:

Եւ ինչպէս այստեղ յիշուեցաւ, որ Ռուբէն Սեւակի կինը վրէժխնդրութեամբ լեցուած գերմանական դեսպանատան և անոր ետին կանգնող պետութեան, որ մասնակից էր Օսմանեան կայսրութեան գործած եղեռնին, այդտեղ ինծի վկայութիւնը տրուեցաւ այն ինչ որ մեր սիրելի բարեկամը յայտարարեց՝ Ռուբէն Սեւակի որդին զինուորագրուելով ֆրանսական բանակին մէջ, իր հօր վրէժը լուծած է գերմանացիներէն Բ. Համաշխարհային պատերազմին:

Նոյն վրէժի ազնիւ զգացումով ապրած և մահացած է իր կինը, շատ թանկագին և հարազատ կինը:

Ես չեմ ուզեր երկարել որովհետեւ այնքան մասնագիտական ներկայացումներ կատարուեցան Ռուբէն Սեւակի կեանքի մասին, միայն պիտի ուզէի որ կարդացուէր և տարածուէր Ալեքսանդր Թօփչեանի կոթողային վէպը որ կերպով մը լրացումն է Ռուբէն Սեւակի կէս մնացած կեանքին, ուր նաեւ այդտեղ ահաւոր կերպով կը նկարագրուի նահատակութեան այդ իրապաշտ պատկերները: Թուրքերը այնպիսի բարբարոսութեամբ, քստմնելի կերպով, տանջահար սպաննած են, նոյն վայրին մէջ, Զանղըրըի մէջ Դ. Վարուժանը և Ռ. Սեւակը, որ կարծես թէ գրողին, արուեստագէտին երեւակայութեան տեղ չեն ձգած:

Եւ ես, վերադառնալով Պրն. Չիլինկիրեանին կազմած թանգարանին, այդտեղ մտքիս մէջ քանդակուած է ուրիշ պատկեր մը: Այդ դարակներէն մէկուն մէջ, կար չբացուած նամակ մը: Պրն. Թօփչեանի վէպին վերջին էջին

վրայ ալ կը գտնեք յիշատակութիւնը այդ նամակին, որ գրուած էր Ռուբէն Սեւակի տիկնոջ կողմէ և իր ամուսնոյն ղրկուած Զանղրրը, և Թուրքական-օսմանեան փոստատարութիւնը կնքած է վրան ըսելով «Մեկնած է՝ առանց հասցէ թողելու»:

Շատ բնական է, որ Թուրքերը պիտի չգիտնային Ռուբէն Սեւակի երկրային հասցէն, որովհետեւ անոր հասցէն հայ գրականութեան անմահ գանձարանն է:

* * *

Մեզի համար անակնկալ մ'եղաւ ասմունքող Աննա Հէքէքեանի կատարումը:

Ան ներկայացուց նախ՝ բանաստեղծ Ռուբէն Սեւակը, իսկ յետոյ՝ շատ յաջող մեկնաբանութեամբ ասմունքեց Ռ. Սեւակի հետեւեալ բանաստեղծութիւնները՝

1.– Պիտի սպասեմ, 2.– Հոգիս, 3.– Պզտիկ սիրտդ:

Այստեղ կը հրատարակենք Աննա Հէքէքեանի նախքան ասմունքելը՝ Ռուբէն Սեւակը ներկայացնող իր ելոյթը:

ԱՆՆԱ ՀԷՔԷՔԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Բարի երեկոյ:

Ռուբէն Սեւակէ երեք փոքրիկ բանաստեղծութիւններ ներկայացնելով, ուզում եմ իմ համակարծութիւնը [եթէ կարելի է այդպէս ասել] յայտնել Պրն. Թօփչեանի ասածին վերաբերեալ, որ երիտասարդները այսօր քիչ գիտեն, բաւարար չեն սիրում, ճանաչում պարզապէս Ռ. Սեւակին, և դրա համար չեն էլ ուղղորդւում իրենով: Դրանում մեծ

մեղք ունեն իմ կարծիքով, հանրային բոլոր տեսակի հեռուստատեսութիւն և ռատիո, որոնք քիչ են հաղորդում այդ տեսակի բանաստեղծութիւններ մեր մեծերի ստեղծագործութիւններից:

Ի տարբերութիւն դրան՝ մեր ռատիոյի ֆոնդում պահպանուած են և ժամանակ առ ժամանակ հեռարձակւում են շատ գեղեցիկ կատարումներ ե՛ւ Խաչիկ Նազարէթեանի ե՛ւ Վերա Յակոբեանի: Եւ մենք ունենք 30 րոպէ Անահիտ Թօփչեանի կատարմամբ մեր ֆոնդում, և ժամանակ առ ժամանակ հեռարձակում ենք այդ բանաստեղծութիւնները: Եւ կարծում եմ, որ նրանք, ովքեր լսել են այդ հաղորդումները՝ նրանք իսկապէս չեն կարող չսիրել Ռ. Սեւակին:

Կը կարդամ 3 փոքրիկ բանաստեղծութիւններ, որոնց ժամանակին իրենց քննութիւնների համար ընտրել էին իմ ուսանողները, որոնք իսկապէս այդ բանաստեղծութիւնները շատ սիրում են»:

ՊԻՏԻ ՍՊԱՍԵՄ...

Սարերի վերով գնաց, եար, եար:

Երե՛ք տարի: Դեռ կը սպասե՛մ ես իրեն:
Ահա տարտամ հորիզոններն հեռաւոր,
Ահա ճամբան որ կ'երկարի տրտմօրէն,
Լռիկ ճամբան որ զայն տարա՛ւ մենաւոր:

Ու ահա հո՛ն գիւղին վերջին տունը ցած՝
Որուն ետին՝ եղեւինի ծառին քով.
Երկա՜ր, երկա՜ր ես մնացի քարացած
Ու իր մեկնի՛լը դիտեցի արցունքով:

Երե՜ք տարի: Այս հէգ ճամբուն եզրն ի վար
Երե՜ք անգամ ծընան մարգերը դաշտին,
Երե՜ք անգամ ձիւնի փաթիլն հողմնավար
Անձայն հիւսեց անոնց պատանքը ցրտին:

Յուսա՜լ, յուսա՜լ վերադարձի օրերուն,
Բայց ո՞վ իրեն պիտի երթար պատմելու
Թէ երկրի մութ մէկ անկիւնին մէջ հեռուն,
Ես կը սպասե՜մ իրեն՝ սիրոյս իմ հըլու:

Երե՜ք տարի: Մութ ձայն մը կայ անդադրում,
Իմ վիրաւոր հոգւոյս մէջ չա՛ր ձայն մը կայ,
Լացո՜ղ ձայն մը որ գիշերիս մէջ տրտում
Կ'ըսէ ինձ. «Խե՜ղճ աղջիկ, ան չի պիտի գայ...»:

Ակ, կը ճանչնամ քու բողոքի ձայնըդ, Վի՛շտ,
Սակայն ի զո՜ւր, ա՛յս է իմ գիրը՛ս նըսեմ,
Գնա՛ պատմել Տարիներուն թէ ես միշտ
Պիտի սպասեմ, պիտի սպասեմ, սպասե՜մ...:

[1908]

ՊԶՏԻԿ ՍԻՐՏԸԴ

Ես մերթ կը խորհիմ թէ աստղերն ի՞նչ են,
Սիրող աչերու պէս քաղցր ու ջինջ են.
Ու ամպերն ի՞նչ են, ու Աստուած ո՞վ է
Նախանիւթն առջին մարմի՞ն է, հո՞վ է...:

Ու չէ՞ կարելի մեծ տիեզերքին
Մըտովի հասնիլ օր մը եզերքին.
Ու Անհունութիւնն իրաւ անհո՞ւն է,
Ու Անմահութի՛ւնը լոկ անո՞ւն է...:

Յիմար եմ որ այսպէս խոր կը խորհիմ,
Ես որ չի գիտցայ դեռ, պաչտելիդ իմ,
Ինչո՞ւ օր մը գիս սիրով սիրեցիր,
Թէ կը սիրէիր՝ ինչո՞ւ լքեցիր...:

Զկրցայ ճանչընալ պզտըլիկ սիրտըդ,
Իմ մէկ ափիս մէջ փչրելիք սիրտըդ,
Բայց դեռ կը խորհիմ՝ երազիս մէջէն՝
Թէ աստղերն ի՞նչ են... Սիրոյ պէս ջի՞նջ են...»:

ՋՈՒԼԻԱ ՂԱԶԱՐԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

* * *

Վերջին ելոյթը՝ Ռ. Սեւակի անուան դպրոցի տնօրէնուհի՝ Ճուլիա Ղազարեանինն էր:

Ան խօսեցաւ Ռուբէն Սեւակի անունը կրող կրթարանին առաքելութեան մասին: Եւ պատմեց Ռուբէն Սեւակի յիշատակը վառ պահելու համար տարուած աշխատանքները, որոնք ուշագրաւ են:

Յարգարժան Տիկնայք և Պարոնայք.

Ողջունում եմ բոլորիդ. և յայտնում խորին շնորհակալութիւն, այս շատ կարեւոր միջոցառմանը գտնուելու համար, և ներկայացնելով Ռուբէն Սեւակի անուան դպրոցը:

Ռուբէն Սեւակի՝ մեծ մտածողի ու հերոս բանաստեղծի կերպարը իր վերածնունդը ապրեց մեր՝ հայոց հանրապետութեան մայրաքաղաքում, ուր նա ունեցաւ իր Տունը: Նրա անունով կոչուեց մեր Կրթօճախը, և յաւերժական Մասիսների դիմաց յառնեց Ռուբէն Սեւակի կիսանդրին:

Դպրոցի մանկավարժական խորհուրդի և յատկապէս հայոց լեզուի և գրականութեան յանձնախումբի փութաջան և ստեղծագործական աշխատանքի շնորհիւ, սկսուեց Ռուբէն Սեւակի յաղթարշաւը:

15 տարիների ընթացքում, Ռուբէն Սեւակը ուսումնասիրուել է բազմակողմանիօրէն: Այս դահլիճում ներկայ եղողներէն շատերը կարող են փաստել այդ մեծաթիւ, բովանդակալից միջոցառումների մասին, որոնք տեղի են ունեցել մեր դպրոցում — Գրական ու երաժշտական ցերեկոյթներ, բեմականացումներ, ստեղծագործական մրցոյթներ, ասմունքի, շարադրութիւնների, գեղանկարչա-

կան ձեռնարկներ, գրքերի չնորհահանդէս, համերգներ, Սփիւռքի և Հայրենի գրողների հրատարակութիւններու նուիրուած հանդէսներ:

Նշենք, որ այդ միջոցառումներին մասնակցել են մայրաքաղաքի տարբեր դպրոցների աշակերտներ: Շատեր արժանացել են մրցանակների: Ժիւրիի կազմում ընդգրկուել են գրականութեան և արուեստի նշանաւոր գործիչներ:

Կիսանդրու բացման արարողութեան ժամանակ մեզ հետ էր բանաստեղծի դուստրը՝ ութսունամեայ Շամիրամ Սեւակը որը անհաւատալիօրէն գեղեցիկ է ու հմայիչ այդ հասակում, և այդքան տարուայ բաժանումից յետոյ, Հայրենի հողում գրկախառնուեցին երեսնամեայ գեղեցկադէմ հայրը և ալեզարդ դարձած ութսունամեայ դուստրը:

Շամիրամը որ այսօր էլ կենսունակ է և բացառիկ, իր մէջ է կրում հօրը չապրած տարիները: Նա յաճախ է այցելում մեր դպրոցը, որին անուանում է՝ իր հայրական օճախը:

2000 թուականին՝ Ռուբէն Սեւակի ծննդեան այդ օրը նշուեց նաեւ Գրողների Միութեան դահլիճում, որտեղ ներկայ էին Տիկ. Շամիրամը և բազմաթիւ գրողներ:

Աւանդոյթ է դարձել՝ Ապրիլեան օրերին կազմակերպել Սեւակեան Շաբաթներ և այցելութիւն՝ Ծիծեռնակաբերդ:

Մենք խնդիր ենք դրել ոչ միայն մեր սաների առջեւ բացել Ռուբէն Սեւակի պոէզիայի աշխարհը, ոչ միայն ծանօթացնել նրա նամակներին, ուր երեւում է հզօր անհատի մտածողութեան խորութիւնը, այլ նաեւ մեծ մտածողին, որ հերոսական իր կեցուածքով եղել է արժանապատիւ հայ: Մենք խնդիր ենք դրել նաեւ՝ ապրող սերունդին ծանօթացնել Հերոս Պոէտը, ազգայնականը, դաս-

տիարակել նոր սերունդները ճշմարիտ հայրենասիրութեամբ և հայասիրութեամբ:

Ամէն տարի, մեր դպրոցը աւարտող 65–70 շրջանաւարտներ, կեանք են մտնում, ուսանող դառնում, իրենց հետ տանելով Սեւակեան հայրենասիրական ոգին և գաղափարները: Եւ տարեց տարի, Ռուբէն Սեւակի յաղթարշաւը տարածւում է ու տարածւում:

Բայց, խօսելով Ռուբէն Սեւակի մասին, ես չեմ կարող չնշել որ այս 15 տարիների ընթացքում, հեռուից-հեռու մեր գործերին հետեւեց, մեզ սատարեց, մեր յաջողութիւններով ուրախացել է ամենամեծ Սեւակագէտ, Սեւակապաշտ, հրապարակախօս, պատմաբան, քաղաքագէտ, մեր շատ սիրելի Յովհաննէս Զիլինկիրեանը որ երէկ, առաջին անգամ եղաւ մեր կրթօճախում, և որին ներկայութիւնը վայելում ենք այս պահին բոլորս:

Յովհաննէս Զիլինկիրեանի շնորհիւ, մեր դպրոցը այսօր գտնւում է բարեկարգ վիճակում: Մենք միշտ վայելել ենք նրա աջակցութիւնը և, օգտուելով առիթից, ուզում եմ, մանկավարժական կոլեկտիւի, աշակերտութեան և ծնողական համայնքի անունից, մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Պրն. Զիլինկիրեանին:

Մեծարգոյ Պրն. Յովհաննէս Զիլինկիրեան. այսօր դուք Սփիւռքի ամենաճանաչուած մտաւորականներից էք, որի խօսքն ու գործը միշտ միաձոյլ են եղել: Դուք, Ռուբէն Սեւակի ազգային և հայրենասիրական գաղափարների, նաեւ մեր պատմական յիշողութեան կրողն էք:

Նորովի ոգեկոչեցիք Ռուբէն Սեւակի անմահ հոգին: Այդ ոգին արդէն յաւերժ ապրելու է իր հայրենիքում: Ուր կայ և գործում է Իր անունը կրող կրթօճախը:

Դուք, Սփիւռքում, հայ մնացիք, և հարազատ ժողո-

վուրդի ցաւն կրեցիք ձեր հոգում: Հաւատարիմ մնացիք ձեր արմատներին: Մնացիք և կաք Մայր Հայաստանի Մեծ Զաւակը: Հաւատացիք, որ վաղ թէ ուշ, պիտի յաղթանակեն Արդարն ու Ճշմարիտը:

Մենք այն երջանիկներից ենք, որ բախտը ունեցանք վայելելու ձեր բարեկամութիւնն ու հովանաւորութիւնը: Դուք ձեր ազգային-հայրենասիրական բուռն գործունէութեամբ, շատերի համար Ազգին ծառայելու օրինակ էք, որ միշտ կանխատեսում է իրադարձութիւնները և ճիշդ եզրայանգումներ անում: Դուք, ձեր մէջ կրեցիք, Ռուբէն Սեւակի երազը, և այդ երազը աւանդում էք սերունդներին:

Անհանգիստ, որոնող և պրպտող էք եղել ողջ կեանքում: Ապրել էք այրուելով ու լոյս տալով, կատարելով հայրենասէր ձեր մտաւորականի ամէնօրեայ ձեր աշխատանքը, որի համար մեր մեծագոյն խոնարհումը ձեզ:

Ապրենք, միշտ յիշելով Ռուբէն Սեւակին, սովորելով նրանից, նրանով իսկ ապրեցնելով նրան, Մեծ Նահատակին: Ընդհանրապէս մեծագոյն մխիթարութիւնն է սա, որ կեանք են առնում մեր մեծերի երազները: Վկան՝ մեր նորանկախ Հայրենիքը և դրա կանանչ շիւերը որ հնչեցնում են ընկածների խօսքը՝ թող յաւերժ ապրի Հայաստան Աշխարհ, և դրա հովանու տակ կեանք առնեն մեր յոյսերն ու երազները:

* * *

«ՀՈՒՍԿ ԲԱՆՔ»

Հանդիսութեան աւարտին՝ խօսնակը բեմ հրաւիրեց մեզ, որ մենք ալ արտայայտուինք «Օրուան» մասին:

... Նախ՝ շնորհակալութիւն յայտնեցինք ներկաներուն:

Յետոյ, մեզի սրտի ցաւ եղած ու մնացող հարցի մը մասին արտայայտուեցանք:

Դառնութեամբ ըսինք՝ Հայերը չէին հասկցած Ռուբէն Սեւակին արժէքը: Մինչդեռ Ռուբէնին այսպէս կոչուած՝ ներկայացուցած «Վտանգ»ը շատ լաւ ըմբռնած ոճրապարտ ազգ մը կար՝ Թուրքերը:

Այստեղ կը հրատարակենք՝ 5 Մայիս 2009-թ.ին, Երեւանի Թէքէեան Մշակութային Միութեան սրահին մէջ, Ռուբէն Սեւակի յիշատակին նուիրուած հանդիսութեան «Իբր եզրափակիչ խօսք»՝ մեր ունեցած ելոյթը:

Խօսնակը՝

ԻՍԿ ԱՅԺՄ, ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ՝ ԽՕՍՔԸ ՏՐԻՈՒՄ Է ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ

ԵՂԲՕՐՈՐԴԻՈՅՆ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՁԻԼԻՆԿԻՐԵԱՆԻՆ

Ուրեմն նախ՝ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Վահան Թէքէեան Մշակութային Միութեան Ատենապետ՝ Ռուբէն Միրզախանեանին: Նաեւ, սա պահուս, այստեղ, բացառիկ ներկայութեանը համար մեր՝ Հայաստանի առաջնակարգ ղեկավարներէն Պրն. Վլատիմիր Մովսիսեանին:

Կ'ուզեմ մեր շնորհակալութիւնը յայտնել մեր բարեկամ Երուանդ Ազատեանին և բոլոր ներկաներուն, Պրն. Գագիկ Աբրահամեանին... Երիտասարդներուն՝ մանաւանդ, որ մեր ապագան են, յոյսն են ամբողջ հայութեան:

Ես պիտի չկրնամ աւելի արտայայտուիլ Ռուբէն Սեւակի մասին, և սա՝ հասկնալի պատճառներով... միայն բան մը կ'ուզէի ըսել... եթէ թոյլատրէք...

Հասկցողներ կայի՛ն իր կարողութիւնը, և դեռ՝ 1915 թուականին, երբ որ իր Գերմանացի կինը՝ Եաննի Սեւակ կը դիմէ օրուան թուրք ղեկավարներուն որ ազատեն իր ամուսինը, նաեւ՝ Վանկէնհայմին և մնացեալներուն որոնք այդ շրջանին տէրն էին Օսման. կայսրութեան, թուրքերը և մանաւանդ այնատենուան ճիւաղ ոստիկանապետը՝ Պետրի Պէյը կ'ըսէ [Այս վկայութիւնը նշուած է Յովհաննէս Լեփսիուսի գիրքին մէջ, առնուած՝ Գերմանական աղբիւրներէ, և ստորագրուած՝ Ֆրայհէր Վօն Նէոյրաթի կողմէ, որ այն ատեն Պոլսոյ Գերմանական դեսպանատան — նկատել՝ որ այդ ատեն Պոլիսն էր Թուրքիոյ մայրաքաղաքը — առաջնակարգ պաշտօնեաներէն էր, ուրեմն՝ Ի՞նչ կ'ըսէր Պեռլին, վարչապետութեան յղուած գրութիւնը]:

Անոր մէջ կը խօսուի դիմումին մասին Ռուբէն Սեւակի կնոջ, և այս նամակին մէջ որ ստորագրուած էր Նէոյրաթի կողմէ, կար սա հոչակաւոր նախադասութիւնը. «Ռուբէն Սեւակ կը նկատուի մէկը այն մտաւորականներէն, որոնց համայնքներու վրայ ունեցած մեծ ազդեցութենէն կը վախցուի»: Եւ այս տեսակէտով ես կ'ըսեմ, որ Ռուբէն Սեւակը ամենաչատ գնահատողը և հասկցողը ո՛չ թէ հայերը, այլ՝ թուրքերն էին:

Ուրեմն... այստեղ ուրիշ գիրք մը կայ... չեմ գիտեր, չա-

տերուն ծանօթ է թէ անծանօթ... այս գիրքը ինծի նուիրեց, աւելի ճիշդ՝ պատճէնը ունեցայ Պրն. Ալեքսանդր Թօփչեանի շնորհիւ, որ ատենօք Ժիրայր Պետրոսեանի կողմէ յայտնուած էր. չէի գիտեր մինչ այդ...

Այս գիրքը, չեմ գիտեր... ինչպէս պիտի կրնամ բացատրել... Թրքական գիրք է ասիկա... Թրքական «Կապոյտ գիրք»ն է. ինչպէս կ'ըսեն՝ չակերտի մէջ... «Թրքական Կապոյտ գիրք» մը: Ասիկա՝ Թուրքերը, արդարացնելու համար իրենց կատարած մեծ ոճիրը... հրատարակած են 1917-թ.ին, Կոստանդնուպոլսոյ մէջ: Նախ՝ արաբատառ Թրքերէնով. իսկ ժամանակ մը յետոյ՝ ֆրանսերէն լեզուով: Եւ այս գիրքը ֆրանսերէն է, դուք կրնաք նայիլ: Ուրեմն, այս գիրքին մէջ կան այն խօսքերը, այն վկայութիւնները որ մինչեւ հիմա կը կրկնեն Թուրքերը Թէ՝ մենք՝ հայերս ջարդած ենք Թուրքերը, և ոչ Թէ ասոր հակառակն է ճիշդը:

Ուրեմն՝ այստեղ, [այս գիրքը գրեթէ 600 էջ է] գիրքին մէջ կան նկարներ՝ հնչակեաններու, դաշնակցականներու, ուրիշ շատ հերոսներու շատ նկարներ... կան նաեւ... գրութիւններ, հայերէնէ թարգմանուած ֆրանսերէնի: Բայց կայ միակ բանաստեղծութիւն մը, և այս բանաստեղծութիւնը ո՛չ Դանիէլ Վարուժանէն է՝ աստուածացուած հայոց կողմէ... և ո՛չ ալ Սիամանթոյէն է՝ պաշտուած կրկին հայոց կողմէ... այս՝ թէպէտ անանուն քերթուած մը՝ բայց որուն Ռուբէն Սեւակի պատկանելուն դոյզն կասկած չկայ, որովհետեւ այդ՝ Ռուբէն Սեւակի «Վերջին Օրօր» բանաստեղծութիւնն է: Կը խնդրեմ, որ Տիկ. Թօփչեան կարդայ այս բանաստեղծութիւնը, եթէ կարելի է... թէ ոչ՝ խնդիր չէ...»:

Եւ ասիկա... Ռուբէն Սեւակի առաջին քերթուածն է, որ թարգմանուած է ֆրանսերէնի, թուրքերուն կողմէ... Հայ քերթողի մը օտար լեզուի թարգմանուած մէկ բանաստեղծութիւնը... այո՛ թուրքերուն կողմէ:

[Տիկ. Թօփչեան կ՚արտասանէ]

ՎԵՐՋԻՆ ՕՐՕՐ

Օրո՜ր, օրո՜ր...: Օրո՜ր ըսեմ քնանաս,
Վիրաւոր հօ՛րդ ճիչերն ա՛լ չ՚իմանաս:
Ծիծէս ծրծա՛ծրդ թոյն է, կաթ չի գիտնաս...
Օրո՜ր ըսեմ քնանաս:

Արիւն-հեղեղ, յորդեց այս սուրբ ձորերէ,
Բայց չի փախի՛ս, փարէ՛ երկրիդ, զայն սիրէ՛,
Հողիդ վրայ գերի մի՚ըլլար, այլ՝ տիրէ՛...:
Օրո՜ր ըսեմ քնանաս:

Հօրդ վրայ եթէ անչո՛ւնչ չինկայ ես,
Զի ուստե՛ցի Հրոմի է՛գ գայլին պէս,
Նոր Ռոմուլոս մը դիեցնել ստինքէս...:
Օրո՜ր ըսեմ քնանաս:

Բազուկներուս՝ պարա՜ն, ոտքիս ալ՝ կացի՜ն,
Ստինքիս զո՜յգ պտուկներն, ա՛հ, կտրեցին:
Վէրքէս՝ արիւնը ծծէ, որդեակ միածին...:
Օրո՜ր ըսեմ քնանաս:

Ահա՛ կ՚իյնա՜մ...: Հայաստանը մա՜յր քեզի:
Կտակ կուտամ այս կոտրած Սուրն Երկսայրի՝
Ուր Հայրիկիդ դեռ տաք արիւնը կ՚այրի...:
Օրո՜ր ըսեմ քնանաս:

... Ուրեմն այս բանաստեղծութիւնն է որ գնահատած են թուրքերը և հասկցած են Ռուբէն Սեւակին այսպէս կոչուած ներկայացուցած «Վտանգ»ը: Ասոր համար է, որ նահատակեցին Ռուբէն Սեւակը:

Կա՛յ ուրիշ պարագայ մը՝ չեմ գիտեր, թէ ասիկա [ցոյց տալով գիրքը] ծանո՞թ է ձեզի: Թանէր Աքչամի հեղինակութիւնը եղող գիրք մըն է: Թանէր Հայութեան ի նպաստ որոշ դրական աշխատանք տարած է, Վահագն Տատրեանի հետ գործակցաբար:

Ուրեմն... Թանէր Աքչամի գիրքին անունը սա է՝ «Էրմէնի Մեսելեսի Հալ Օլմուշ Տուր» — «Հայկական Դատը Լուծուած է»: Ինչու չակերտի մէջ առնուած է «Դատը Լուծուած է»ն: Որովհետեւ Թալաաթը Մեծ Եղեռնէն՝ 24 Ապրիլէն յետոյ, հպարտութեամբ կը յայտարարէ.— «Հայկական» հարցը, դարեր շարունակ, սուլթանները չկրցան լուծել... բայց ես լուծեցի զայն երկու ամիսէն»:

Այս գիրքին ամբողջ պատմութիւնը այս խօսքին վրայ հիմնուած է:

Բայց ուրիշ պարագայ մը կայ, կրկին Ռուբէն Սեւակի հետ առնչուած:

Լա՛ւ գիտէք, թէ թրքական արխիւներուն մօտենալ և անոնց պարունակին ծանօթանալ անկարելի է:

Այս մարդը — գրողը ծանօթացած է այդ արխիւներուն:

Եւ ստուգած է թէ՝ այն ոճրագործները որոնք Ռուբէն Սեւակն ու Դանիէլ Վարուժանը սպաննած էին և որոնց համար Կարօ Գէորգեան 1960-ական թ.ներուն իր գիրքին մէջ գրած էր ըսելով, որ այդ դահիճները յետոյ պատժուած-սպաննուած են Զանղըրիի տեղական իշխանութեան պատասխանատուին կողմէ — իր այս վարկածը

սոյն գիրքով կը հերքուի: Աքչամի գիրքը կը վկայէ, որ ոճրագործները չեն սպաննուած: Իրողութիւնը բոլորովին ասոր հակառակն է: Որովհետեւ այդ մարդոց հրաման տուողը Թալաաթն է, ինք անձնապէս զբաղած է Ռուբէն Սեւակի սպանութեամբ: Եւ այդ ոճրագործները ազատ արձակուած են Թալաաթի միջոցաւ: Ողջ մնացած են և դրկուած Սուրիական ճակատը [Ա. Աչխարհամարտին]: Հոն դրկուած են կրկին՝ Թալաաթի հրամանով: Ուրեմն, Ռուբէն Սեւակի արժէքը գնահատողը ոչ թէ հայերը, այլ Թալաաթը եղած է:

... Վերջապէս՝ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Պրն. Վլատիմիր Կիրակոսեանին, որ 1978-ին երբ հոս եկայ ես, ուրախութիւնը ունեցայ ծանօթանալու իրեն, որ հրատարակած է Ռուբէն Սեւակի մասին գիրք մը:

1983ին ժնեւի մէջ ծանօթացայ Ալեքսանդր Թոփչեանին եւ իրմէ խնդրեցի Ռուբէն Սեւակի ամբողջական գործերը հրատարակէ:

Եւ 1985ին Ալեքսանդր Թոփչեանը հրատարակեց «Ռուբէն Սեւակի երկերը» գիրքը, որը կը պարունակէ Ռուբէն Սեւակի ամբողջական գործերը:

Եւ ձեզի պիտի յանձնարարեմ 1987-ին, Երեւանի Հեռատեսիլէն ցուցադրուած Ռուբէն Սեւակի պատմութիւնը ցոյց տուող տեսաերիզը որ ես դիտելու առիթը ունեցայ — չեմ գիտեր՝ եթէ ձեր մէջէն զայն դիտող եղաւ, բայց պիտի յանձնարարէի, որ այդ երիզը դիտելու առիթը ունենաք:

Ուրեմն, վերջին խօսք ըլլալով՝ ձեզի շնորհակալութիւն կը յայտնեմ ձեր ներկայութեան և համբերատար ունկնդրութեան համար:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԵՆԷՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զրոյց «Հրաչեայ Աճառեան» համալսարանի ուսանողութեան հետ

Մայիս 2009-ին, Երեւանի Հրաչեայ Աճառեանի անուան համալսարանի լսարանին մէջ մեր կատարած ելոյթին վերջաւորութեան, աշակերտուհի մը մեզի անսպասելի հարցում մը ուղղեց՝ ***«Ի՞նչ կը մտածէք Թրքական սահմանին բացման մասին»:***

Մեր պատասխանը հետեւեալը եղաւ.— ***Հայ Ազգը, Թուրքերուն հետ իր հարցերը չէ լուծած: Թուրքերուն հետ պատերազմի վիճակի մէջ է: Եւ պատերազմական վիճակի մէջ, սահմանի բացմանը մասին խօսիլը անհեթեթ է:***

ՎԼԱՏԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ.— Ուզում եմ ներկայացնել Յովհաննէս Զիլինկիրեանը որ մեր Սփիւռքի նշանաւոր ազգային, գրական և հասարակական գործիչ է, պատմաբան է: Նրա աչքից չի վրիպում մեր ժողովուրդի ոչ մի խնդիր: Նա պատրաստ արձագանգում է մեր ժողովուրդի թշնամիների ամէն մի սադրիչ վերագրումի: Նա միշտ պատրաստ է հակահարուած տալու բոլոր չարախօսութիւններին: Նա ուժգին հակադարձում է հայ ժողովուրդի դէմ գործուած ցեղասպանութիւնը ուրացողներին:

Դուք պատկերացնո՞ւմ էք: Թուրքիայում ինչքան

խոշոր լրագրեր են լոյս տեսնում, ինչքան գրքեր են լոյս ընծայւում, որտեղ ժխտւում է Հայոց ցեղասպանութիւնը: Ոչ միայն ժխտւում է, այլեւ՝ աւելի հայերին են մեղադրում թէ՝ թուրքերը չեն ոչնչացրել հայերին, այլ՝ հակառակն է: Այս կարգի ամէն մի սադրանքի ճիշդ և ուժգին պատասխանելը յաղթանակ է: Ուզում եմ ողջունել նրան և իր հետ Պրն. Աւագեանին... և հիմա ես հաճոյքով հրաւիրում եմ Ընկ. Չիլինկիրեանին որ իր խօսքը ասի ներկաներուն: Դուք եւս, եթէ ունէք հարցեր, յետոյ կը ներկայացնէք որ նա պատասխանի: Խնդրեմ...:

Յ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ.– Այստեղ, բոլորիդ առջեւ խօսիլը մեծ հաճոյք է ինծի համար: Գիտեմ որ դուք, բոլորդ երիտասարդներ՝ շատ հարցեր ունիք... դժուար է կեանքը... և ուրեմն, եթէ կը փափաքիք... կ'ուզեմ Ռուբէն Սեւակի մասին արտայայտուիլ:

Ուրեմն՝ Ռուբէն Սեւակ 1905-ին շրջանաւարտ ըլլալէ յետոյ, Պոլիսէն [Ստամպուլէն], Կոստանդնուպոլիսէն կը մեկնի Լօզան, Զուիցերիա: Այնտեղ՝ Զուիցերիա, բժշկական համալսարանի ուսանող է: Տարի մը յետոյ, այդ ուսանողական շրջանի սկիզբէն, բժշկական համալսարանի ուսանող կը դառնայ և կապ կը հաստատէ գերմանացի աղջկայ մը հետ [Գերմանիոյ Էրֆուրտ քաղաքէն] որ Գեղարուեստի դպրոց կը յաճախէ: Գերմանուհի մըն է: Եւ կը սիրահարին [բնական է] փոխադարձաբար: Եւ սիրահար զոյգը մէկ անձ կ'ըլլայ:

Հիմա, այս՝ մէկ կողմ ձգենք: Ուրեմն երբ Սեւակի հայրը այս մասին կ'իմանայ՝ կը դադրեցնէ դրամական յատկացումը իր տղուն և զայն ետ կը կանչէ: Այստեղ պարագայ մը կայ որ ցաւալի է ինծի համար – զայն նշելը այստեղ:

Ռուբէն Սեւակի մասին հրատարակուած գիրքերու մէջ նշուած է, թէ՝ դրամական այս յատկացումը դադրեցուած է Ռէթէոս Պէրպէրեանի [նշանաւոր Պէրպէրեան վարժարանի հիմնադիր], Պէրպէրեան և Ռ. Սեւակի հօր մահերով: Մինչդեռ Սեւակի հայրը այդ օրերուն չէ մահացած: Հայրը 1921-ին մահացած է, Պոլսոյ մէջ [չրջակայքը աւելի]: Ուրեմն՝ ծնողքը եղելութեան իրազեկ ըլլալով և դժգոհ՝ կ'ըսեն.— Մենք այլեւս զաւակ չունինք...» այսքան ծանր խօսքը: Եւ դժուարութեան կը մատնուի Ռուբէն Սեւակ: Դուք, բոլորդ, ուսանող էք, բոլորդ ապրած էք կամ կ'ապրիք այդ պայմանները: Եւ յաւելուած՝ ուրիշ պարագայ մը կայ... Ռ. Սեւակի կեանքի այդ չրջաններուն, նիւթականի յատկացումին դադրիլը կը զուգադիպի 1907-ի համաշխարհային տագնապին, նման՝ 1930-ի տագնապին, կամ՝ ինչպէս այսօր... և Ռ. Սեւակ մեծ դժուարութեան կը մատնուի, և այդ չրջանին ահռելի կը տառապի և դժուար տարիներ կ'անցընէ:

Մինչ այդ՝ երկրորդ պարագայ մը՝ տխուր էջ մը աւելի՝ երբ որ Գերմանացի աղջկան հայրն ու մայրը դպրոցի տնօրէնին կամ տնօրէնուհիին ճամբով կը տեղեկանան, որ իրենց աղջիկը կը կենակցի Արեւելքցի տղու հետ — հայ կամ թուրք՝ իրենց համար կարեւոր չէ այդ — անմիջապէս իրենց աղջիկը, Ռուբէն Սեւակին սիրահարը իրենց քաղաքը կը կանչեն: Եւ այդ օրէն կը սկսի մղձաւանջ մը երկու սիրահարներուն միջեւ: Սիրական զոյգին ապրումներուն, անոնց տառապանքին մասին, զայն նկարագրող նամականին կայ որ լոյս ընծայուած է Ալեքսանդր Թօփչեանի կողմէ: Բացառիկ թղթակցութիւն է ան երկկողմանի, սիրոյ արտայայտութիւններով զեղուն: Երիտասարդ-

ները աւելի կը հասկնան այս ըսածներս — և կը յանձնարարեմ որ կարդաք այդ նամակները — հոս՝ գրատները կը վաճառուի այդ նամականին: Բայց Ռուբէն Սեւակի համար պարզ սէր մը չէր իր զգացածը: Պիտի չկրնամ ըսել որ իրաւունք ունէր, բայց գիտէք, որ սէրը օրէնք չունի: Բոլորդ ալ երիտասարդ էք՝ գիտէք, թէ ինչ ըսել կ'ուզեմ: Եւ հակառակ հօրը նիւթական յատկացումին դադրեցման, հակառակ բոլոր յորդորներուն և թելադրանք-խրատներուն, Ռուբէն կը շարունակէ իր կապը նամակներով, և յետոյ կ'երթայ Էրֆուրտ և իր սիրուհիին ընտանիքին կը ներկայանայ և անոր ծնողքին կ'ըսէ.— Ձեր դստեր հանդէպ ունեցածս հարեւանցի բան մը չէ. այլ՝ խոր կապ մըն է ունեցածս: Ձեմ ուզեր որ թոյլատրէք ինծի ամուսնանալ հիմա...», բայց, կ'աւելցնէ.— Արտօնեցէք ինծի որ ամուսնանամ ձեր դստեր հետ միայն այն ատեն, երբ բժշկական տիպլոմաս ունենամ»:

Եւ 1911-ին Ռուբէն Սեւակ կը ստանայ բժշկական տիտղոսը: Եւ ես ուրախութիւնը ունեցայ գտնելու Սեւակի բժշկական ուսումնառութեան աւարտաճառի թեզը Լոզանի մատենադարանին մէջ: Մինչեւ հիմա կը պահուի այդ թեզը այնտեղ, գրքոյկի ձեւով:

Հետաքրքրական պարագայ մը կայ: Ձէ՞ որ Ռուբէն Սեւակ խօսք տուած էր իր սիրուհիին ծնողաց, որ մինչեւ բժշկական վկայական ստանալը՝ ամուսնութիւն պիտի չկնքէ — ուստի իր բժշկական թեզ-գրքոյկին վրայ արձանագրած է ձօն մը որ կ'ըսէ, բնական է՝ ֆրանսերէնով.— Այս թեզը կը ձօնեմ իմ ընտանիքիս. իր ընտանիքը սիրականին հայրն ու մայրն են Ապէլ-ներուն: Եւ այս ձեւով Ռուբէն Սեւակի սիրուհիին հայրն ու մայրը կ'արտօնեն, որ

իրենց դուստրը ամուսնութիւն կնքէ իր սիրած երիտասարդին հետ:

Այդ սիպավէպին մէջ ուրիշ պարագայ մը կայ, հետաքրքրակա՞ն: Շա՛տ հետաքրքրական պարագայ մը, Ռուբէն Սեւակի սիրուհին որ Եաննի Ապէլ կը կոչուի. ուրիշ քոյր մը ունէր: Ան ալ կ՚ուսանէր Ժընեւի մէջ և կը կենակցէր ուրիշ երիտասարդի մը հետ որ, նոյնպէս՝ գերմանացի չէր: Ասոր ալ հայրն ու մայրը կ՚ընդդիմանան: Ջեն ուզեր որ իրենց դուստրը ամուսնութիւն կնքէ օտար տղու մը հետ: Բայց դժբախտութիւն մը կը պատահի — առանց ամուսնանալու զաւակ մը կ՚ունենայ քոյրը Ռ. Սեւակի ապագայ կնոջ: Այսինքն՝ ապօրինի զաւակ մը: Որով, երբ կը ներկայանայ Ռուբէն Սեւակի և Եաննի Ապէլի ամուսնութեան խնդիրը, կը կարծեմ որ ծնողքը, որպէսզի երկրորդ դժբախտութիւն մը կանխեն՝ կ՚ընդունին իրենց դստեր և Ռուբէն Սեւակի ամուսնութիւնը:

Կ՚ուզեմ նշել որ այն երիտասարդը որ Ռ. Սեւակի կնոջ քրոջ հետ կը կենակցէր՝ հրեայ մըն էր: Եւ այս հրեան յետոյ կ՚անհետանայ: Եւ աղջիկ-մայր իր զաւկին հետ կը մնայ ինչպէս որ էր:

Ուրեմն, Ռուբէն Սեւակի կեանքը այսպէս՝ տրամաթիկօրէն կը սկսի իր ուսանող եղած չրջանէն և կը շարունակուի մինչեւ իր նահատակութիւնը:

Եւ հիմա՝ պիտի չուզեմ երկարել խօսքս: Խօսիլը արծաթ է իսկ լռելը՝ ոսկի: Ես նկատած եմ որ շատ անգամ նախընտրելի է լռել կարգ մը պարագաներուն, քան՝ խօսիլը: Հիմա պիտի խնդրեմ ձեզնէ, որ դուք, եթէ Ռուբէն Սեւակի մասին տեղեկութիւն ունիք՝ հարց տաք, որ պատասխանեմ: Խնդրեմ: Այսպիսով պիտի տեղեկանամ Ռուբէն Սե-

ւակի մասին ձեր ունեցած ծանօթութեան չափանիշը: Եթէ կարելի է: Եթէ չէք գիտեր... վնաս չունի:

Վ. Պետրոսեան.— Մեր ուսանողները քիչ մը անակնկալի եկան...:

Յ. Զիլինկիրեան.— Հիմա, ե՛ս հարց տամ ձեզի [դիւրացնելու համար] Ռ. Սեւակի ուսանողութեան շրջանի, Պոլսոյ կեանքի մասին թէ նահատակութեան շրջանի մասին:

Նահատակ ըլլալը գիտէ՞ք:

Պատասխան.— 1915-ին, եղեռնի օրերին, Սիամանթոյի, Կոմիտասի, Դանիէլ Վարուժանի հետ քարկոծուելով Ռուբէն Սեւակ սպանուեց:

Յ. Զ.— Կոմիտաս չսպաննուեցաւ եւ վերադարձուեցաւ Պոլիս:

Ըսեմ նաեւ՝ որ Կոմիտաս եղած է մկրտութեան կնքահայրը Ռուբէնի զաւկին: Ռուբէն երկու զաւակ ունէր՝ Լեւոն ծնած էր Լօզան, իսկ Շամիրամը՝ Պոլիս: 24 ապրիլին 1915-ի Կոմիտաս, հայ ուրիշ մտաւորականներու հետ կ'աքսորուի դէպի Զանղերը կոչուած սպանդանոցը: Բայց Կոմիտաս ծանօթ էր շատ մը թուրք երեւելիներու, որոնց միջամտութեամբ աքսորէ կը վերադառնայ Պոլիս: Եւ այդ միջոցին Ռ. Սեւակ դեռ Պոլիս էր: Եւ Բանկալթիի եկեղեցիին մէջ մկրտութեան արարողութիւնը կը կատարուի և Կոմիտաս կ'ըլլայ կնքահայրը Սեւակի տղուն Լեւոնի: Կոմիտաս վարդապետ Գէորգեան: Գիտէ՞ք Կոմիտաս Վարդապետի ազգանունը: Ի՞նչ էր:

— Նրա անունը Կոմիտաս էր:

— Սողոմոնեան:

Յ. Զ.— Ո՞վ ըսաւ Սողոմոնեան. խնդրեմ... ոտքի ելէ... ճիշդ է ըսածը... շնորհակալութիւն:

Բայց իր մկրտութեան վկայագրին մէջ, Կոմիտասի ազգանունը Սողոմոնեան չէ գրուած, այլ՝ Գէորգեան։ Ուրեմն Կոմիտաս, Գէորգեան ճեմարանը ուսանած ըլլալուն համար, կամ հօրը անունը Գէորգ ըլլալուն պատճառով, Գէորգեան ստորագրած է։

Ուրեմն այսպէս... Ռուբէն Սեւակ իր զաւակները մկրտել տալէ երեք օր յետոյ կը ձերբակալուի և կ՚աքսորուի։ Այնպէս որ, Ռուբէն Սեւակ 24 Ապրիլին չէր ձերբակալուած, ինչպէս՝ հայ մտաւորականներ՝ Գրիգոր Զօհրապ, Վարդգէս և ուրիշներ... քանի որ ասոնք երեսփոխան էին խորհրդարանի մէջ։ Զօհրապ և Վարդգէս երկու ամիս յետոյ ձերբակալուեցան և աքսորուեցան դէպի Ատանա։ Նոյնպէս՝ Ռուբէն Սեւակ երկու ամիս ետք ձերբակալուեցաւ։ Թէեւ շատ մը հեղինակներ գրած են, որ Ռ. Սեւակ 24 Ապրիլին ձերբակալուեցաւ։

Գիշեր մը, երկու թուրք ոստիկաններ կը ներկայանան Սեւակի բնակարանը և կ՚ըսեն.

— Տօքթօր Պէյ, քեզ հիւանդի մը պիտի տանինք։ Եւ Ռուբէնը կ՚առնեն ու կը տանին։ Վերջին մեկնումը կ՚ըլլայ այդ։ Մնացեալը Եղեռնի պատմութիւնն է։

Կրկին երիտասարդական պատմութիւն է սա մէկը — կ՚ուզեմ որ տեղեակ ըլլաք։

Ռ. Սեւակ կ՚աքսորուի Զանղերը։

Զանղերի մէջ իր կեանքը մէկ ուրիշ ողբերգութիւն է։ Անոր մէկ մասը ջանամ պատմել ձեզի.

Ռ. Սեւակ իբր բժիշկ մեծ համբաւ կ՚ունենայ։ Ձեռքէ-ձեռք կը խլուի։ Ասոնք խօսք-ենթադրութիւններ չեն, վկաներու գրութիւնները կան։

Մինչ այդ՝ իր բուժածներէն մէկը երիտասարդուհի մըն է։

Աղջիկը կը բուժուի: Ճիշդ հոս է պարագան: Թուրք երեւելիի մը դուստրն է ան: Եւ բնութեան օրէնքով, երիտասարդուհին կը սիրահարի Ռուբէն Սեւակին: Աղջիկը իր զգացումին մասին կը խոստովանի իր հօր, որ չրջանի թուրք երեւելիներէն է ու գիտէ, թէ ինչ պիտի ըլլայ վախճանը Ռուբէնի և նմաններուն: Եւ կը յորդորէ Ռ. Սեւակին ըսելով.

— Դուք, բոլորդ, մահուան էք դատապարտուած: Բայց ես ունիմ ուժը, որպէս այստեղի պատասխանատու, քեզ ազատելու: Բայց՝ մէկ պայմանով — կ'իսլամանաս և կ'ամուսնանաս աղջկանս հետ: Պայմանը այս է:

Ռուբէն կը պատասխանէ.

— Ես ամուսնացած եմ. երկու զաւակ ունիմ.

— Վնաս չունի: Ատիկա կարեւոր չէ,— կը հակադարձէ թուրքը: Մինչ Սեւակ «Կը մտածեմ» — ըսելով կը հեռանայ: Կ'երթայ ընկերներուն մօտ: Կը պատմէ անոնց եղելութիւնը:

Բոլոր ընկերները կը յանձնարարեն իրեն.

— Առժամաբար ընդունէ թրքանալու և դաւանափոխութեան առաջարկը, և փրկէ կեանքդ:

Բայց Ռուբէն Սեւակ կը հակադարձէ անոնց.

— Թրքանալը նուաստանալ է: Եթէ մենք դաւաճանենք մեր Ազգին, հայ ժողովուրդը իր հաւատքը պիտի կորսընցնէ...:

Ռուբէն նախընտրեց մեռնիլ քան թրքանալ:

Այսպէս կ'աւարտի Ռուբէն Սեւակի ողբերգական կեանքը 26 Օգոստոս 1915-ին, Դանիէլ Վարուժանի և ուրիշ երեք ընկերներու հետ:

Այս է Ռուբէն Սեւակի պատմութիւնը, համառօտ կերպով ձեզի ներկայացուած:

Շնորհակալութիւն:

Եթէ հարցեր կան՝ տուէք»:

Ուսանողուհի մը.– Ռուբէն Սեւակ քանի՞ զաւակ ունէր.

Պ.– Ուրեմն, Ռ. Սեւակ երկու երախայ ունէր: Մէկը ծնած է 1912-ին Լօզան, Զուիցերիա: Անունը՝ Լեւոն: Յաւելուած՝ ուրիշ անուն մըն ալ ունէր Լեւոն – Վահագն Զիլինկիրեան: Լեւոն կ'ըսէին: Վահագնը չէին գործածեր: Այս մէկը լո՛կ անձնագրին մէջ գրուած էր:

Լեւոն անունը մեր՝ Ռուբինեան թագաւորներէն մէկուն կը պատկանի: Բայց այս պարագային՝ առնչութիւն չկայ:

Իր հայրը, Ռուբէն իր մանչ զաւակը այդպէս կոչած է ազգային զգացումէ մղուած: Ու նաեւ կը կարծեմ, որ Ռուբէնի մտերիմ ընկերներէն մէկը՝ գեղանկարիչ էր: Կը կոչուէր Լեւոն Ազնաւորեան: Հաւանաբար անոր անունով ուզած է անուանել իր մանչը: Լեւոն Ազնաւորեան իր՝ Ռուբէնի կերպարը նկարած է: Եւ այդ գեղանկարը այժմ կախուած է Երեւանի Գրականութեան թանգարանի տնօրէն Բախչինեանի աշխատասենեակին մէջ: Զայն դիտելու հաճոյքը ունեցած եմ:

Ռ. Սեւակ 1914-ին կը մեկնի Պոլիս, երբ կինը վեց ամիսով յղի էր: Ա. Աշխարհամարտէն մէկ կամ երկու ամիս առաջ: Եթէ մէկ ամիս ուշ ճամբայ ելած ըլլային, արդէն ճամբաները փակուած պիտի ըլլային. և Ռ. Սեւակի կեանքի գիծը բոլորովին ուրիշ ընթացք պիտի ունենար:

Ռ. Սեւակի երկրորդ զաւակը՝ Շամիրամ կը կոչուի: Աղջիկը Պոլիս ծնած է: Մկրտուած է Լեւոնի հետ միասին 1915-ի Յունիս 22-ին: Կնքահայրը եղած է Օսմանեան կայսրութեան թղթատարութեան այդ օրերու նախարար Ոսկան էֆէնտի Մարտիկեան:

Հարցում.— Ո՛վ և ինչպէս տէր եղաւ Ռ. Սեւակի գրական ժառանգութեան.—

Յ. Չ.— Ատիկա մէկ ուրիշ տխուր պատմութիւնն է Սեւակի: Արխիւը ուրիշ պատմութիւն է: Նկատելով որ Ռ. Սեւակ 1915-ի Յունիսի 23-ի գիշերը, իր բնակարանը ներկայացող գաղտնի ոստիկաններու կողմէ ձերբակալուելով կը տարուի: Եւ Սեպտ. 8-ին Պոլսոյ — այն ատեն Պոլիսն էր Թուրքիոյ մայրաքաղաքը — Գերմանական դեսպանատունէն կը տեղեկացնեն Տիկ. Չիլինկիրեանին, որ իր ամուսինը սպաննուած է: Զանղըրըի մէջ: Եւ այդ լուրը առնելէ անմիջապէս յետոյ Տիկ. Սեւակ իր երկու զաւակները կ'առնէ և գնացքով Զուիցերիա կը վերադառնայ: Եւ իր բնակարանը կը մնայ լքուած, միայնակ ու անապահով, պատերազմի ամբողջ ընթացքին:

Այդ շրջանին մեր հարազատները Սիլիվրի ըսուած գիւղը — Պոլսէն 70 քլ. մեթր դէպի Արեւմուտք — կ'ապրէին: Եւ արգիլուած գօտի էր Պոլիսը, պատերազմի պատճառաւ: Յետոյ մեր հորեղբայրը՝ Քերոբէ Չիլինկիրեանը՝ Ռուբէն Սեւակի աւագ եղբայրը, կը յաջողի երթալ Պոլիս ու ինչ որ կար Ռուբէնի լքուած տան մէջ՝ իր բնակարանը կը փոխադրէ:

Մինչ այդ ես, 1945—6-թ.ներուն, Ռուբէն Սեւակի պատկանող բոլոր իրերը, ինչ որ կար, մինչեւ յետին թուղթի կտորը հաւաքեցի և իմ տունը փոխադրեցի: Եւ այսօր ուրախութիւնը ունիմ ըսելու, որ Նիսի մէջ ստեղծուած Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մէջ կը գտնուին այդ մասունքները:

Այս մասին, եթէ կը թոյլատրէք՝ ուրիշ բան մը ըսելու ջանամ — ուրիշ դժբախտ պարագայ մը կայ: Ուրեմն, բոլոր

ընտանիքներու մէջ, լաւն ալ կայ, վատն ալ կայ — և այդ շրջանին մեր հօրեղբօր զաւակներէն մէկը կար, որ մեր ընտանիքին Անառակ Որդին էր: Ուրեմն այդ տղան, դրամի պահանջով Ռուբէն Սեւակի ձեռագիր տետրակները կը վաճառէ այն ատենուան Պոլսոյ Առաջնորդ մտաւորականներուն [բարեբախտաբար]: Անոնցմէ մէկուն անունը Թորոս Ազատեան էր, որուն կինը, մեծ Հայուհի մը՝ Թորոս Ազատեանի կտակը կ'իրագործէ. և այդ ձեռագիրները կը դրկէ այստեղի [Երեւանի] Գրականութեան Թանգարանը: Ուրեմն այս կերպով մեր այդ Անառակ Որդին, Հարազատը, փրկած է ձեւով մը այդ ժառանգը: Եթէ չծախէր այդ ձեռագիրները մէկու մը, արդեօք կրնայի՞նք փրկել զանոնք: Անոնք կրնային աղբանոց նետուիլ: Որով ան, երկու չարեաց փոքրագոյնը կատարած է, և ես կը նկատեմ, որ անոր ըրածը ոչ թէ չարագործութիւն, այլ բարեգործութիւն եղած է: Յետոյ՝ ուրիշ պարագայ մը՝ թոյլատրեցէք որ չարունակեմ՝ տարիներ յետոյ տեղեկացայ, որ Ռուբէն Սեւակէն ձեռագիրներ կան հեռաւոր Գանատայի մէջ, ընտանիքի մը մօտ: Եւ... կարճ պատմեմ... Գացի Թորոնթօ. այդ երկու տետրակները գտայ, բերի ու դրի «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն»ի մէջ: Անոնք Ռ. Սեւակի առաջին, երիտասարդութեան շրջանի գրութիւններն են: Եւ այդ երկու տետրակները հրատարակուած են 1980-թ.ներուն... շատ հետաքրքրական են այդ գրութիւնները, Ռ. Սեւակի հեղինակութիւնը կազմող: Ի՞նչ է գրուած հոն — 1905-թ.ին են գրուած այդ առաջին գրութիւնները: Այնտեղ սապէս գրած է Ռուբէն Սեւակ.— Ասոնք իմ առաջին գրութիւններն են, արձակ և ոտանաւոր: Առաջին թոթովումները իմ կեանքի. զուրկ որեւէ արժէքէ: Բայց՝ աւել-

ցուած է քովը.— Բայց կը փնտռուին օր մը»: Եւ ես, 80 տարի յետոյ, գացի և փնտռեցի զանոնք Թորոնթօ քաղաքին մէջ, Ռ. Սեւակի այդ մասունքները: Լաւ, ուրիշ հարցումներ եթէ... ունիք:

Հարցում.— Այդ ամէնից յետոյ, ցեղասպանութիւնից յետոյ, Հայ-Թրքական սահմանի բացման մասին ոնց էք վերաբերում:

Յ. Զ.— Ուրեմն՝ հայ ժողովուրդը այժմ, դեռ մինչեւ այսօր, Թուրքին հետ պատերազմի մէջ է: Իր հարցերը չէ լուծած: Դեռ պատերազմի մէջ է: Պատերազմի պայմաններու մէջ սահմանները պէտք է գոց մնան:

Վ. Պետրոսեան.— Բոլորս ձեզ հետ ենք...

Հարցում.— Պրն. Չիլինկիրեան. «Յիշատակի Տան Թանգարան»ի գործունէութեան մասին մի քիչ կարո՞ղ էք պատմել՝

Յ. Զ.— «Յիշատակի Տուն»ի մասին եթէ տեղեակ էք... ես Ընկ. Վ. Պետրոսեանին տուած եմ գրքոյկ մը, որմէ օրինակ մըն ալ հետս բերած եմ. որուն մէջ նշուած է այդ ամէնը: Ուրեմն՝ ան յարկաբաժին մըն է Ռուբէն Սեւակի «Յիշատակի Տուն»ի մէջ: Սուրբ տեղ մըն է ան ինծի համար: Թէեւ «Պոչ» չեն բռներ այնտեղ այցելելու համար: Հայութեան կեցուածքն է այդ, մանաւանդ Սփիւռքի: Ուրեմն, այդ թանգարանին մէջ կայ 200-ի հասնող գեղանկարներ, միայն հայ նկարիչներու պատկանող, զանազան չրջաններէ, և մանաւանդ՝ կայ Ռուբէն Սեւակի արխիւը, բոլոր այդ ձեռագիր գրութիւնները: Մանաւանդ այն նամակգրութիւնները որոնք Ռ. Սեւակի կողմէ ղրկուած են Զանղըրբէն: «Օրիկինալ»ները: Այդ բոլորը հրատարակելու ուրախութիւնը ունեցայ տարիներու ընթացքին, թերթի

մէջ, բայց դժբախտաբար, ժողովուրդին մեծամասնութիւնը տեղեակ չէ այդ թուղթերէն: Ուրեմն այդ բացիկները, արաբական տառերով թրքերէն գրուած են, որովհետեւ գրաքննութիւն կար, ուղարկուած են Պոլսէն իր կնոջ: Յաննի Սեւակին իր ամուսինին Զանղերը ուղարկած բացիկը շատ բծախնդիր թրքական թղթատարութիւնը կնքած է գրելով.— «Մեկնած է առանց հասցէ ձգելու»: Սա ալ ըսեմ, որ Թուրքիոյ թղթատարական ցանցը ստեղծողը եղած է Շամիրամի կնքահայրը եղող Ոսկան էֆէնտի Մարտիկեան: Որ մաս կը կազմէր Իթթիհատականներու կառավարութեան: Այսպէս — Ռ. Սեւակ կ'առաջնորդուի 26 Օգոստոս 1915-ին, Դանիէլ Վարուժանի և ուրիշ երեք անձնաւորութիւններու հետ դէպի Այաշ. և այդ օրէն մէկ օր առաջ Սեւակ կ'ուղարկէ վերջին գրութիւն մը, հեռագիր մը իր կնոջ, կրկին գրուած արաբատառ թրքերէնով որ կ'ըսէ.— Վաղը, Դանիէլ Վարուժանի հետ, կը մեկնինք Այաշ: [Ուրիշ սպանդանոց մը] նամակնիդ հոն ուղարկեցէք: Այս է վերջին հետքը Ռուբէն Սեւակէն: Անկէ ետք՝ ոչ մէկ հետք կը մնայ Ռուբէն Սեւակէն: Շնորհակալութիւն»:

Վլատիմիր Պետրոսեան.— Պիտի ասեմ, թէ այդ թանգարանը, Տունը ինչ է արել: Ուրեմն Ընկ. Զիլինկիրեանը հրատարակել է մօտաւորապէս երեսուն գիրք՝ հայագիտական, հայ ժողովուրդի պատմութեան տարբեր հարցերի շուրջ: Եւ ամէնից կարեւորը՝ որ Յ. Զիլինկիրեանը հովանաւորում է Ռուբէն Սեւակի անուան դպրոցը որ գտնւում է Երեւանում: 15 տարի է դպրոցը կոչւում է Սեւակի անունով: Եւ ընկ. Զիլինկիրեան ամէն ինչով օգնում է որ այդ դպրոցի կոլեկտիւը արժանաւորապէս դաստիարակի երախաներին: Եւ շատ մեծ շնորհակալ

գործ է արել: Ես կ'ուզենամ ասել, որ Ռ. Սեւակ այն մեծ գործիչներից էր, որ մեղադրում էր այլասերուող մտաւորականներին, որոնք ազգի առաջնորդութիւնը ստանձնել են, բայց այդ ազգին չեն ծառայում: Ռուբէն Սեւակը դէմ էր երիտթուրքերի հետ գործակցութեան: Ռուբէն Սեւակը կոչ էր անում որ հայ ժողովուրդին հարկաւոր է նոր սերունդ, նոր առաջնորդներ, որպէսզի ժողովուրդը հեռու պահուի փորձանքներից: Եւ Ընկ. Չիլինկիրեանը Ռուբէն Սեւակի այս տեսութիւնը իր պատմագիտական ուսումնասիրութիւններում պաշտպանում է, զարգացնում և նպաստում է որպէսզի մեր գիր-գրականութիւնը, մեր քաղաքականութիւնը գնան, ընթանան այն հունով, ինչ որ գուշակել է Ռուբէն Սեւակը:

Տեսէք՝ հարցրեցին թուրք-հայկական սահմանին բացման մասին: Մենք տարբեր բացատրութիւններ լսել էինք՝ դէմ և կողմ: Բայց հաւատացած եմ՝ մեզնից ոչ ոք այսպէս հաստատ պատասխան չէր լսել: Մենք թուրքերի հետ պատերազմական վիճակի մէջ ենք, և պատերազմող երկրների միջեւ եղած սահմանների բացման մասին ընթացող ամէն խօսակցութիւն աւելորդ է:

Մենք շատ առարկութիւններ լսել էինք Աւագ Խաչատրեանի հետ, բայց այսպիսի առարկութիւն ահա, փիլիսոփայական, քաղաքական, դիւանագիտական գնահատական թրքական սահմանի բացման վերաբերեալ նոր ենք լսում: Եւ ես կ'ուզենայի որ դուք այս բոլորը լաւ իմանաք և այն ինչ որ Ընկ. Չիլինկիրեանը այստեղ ասաց, դառնայ մեզ համար օրէնք: Եւ դա մեր կողմից տարածուի միւս հայերին: Որ իմանան, թէ ինչ կայ աշխարհում:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՀԵՏ ՍՐՏԲԱՑ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Հաղորդավարը.— Դպրոցի ողջ աշխատակազմը սրտատրոփ սպասում էր այդ հանդիպմանը, որ ի վերջոյ կայացաւ Ռուբէն Սեւակի Յիշատակի Տանը: Նրանք իրենց սրտի խօսքերը ուղղեցին դպրոցի բարերարին, հայրենանուէր գործիչին՝ Յովհաննէս Զիլինկիրեանին:

Հանդիպման ներկայ էին նաեւ պատմաբան Վլատիմիր Պետրոսեանը և Յովհաննէս Զիլինկիրեանի փեսան՝ Պրն. Յակոբ Աւագեանը:

Տնօրենուհի Ճուլիա Ղազարեան.— Սիրելի պաշտօնակիցներ, ինչպէս գիտէք՝ մէկ շաբաթ է արդէն՝ Պրն. Զիլինկիրեանը գտնուում է Հայաստանում, Վեհափառի հրաւէրով: Նա եղաւ մեզ մօտ մէկ անգամ: Չկարողացաւ իրօք հանդիպել բոլորիս հետ: Բայց փոխանցեց իր ցանկութիւնը որ անպայման բոլորիս տեսնէ: Եւ ամէն մէկս ինչ ցանկութիւն որ ունի, ինչ սրտի խօսք ունի, թէկուզ էդպես՝ հարցազրոյցի նման հանդիպման ընթացքին իր մտքերն ու զգացումները արտայայտի:

Ես, բոլոր կոլեքթիւի անունից, շնորհակալութիւն յայտնում եմ Պրն. Զիլինկիրեանին, որ այս 15 տարիների ընթացքում ցուցաբերել է հոգատար վերաբերմունք մեր նկատմամբ:

Այժմ, մեծ սիրով, ուզում ենք լսել ձեզ։

Յովհ. Չիլինկիրեան.— *Ուրեմն, բոլորիդ ալ տեսած եմ տեսաերիզներուն մէջ, 15 տարիներէ ի վեր, որ Տիկ. Ղազարեանը կ'ուղարկէր, բոլոր ուսուցիչները... մեծ ուրախութեամբ հետեւած եմ, հեռուէ-հեռու... բայց այսօր անձամբ ձեզ տեսնելու ուրախութիւնը և երջանկութիւնը ունիմ, և կ'ուզեմ այստեղ անձնապէս շնորհաւորել նախ Տիկ. Ղազարեանը՝ կոլեկտիւը և ձեր բոլորը, որ Ռուբէն Սեւակեան ոգին կը փոխանցէք նոր սերունդներուն, որոնք մեր միակ յոյսը կը կազմեն։ Հազար շնորհակալութիւն ձեզ՝ ձեր ներկայութեան, ձեր գործունէութեան... և կը մաղթեմ որ չարունակէք ինչ որ ըրած էք և դեռ կրնաք ընել։ Խոստովանիմ, որ այս օճախին մէջ տեսայ աւելի շատ հայկական չունչ քան այլուր... մեծ շնորհակալութիւն ձեզի։ Յաւելեալ՝ կարճ բան մը ըսելու պիտի ջանամ Տիկ. Ղազարեանին... Ուրեմն բոլորս ալ, նախ առաջ Տիկ. Ղազարեանին և ձեր բոլորիդ աշխատութեամբ ջանանք, որ Ռուբէն Սեւակեան ոգին փոխանձենք նոր սերունդներուն։*

Բնականաբար գիտէք, որ ես եղբօրորդին եմ Ռուբէն Սեւակի, և իմ կարողութեան չափերով կրնամ ողջ պահել Ռուբէն Սեւակեան ոգին։ Բայց այստեղ պարագայ մը կայ, կ'ուզեմ չեշտել ատիկա — ես այս բանը կ'ընեմ ո՛չ անոր համար որ Ռուբէն Սեւակը հօրեղբայրս է, այլ՝ անոր համար որ Ռուբէն Սեւակին ներկայացուցած գաղափարականը, Ռուբէն Սեւակեան իտէալը շատ կարեւոր կը նկատեմ հայկականութեան ապագային համար... այս պատճառաւ է, որ ես ուրախ եմ տեսնելով այստեղ տարուող աշխատանքներուն արդիւնքները, որոնց մասին Տիկ. Ղա-

զարեանը կը տեղեկագրէր ինծի...: Եւ այսօրուան վիճակը որ 15 տարի առաջուան վիճակը չէ Հայաստանի մէջ՝ Ռ. Սեւակի տիպարը աւելի ծանօթ է հայ հասարակութեան՝ հոս և Սփիւռքի մէջ: Ուրեմն՝ մաղթանք մ'ունիմ... շատ դժուար կացութիւն մը կայ այժմ Հայաստանի և ամբողջ աշխարհի մէջ: Ապագան այնքան փայլուն չէ հոս և ամբողջ աշխարհի մէջ: Կրնան շատ վտանգաւոր վիճակներ ստեղծուիլ: Նոյնիսկ՝ Հայաստանի մէջ, ատոր հետեւանքները կրնան տեսնուիլ: Այնպէս որ, դժուար օրեր կը սպասեն ձեզ... խօսք մըն ալ ըսելու ջանամ... ուրեմն՝ գիտէք, թէ թշուառութեան մէջ վեհանձնութիւն փնտռել դժուար է... նախ իր կեանքը պիտի ապահովէ մարդս, յետոյ՝ հայկականութեան իր ծրագիր-նպատակը իրականացնելու պիտի ձգտի աշխատելով: Եւ այս դժուարութեան առջեւ պիտի կարենանք տոկալ: Ես պիտի մաղթեմ, որ այդպէս ըլլայ, և կը հաւատամ, որ այդպէս պիտի ըլլայ:

Ուրեմն՝ կրկին հազար շնորհակալութիւն ձեզի — ձեր տարած աշխատանքներուն, Ռուբէն Սեւակի ոգին վառ պահելու համար... որ պիտի տարուի Տիկ. Ղազարեանի առաջնորդութեամբ և ձեր բոլորիդ մասնակցութեամբ: Որուն համար կանխաւ շնորհակալութիւնս կը յայտնեմ ձեզի:

Տիկ. Ղազարեան.— Պրն. Յակոբ Աւագեանին ձայն տանք...

Յ. Աւագեան.— Ի՞նչ կրնամ ըսել, շնորհակալութիւն յայտնելէ ուրիշ, Տիկ. Ղազարեանին...

Յ. Զիլինկիրեան.— Եթէ թոյլատրէք... երկու խօսք եւս... բնական է՝ տարիքս գիտէք թէ ոչ... բոլոր մարդոց նման ես ալ վաղանձուկ եմ... Իմ փեսաս՝ Յակոբը իմ փոխա-

նորդս է իմ... վերջնական մեկնումէս յետոյ: Ասիկա հրապարակաւ կ'ուզեմ ըսել:

Տիկ. Ղազարեան.— Ուրեմն, Պրն. Ձիլինկիրեանի գործը, իր փեսան՝ Պրն. Աւագեանը պիտի շարունակի:

Յ. Աւագեան.— *Միասին պիտի աշխատինք շատ տարիներ: Շնորհակալութիւն:*

Տիկ. Ղազարեան.— Վստահ եղէք, որ այս կոլեկտիւը, հզօր մանկավարժական խորհուրդը, միշտ պատրաստ է, միշտ ցանկացած պահին ներդնել իր ամբողջ ուժը, կարողութիւնը որպէսզի պատշաճ մակարդակով ներկայանանք ցանկացած տեղ: Ես ինչու եմ գնահատում: Իրենց երեսին... չեմ ասել, որ գոհ եմ իրենցից:

Երէկուայ մեր հանդիպումը Պրն. Տատրեանին հետ: Մի քանի ուսուցիչներ կային... Պրն. Տատրեանն էլ նկատեց, որ մի ամուր կոլեկտիւ է մերը, և կարողանում է իր աշխատանքները իւրացնել... Այնպէս որ, վստահեցնում եմ, որ մեր բոլոր ծրագիրները իրականացնում ենք Էստեղ, Հայաստանում, և պատրաստ ենք ընդունել ձեր բոլոր հիւրերին ում որ կամենաք... Դա ձեր, հարազատ օճախն է, ձեր հարազատ դպրոցն է, և դուք պէտք է ներկայացնէք... և մենք պէտք է ներկայացնենք:

Յ. Ձիլինկիրեան.— *Ուրեմն, Տիկինս, չըսելու համար ինձմէ աւելի՝ ինծի չափ կ'ոգեւորուի... տեսնելով այստեղ տարուած աշխատանքները, ձեր ուղարկած երիզները դիտելով: Ուրեմն երկու խօսք եւս աւելցնել կ'ուզեմ.— Այստեղ կը գտնուի անձ մը որ իմ գրականութեան ճամբով, աշխատանքներուս զուգահեռ աշխատանք կը տանի, գաղափարակից ընկերս է, որ ընդհանրապէս գիտէք՝ շատ ատեն բուն աշխատանք տանողը կը մոռցուի, չուքի մէջ*

կը մնայ. այդ անձը այսօր մեր քով կը գտնուի, այդ անձը Պրն. Պետրոսեանն է: Կ'ուզեմ ձեր առջեւ շնորհակալութիւնս յայտնել իրեն, իր տարած աշխատանքներուն համար: Մանաւանդ՝ հայկական ոգին տարածելուն համար իր գրութիւններով և գիրքերով: Կ'ուզէի արդ, որ Պրն. Պետրոսեանը իր խօսքը ըսէր. գոնէ այսօր, որովհետեւ առջի օր մոռցանք իրեն խօսք տալ: Եթէ կարելի է Պրն. Պետրոսեան...

Վլատիմիր Պետրոսեան.– *Եթէ գիտէք՝ չախմատ խաղալուն հեռուից աւելի լաւ ես նայում, չէ՞... եւ ուրեմն պիտի ասեմ՝ որ ես հեռուից նայում եմ Ընկ. Զիլինկիրեանին... բայց ասեմ թէ ինչու ես ընկեր Զիլինկիրեան եմ ասում և ոչ թէ Պարոն: Զեմ յիշում՝ երկրորդ թէ երրորդ դասարանում էի, մեր ուսուցչուհին դերեր բաժանել էր՝ Գառն ու Գայլը: Ինձ տուել էր Գայլի դերը: Ես լաց եղայ – ես Գայլի դեր չեմ ուզի: Էդ ժամանակից Պարոն բառը չեմ ընդունի: Ես հեռուից նայում եմ Պրն. Զիլինկիրեանին... այսօր Հայաստանում ամենաճնշուած դասը, խաւը ուսուցիչներն են:*

Յ. Զիլինկիրեան.– Պարոնը հայկական մակդիր չէ: Կիլիկեան թագաւորութեան շրջանէն մնացած մէկ ազնուական տիտղոս է: Բայց, հարազատ դառնալու ճամբու մէջ է:

Բայց, ի տարբերութիւն ընդհանուր... այդ վիճակին... պէտք է ասեմ որ Սեւակի անունը կրող դպրոցին ուսուցիչները ինչ որ չափով – չէի ասի թէ շատ – բայց ինչ որ չափով այս դպրոցի պատերի մէջ լաւ են զգում շնորհիւ ձեզ: Եւ կ'ուզենայի որ դուք անպայման իմանաք: Ես շատ ուրախ եմ, միշտ գալիս եմ այստեղ, լինում եմ նաև Երեւա-

նի, նաեւ Հանրապետութեան այլ դպրոցներում, գիտեմ դպրոցական կեանքը, ինքս մանկավարժ եմ կրթութեամբ, և հանդիպել եմ շատ բարերարների: Ձեր բարերարութիւնը ունի մեծ բովանդակութիւն: Դուք, նախ և առաջ, դպրոցի կոլեկտիւին, այս հիասքանչ մանկավարժներին օգնում էք որպիսի նրանք երախային դաստիարակեն, Հայկական կրթութիւն տան նրանց. Հայրենասիրութեամբ դաստիարակեն: Ես ուղղակի ուրախանում եմ երբ ամէն անգամին որ գալիս եմ էստեղ, էդ փոքր երախայից սկսեալ մինչեւ 12-րդ դասարան բոլորն Ռուբէն Սեւակ են արտասանում: Մենք չենք դիտում դա իբրեւ բանաստեղծ Ռուբէն Սեւակ: Դիտում ենք որպէս առնչութիւն Հայկական ոգու հետ: Դա շատ կարեւոր է և էլի պիտի կրկնեմ, որ դա արւում է ձեր շնորհիւ: Ձեր գաղափարականը այստեղ նստած բոլոր մանկավարժները... ես համոզուած եմ որ բոլորը կրում են ձեր գաղափարը: Այլապէս՝ Ռուբէն Սեւակի դպրոցը մեր Հանրապետութիւնում չէր ստանայ այն համբաւը, ինչ որ նրանք այսօր ունեն, շատ դպրոցների հետ համեմատած:

Ես հենց պիտի ասեմ, որ Ընկ. Չիլինկիրեանը — ես երէկ կրկնեցի մեր համալսարանում և այսօր ուզում եմ ձեր մօտ էլ ասել՝ Ակադեմիական ինստիտուտներում չեն կատարում այն գործը Հայագիտութեան ասպարէզում ինչպէս անում է մի անձնաւորութիւն՝ Ընկ. Չիլինկիրեանը: Նրա այս թուրքերի «Իբր թէ չիմացած իրականութիւնները» բացայայտելը մեր արեւելագիտութեան ինստիտուտի սուրբ գործն է: Թուրքական մամուլը ինչ լուտանքներ էլ որ թափում է մեր ազգի հասցէին, մերոնք պարտաւոր են անմիջապէս արձագանգել: Չկայ այդ գործը: Ես երբեմն

էդտեղ աշխատող մեր ընկերներին ասում եմ՝ դուք չէ՞ք ամաչում. Թուրքերը մեր մասին գրում են: Ո՞ւր է ձեր պատասխանը: Ինչո՞ւ չէք հրապարակում: Ամբողջ երկու ինստիտուտ չեն անում այն, ինչ անում է Զիլինկիրեանը: Դրա համար ես կարծում եմ, որ դուք երէկ ընդունել էք Տատրեանին, այսօր ասպարէզում շատ է երեւում, Ռիչարտ Յովհաննէսեանը. Թող նրանք չնեղանան ինձնից, Ընկ. Զիլինկիրեանն էլ Թող չնեղանայ. ես պատմաբան եմ. բոլորի աշխատանքներին ծանօթ եմ, բայց այն ինչ որ անում է Ընկ. Զիլինկիրեանը ես պիտի ասեմ՝ միայն մի բառով.— դա սխրանք է, իրական սխրանք:

Նրա գրածների մէջ ոչ մի հայհոյանք չկայ: Ոչ մի ատելութիւն չկայ Թուրքերի նկատմամբ: Մեզ հարկաւոր է փաստերով ապացուցել մեր ճշմարիտ լինելը: Եւ մեր ուսանողները Ընկ. Զիլինկիրեանին հարցրեցին.— «Ինչ կարծիք ունէք հայ-Թրքական սահմանի բացման կապակցութեամբ»: Նա ասաց, որ մեր հանդիպմանը չի վերաբերում հարցը. բայց կը պատասխանեմ: Եւ իւրովի պատասխանեց. «Մեր և Թուրքերի միջեւ, Հայաստանի և Թուրքիայի միջեւ պատերազմը չի դադարել: Եթէ պատերազմը մեր միջեւ չի դադարել՝ ինչ խօսակցութիւն է գնում սահմանը բացելու մասին»:

Մենք բոլորս քննարկում ենք՝ սահմանը բացել-չբացելը: Մեզանից ամէն մէկը մի կարծիք է յայտնում: Բայց ոչ ոքից այսպիսի դիպուկ պատասխան ես չեմ լսել: Ոեւէ մէկի կողմից: Ուրեմն դուք պատկերացրէք, Թէ Ընկ. Զիլինկիրեանը ինչպիսի խորութեամբ է պատկերացնում, հասկանում և մեզ է մատուցում մեր ժողովուրդի պատմութիւնը:

Ես ուղղակի, որպէս մանկավարժ, ձեզ նախանձում եմ, չատ բարի ձեւով, որ լծուել էք մի գործի, որի գաղափարական ակունքներին կանգնած է Յովհաննէս Չիլինկիրեանի նման մտածողը, փիլիսոփան, պատմաբանը, գիտնականը, հասարակական գործիչը, որից յետոյ մենք կարող ենք աւելացնել այդ ընդհանուր բառը՝ բարերարը:

Հիմա, եթէ թոյլ կտաք ինձ՝ մի երկու րոպէ աւելացնել՝ մեր կողքին նստած է չատ համեստ Ընկ. Յակոբ Աւագեանը, որ Ընկ. Չիլինկիրեանը ներկայացրեց որպէս իր գործի չարունակողը: Ես համոզուած եմ, որ նրանք, միասին, դեռ երկար այդ գործը կը տանեն:

Բայց ուզում եմ ձեզ տեղեկացնել, որ մենք այսօր ունենք 16 թէ 17 երկիր որ ճանաչել են հայկական ցեղասպանութիւնը: Էդ երկրների մէջ է նաեւ Շուէյցարիան: Մեր թերթերը գրեցին, որ Շուէյցարիան ճանաչեց հայկական ցեղասպանութիւնը: Ուրիշ ոչինչ չեն ասում:

Ահա, մեր հիւրն է այսօր Յակոբ Աւագեանը, որ Շուէյցարիայում ցեղասպանութիւնը պառլամենտում ճանաչելու գլխաւոր նախաձեռնողներից է: Յակոբի և իր Շուէյցարիացի բարեկամների միջամտութեամբ, պառլամենտը ճանաչել է հայկական ցեղասպանութիւնը:

Յակոբ Աւագեան.– Միայն ես չէի: Ուրիշ ընկերներ ալ կային: Պառլամենտին մէջ մէկը պէտք էր ներկայացներ ցեղասպանութեան հարցը: Շատ ուրիշ ընկերներ աշխատեցան: Անհատական աշխատանք չէր երբեք: Մեզի օգնեց մանաւանդ Ֆրանսացի երեսփոխան Ժան-Վոլֆուտրոն: Խեղճը վախճանեցաւ վերջերս: Ժընեւի եկեղեցիին առջեւ, հայասէր այս անձին ի պատիւ, յուշաքար մը դրուեցաւ:

Կ'ուզեմ յիշեցնել, որ Ռուբէն Սեւակի ծննդեան 125 ամեակն է մօտերս: Յոյսով եմ, որ պատշաճօրէն այն կը նշուի: Շնորհակալութիւն:

Տնօրէնուհի Տիկ. Ղազարեան.— Հիմա, կը ցանկանայինք լսել, մեր ուսուցիչներին: Իրենց և թէկուզ կատարած աշխատանքների մասին, ցանկութիւնների մասին: Դուք գիտէք մեր Ռուզանին մասին, որ Ռ. Սեւակի «Զանգակներ» անունը կրող երգչախմբին ղեկավարն է: Վերջերս, Նախագահի կողմից, շնորհակալագրի և ոսկեմետալի արժանացաւ մեր երգչախումբը:

Այստեղ, ի պատասխան իրեն ուղղուած բարեմաղթանքներուն՝ ներկայ ուսուցչական կազմին կողմէ, Յ. Զիլինկիրեան ցանկաց ունենալ Շամիրամ Սեւակի երկարակեցութիւնը:

Վ. Պետրոսեան.— «Նայիրի» թերթում երբ ես կարդում էի Յ. Զիլինկիրեանի հրապարակումները՝ ես ապշում էի մտածելով, թէ ինչպէս է նա հասցնում... վստահ եղէք, վստահ եղէք, որ ապագայում նա անպայման կրկին կ'այցելի մեզ:

ՄԱՐՕ ՄՈՎՍԻՍԵԱՆ.— «Նայիրի»ի էջերը երբ բացում ենք, մենք անպայման կարդում ենք Պրն. Զիլինկիրեանի յօդուածները: Ձեր յօդուածները հիմնական մէկ նպատակ են հետապնդում — Հայրենիքը զօրացնել, պահպանել հայի տեսակը, և մենք ամէն ինչ աշխատում ենք անել այդ նպատակին հասնելու համար — և նաեւ, ինչո՞ւ չէ՝ կիսում եմ ձեր մտահոգութիւնը որ հայու աշխարհը խառնակ է, և լաւ ապագայ չկայ աշխարհի համար, դրա համար մենք էլ, աւելի պիտի կառչենք մեր արմատներին, էլ աւելի տարածենք հայկականութեան տեսակը, մեր զաւակներին,

երախաներին դպրոցում էլ աւելի աշխատենք պահպանել այդ գաղափարը Հայրենասիրութեան: Եւ մենք, այս 15 տարիների ընթացքում երբ մի միջոցառում էինք անում, հաշուի էինք առնում որ հեռուից մեր ներկայացումը դիտում է Պրն. Չիլինկիրեանը: Եւ նա դժգոհ կը լինի այնտեղ, եթէ Հայութեան համար ճիշդ բան չանենք: Յանկանում ենք ձեզ արեւշատութիւն, երկար կեանք: Սեւակեան կէնը ձեր մէջ է... որովհետեւ դուք այդ կէնը կրողն էք, մտաւորական և Հայրենասէրի կէնը կրողն էք... և այդ կէնը երկար կը գործի ի փառս մեր ժողովուրդի ու Հայրենիքի, ի փառս մարդկութեան, որովհետեւ ձեզ յուզում են այդ բոլոր հարցերը մարդկութեան: Դուք բարութեան, արդարութեան, ճշմարտութեան մունետիկ մըն էք: Եւ ձեր յօդուածները կարդալով՝ ինչպէս դուք մի անգամ ասացիք՝ նոյնատիպ ենք մտածում: Ես գնահատում եմ ձեր մէջ անկեղծութիւնը, յանուն արդարութեան: Դուք գրում էք ամէն ինչի մասին, առանց Հաշուի առնելու հեղինակութիւնները:

Եւ մի հարց եւս կ'ուզենայի ձեզ տալ՝ դա կայ նաեւ Շահան Շահնուրի մօտ — Նարեկացուն ընդունո՞ւմ էք որպէս մեծ գրողի, ի՞նչ է ձեր կարծիքը. էդտեղ Հայ և Հայութեան մասին ի՞նչ կայ, բայց Նարեկացին արդէն համարւում է աշխարհի մեծագոյն գրողներից մէկը...

Յ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ.— Նարեկացիին մասին շատ բան ասելու իրաւունք չունիմ նախ: Որովհետեւ բոլորիդ սրտին մէջ է Նարեկացին: Ամէնուն սիրելին է. մանաւանդ՝ մինչեւ Եղեռնի շրջանը՝ ամէն Հայ կնոջ բարձին ներքեւ էր «Նարեկ»ը, իբր Սուրբ Գիրք: Որովհետեւ ինք իրապէս այնքան փայլուն, այնքան ճոխ ձեւով բացատրած է,

տուած է Աղօթքը առ Աստուած ուղղուած։ Այդ տեսակէտով՝ Նարեկացիին Սուրբ Գիրքը ինծի համար ապահովութիւն է։ Նարեկը աշխարհի շատ լեզուներու թարգմանուած ու գնահատուած է։ Հայութիւնը այնքան ծանօթ չէ եւրոպացիին որքան «Նարեկ»ը։ Բայց ատիկա, ինչպէս որ դուք նկատեր էք՝ այսօր Նարեկացիին գերեզմանը չկայ։ Նարեկացիին գիւղը չկայ։ Նարեկացիին վանքը չկայ։ Ես պիտի նախընտրէի՝ Վարդանանցի հերոսներուն պէս մէկը ըլլար Նարեկացին, քան թէ՝ այդ հոյակապ, Աստուածային մատեանը գրողը։ Կրցա՞յ բացատրել իմ մտածումը։ Ռուբէն Սեւակի կիսանդրիին տակ գրուած է՝ «Թուրը աւելի արդար է Խաչէն»։ Նարեկացիին մասին գաղափարս այս է։ Որովհետեւ եթէ ան իր ձեռքը ուժ ունենար՝ կրնար ինքզինք պաշտպանել։ Ատենօք ներկայ եղայ բանախօսութեան մը. ուր հայ կաթողիկէ Վարդապետ մը՝ Նիս քաղաքին մէջ ըսաւ.— Հայ ժողովուրդը, Պարսկաստանի սահմանին վրայ, եկող խուժաններուն դէմ Աւետարանը ցոյց կու տայ եղեր ինքնապաշտպանուելու համար։ Գիտէ՞ք, թէ ինչ եղաւ հետեւանքը։ Եթէ այդ Աւետարանին տեղ հայերը սուր մը ունենային իրենց ձեռքին՝ կը պաշտպանէին ինքզինքնին։ Ա՛յս է Նարեկացիին մասին իմ կեցուածքը։ Աւելցնեմ...

Գիտէք, թէ Նարեկացին Վանի շրջանը ապրած է։ Այսօր որո՞ւ ձեռքն է Նարեկի վանքը։ Անոր հետքն անգամ չկայ։ Յատուկ առաքելութեամբ՝ թուրք զինուորները հոն գացեր են հիմնայատակ կործանելու և անհետացնելու համար այդ Վանքը։ Բուն Հայաստանը այսօր, ութսուն առ հարիւրով, թուրքերուն ձեռքն է։

Հայ-թրքական սահմանի բացուելու մասին կը խօսուի,

երբ Թուրքը հայուն հայրենիքին 80 առ հարիւրը գրաւած է: Երբ որ Արեւմտահայութեան 80 առ հարիւրը ցեղասպանութեան ենթարկուած է, բայց մենք այսօր, սահմանը բանալու մասին կը խօսինք:

Ինչպէ՞ս կարելի է այդ:

Բայց, սա մէկն ալ ըսեմ, որ այսօրուան իրականութեան չափով հարկ է իրապաշտ ըլլալ: Մեր հայրենիքին 80 առ հարիւրը Թուրքին ձեռքն է — կրնա՞նք անոնցմէ առնել գողցուած հայրենիքը: Այսօր Թուրքը զօրաւոր է իրեն կռնակ եղող Ամերիկացիին և անոր զինակիցներուն շնորհիւ: Բայց մենք հայրենիք մը ունինք այսօր, 30 հազար քառ. քլմ.նոց: Ան կը համապատասխանէ Զուիցերիոյ, Պելճիքայի ու անոնց նման երկիրներուն տարածքին: Մենք աշխատինք, որ զայն բարեբեր երկրի, հայրենիքի վերածենք: Անկախութենէն ի վեր, այս մէկը կը սպասէինք: Երբ 30 տարի յետոյ ես հոս՝ եկայ՝ շատ յառաջացում տեսայ, ասոր կասկած չկայ: Բայց ուրիշ պարագայ մըն ալ տեսայ — վտանգ մը կայ հայութեան համար, մեծ վտանգ մը, շա՜տ մեծ: Այդ վտանգը ինչ է, գիտէ՞ք — Եւրոպականացման վտանգն է: Առաջ բոլորս ալ կ'ուզէինք եւրոպացի ըլլալ, եւրոպացիի պէս «Քաղաքակիրթ» ըլլալ: Այսօր, վիճակը, երէկին բոլորովին հակառակն է: «Եւրոպականութիւն»ը մեզի համար մեծագոյն վտանգը կը կազմէ: Ես անձամբ այդպէս կը մտածեմ:

Երբ կը տեսնեմ հայրենի հեռուստատեսութենէն՝ հայկական առաջին ալիքին սփռումները, կը համոզուիմ որ եւրոպացիին, ամերիկացիին ու իրենց նմաններուն նպատակը քանդել է Հայաստանի, հայութեան ոգին: Այս է եղածը:

Լրագրող մը.— *Այստեղ կայ մի հրաշալի կոլեկտիւ: Ես հասկացայ, որ ինձ համար այս տեղ բացայայտուում է Ռուբէն Սեւակի աշխարհը: Այստեղ ես ճանաչեցի Ռ. Սեւակին իր բոլոր գծերով, մարդկային նկարագրով և որպէս բժիշկ... Եւ այդ ամէնը՝ շնորհիւ այս դպրոցի ոտնամուտով: Հաւանաբար ինձ օգնեցին նաեւ Յ. Զիլինկիրեան մարդու գործունեութիւնը. նրա գրած այն բոլոր յօդուածները որ ես կարդացած եմ «Նայիրի» թերթում, ինչպէս նաեւ այն հաստափոր գիրքը որ տարել եմ խմբագրութիւն և շատ աշխատել դրա վրայ: Ահաւասիկ, ես ինձ համարում եմ այս կոլեկտիւի անդամ, որովհետեւ ինձ հարազատ է նա, և չկայ մի միջոցառում որուն ես չկարողանամ մասնակցել: Եւ ինչն է զարմանալին... Ես չեմ տեսնում կրկնութիւն: Այդ միջոցառումներին ես չեմ ձանձրանում: Ես նաեւ լրագրող եմ և շատ դպրոցներ եմ լինում, ես այնտեղ գնում եմ և արդէն ինձ թւում է, որ արդէն ես գիտեմ վերջաբանը, ինչ է վերջաբանը, ինչ պիտի լինի: Բայց այստեղ բոլորովին այլ է: Ամէն դէպքում՝ այստեղ մանկավարժները այնքան հետաքրքիր վերջաբան են գտնում, այնքան հետաքրքիր լուծում են տալիս, որ դու անպայման ուզում ես տեսնել, թէ ինչ պիտի լինի վերջը: Եւ ինչն է կարեւորը: Այս դպրոցում երախան հայեցի դաստիարակութիւն է ստանում առաջին իսկ տարիներին: Այնքան էլ հեշտ չէ Սեւակեան աշխարհ ներթափանցելը: Նրանք կարողանում են արտասանել և, կաթիլ-կաթիլ, Սեւակեան գաղափարները մտնում են արեան մէջ. և դա շատ կարեւոր է: Ազգային նկարագիրը և հայեցի դաստիարակութիւնը մեր օրերի գերխնդիրն է»:*

Տնօրէնուհի Ղազարեան.— Հենց այդ առաջին քայլերը,

այդ փոքրիկների, Ընկհ.ի Գալստեան, դուք ո՞նց էք դիմաւորում մուտքը այդ փոքրիկներին. ո՞նց էք դիմաւորում և ո՞ւր էք բերում այդ երախաներին: Առաջին իրենց պահը երդման արարողութեան... էդտեղից սկսենք, այդ առաջին վայրկեանից: Ես կը խնդրէի այդ...

Տիկ. Գալստեան.— *Ռուբէն Սեւակի այս կրթօճախում արդէն երկար տարիներ, գեղեցիկ աւանդոյթ է դարձել: Փոքրիկներին համար միջոցառում ենք ունենում: Մեծ սիրով ու ակնածանքով նրանք մուտք են գործում Ռուբէն Սեւակի թանգարան... առաջին անգամ զգում են, որ Ռուբէն Սեւակի անուան դպրոցի աշակերտ են, և կ'երդուեն հոն, որ իրենք պատուով պիտի կրեն Ռուբէն Սեւակի անուան դպրոցի կրթօճախի հաւատարիմ աշակերտ լինելու պատիւը:*

Նրանք առաջին օրից գիտեն, թէ ով է Ռուբէն Սեւակ, և առաջին դասին իրենք կարողանում են իրենց չափով հասկանալ, թէ ո՛վ է Ռուբէն Սեւակը, աւելի պարզւած աւելի մատչելի լեզուով... և նոյնիսկ պատահում են դէպքեր, որ նոր դպրոց եկած երախան արդէն ճանաչում է Ռուբէն Սեւակ և կարողանում է անգամ արտասանել որեւէ քառատող նրա մէկ բանաստեղծութիւնից, որը գրել է Ռուբէն Սեւակ: Եւ դա շատ ողջունելի է, որ ոչ միայն մեր ուսուցիչները դպրոցում են այդ աշխատանքը տանում, այլեւ՝ մենք ունենք ծնողներ որոնք նախկինում ունենում են աշակերտ և յետոյ բերելու են իրենց փոքրիկներին. և արդէն նրանց տանը հնչում է Ռուբէն Սեւակ, և երախան, արդէն դեռ դպրոց չեկած, լսում է Ռ. Սեւակի բանաստեղծութիւնները և մեծ սիրով է տրամադրւում, որ մի օր պէտք է գայ այդ դպրոցը և բարձր պահի այդ դպրոցի պատիւը:

Ես ուզում եմ նաեւ խորին շնորհակալութիւն յայտնել ո՛չ միայն մեր բոլոր ուսուցիչների անունից, այլեւ՝ ծնողների անունից Պրն. Յ. Զիլինկիրեանին: Քանի որ նա մեծ ուշադրութեամբ կարողանում է բոլոր հարցերը լուծել արժանի ձեւով: Այն, որ մեր փոքրիկները միջոցառումներից յետոյ ձեր ուշադրութեան են արժանանում, դա դուք չէք կարող պատկերացնել, թէ ինչ երախտագիտութեամբ, ինչ մեծ սիրով են նրանք դա ընդունում և ձեր անունը մեծ պատուով գրում են ու պահում:

Ուսուցչուհի մը մաղթեց, որ ՀՀ-ի Գրողների Միութեան Նախագահին կողմէ ներկայացուած ծրագիր-միջոցառումները իրականութեան վերածուին. ինչպէս՝ Երեւանի փողոցներէն մէկը Ռուբէն Սեւակի անունով կոչելը:

Յ. Զիլինկիրեան պատասխանեց.— *Ուրիշ ծրագիրներ ալ կան...:*

Տնօրենուհի Ճուլիա Ղազարեան.— Յարգելի Պրն. Զիլինկիրեան՝ ուզում ենք յանձնել ձեզ, մեր կոլեկտիւի կողմից, Արեւմտեան Հայաստանի քարտեսները և սրբապատկեր մը. Արցախեան ազատագրական պատերազմի նկարագրականը և դպրոցի երախաներու կողմէ գծուած նկարներու ալպոմը... որպէս յուշանուէր:

Տնօրէնուհին մաղթեց, որ յաջորդ տարի, Ռուբէն Սեւակի նահատակութեան տարեդարձի նշման առթիւ, Յովհաննէս և Իրմա Զիլինկիրեանները, Շամիրամ Սեւակ ու իրենց հարազատները այցելեն Հայաստան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ 5
ՄՈՌԱՑՈՒԹԵՆԷ ԴԷՊԻ ՅԱՒԵՐԺՈՒԹԻՒՆ 17
«ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ» 61
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՒԱՆ ԴՊՐՈՑԻՆ ՄԷՋ 78
ՌՈՒԲԷՆ ՄԻՐԶԱԽԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ 81
ԱՅՍՏԵՂ ՀԻԱՑՈՒՄՈՎ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԵՆՔ ԳԵՐԱՇ. Տ. ԱՐՇԱԿ ԵՊՍ. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ԽՕՍՔԸ 83
Պ. Մ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԸ 86
ԴԱՒԻԹ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ 86
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՕՓՋԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ 90
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ 98
ԱՆԱՀԻՏ ԹՕՓՋԵԱՆ Կ'ԱՍՄՈՒՆՔԷ 102
ՍԵՐԺ ՍՐԱՊԻՈՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ 106
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱՆԴԱՄ ԳՐԱԿԱՆԱԳԷՏ ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ 110
ԱՆՆԱ ՀԷՔԷՔԵԱՆԻ ԽՕՍՔԸ 113
ՋՈՒԼԻԱ ՂԱԶԱՐԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ 117
«ՀՈՒՍԿ ԲԱՆՔ» 121

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ՄԵՐ ԿԱՏԱՐԱԾ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԵՆԷՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ 127

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ ՀԵՏ ՍՐՏԲԱՑ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ 141

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ
ՀԻՇԱՏԱԿԻ ՏԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Հաւաքածոյ արեւմտահայ գրողներու»- չորս հատոր: ՎԵՐԺԻՆ ՏԷՕՇԷՄԷՃԵԱՆ. Պոլիս, 1971:
2. «Հայ ժողովուրդի ողբերգական անցեալը եւ խրախուսիչ ներկան»: ԿԱՐՈ ՄԵՀԵԱՆ. Ս. Ղազար, Վենետիկ,1982:
3. «Որպէս երազ անկրկնելի», Բ հատոր, «Պատմուածքներ»: ԿԱՐՈ ՄԵՀԵԱՆ, Անթիլաս, 1984:
4. «Ռուբէն Սեւակ եւ փրցուելիք ուղեղներ»: ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Փարիզ, 1986:
5. «Ռուբէն Սեւակի վերջին օրերը», Թատերախաղ 5 պատկերով: ԳԷՈՐԳ ԳԱՍՊԱՌԱՃԵԱՆ, Պեյրութ, 1986:
6. «Ս.-Դ. Հնչակեան կուսակցութեան հարիւրամեակը»: ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ, Պեյրութ, 1987:
7. «Մատենագիտութիւն հայատառ օտար լեզուներով տպագիր գիրքերու»: ԱՐՏԱՇԵՍ Հ. ԳԱՐՏԱՇԵԱՆ, Փարիզ, 1987:
8. «Ովքեր են ի վերջոյ արիացիները»: ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԱՐՊԵՏԵԱՆ, Մարսէյլ, 1988:
9. «Ռուբէն Սեւակի անուան յիշատակի տուն», «Ռուբէն Սեւակի գաղափարականը». «Ռուբէն Սեւակի անուան գրական մրցանակ»: ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Փարիզ, 1989:
10. «Թրքական համաթուրանականութիւնը վարագոյրով չի ծածկուիր»: ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ, Պեյրութ, 1990:
11. «Ռուբէն Սեւակ», Երկեր, հատոր երկրորդ: ԱԼԵՔՍԱՆՏՐ ԹՈՓՉԵԱՆ, Երեւան, 1996:
12. «Էնվեր փաշայի վերջը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Պեյրութ, 1996:
13. «Ռուբէն Սեւակ», Երկեր: Բ հրատարակութիւն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997:
14. «Արարատը պետք է մնայ Երեւանի կողմը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Բեյրութ, 2001:
15. «Ռուբեն Սեակը և մեր ժամանակը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Երևան, 2003:
16. «Թուրքերու իբր թէ չգիտցած իրականութիւնները»: Ա հատոր, հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն: ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2004:

17. «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ. Բանաստեղծություններ, թարգմանություններ: Ռուսերեն, Երեւան, 2004:
18. «Սուտերու եւ երազներու զոհ «էշի նահատակ» եղած ազգ մը՝ «հայերը»: Ա հատոր, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Պեյրութ, 2004:
19. «Իմ Ռուբէն Սեւակը»: ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ, Հալեպ, 2004:
20. «Մենազրույց նահատակ բանաստեղծի հետ»: ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Երևան, 2005:
21. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ հատոր, հայերեն, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2005:
22. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ հատոր, անգլերեն, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2005:
23. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները: Բ հատոր, ֆրանսերեն, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2005:
24. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ հատոր, թուրքերեն, ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2005:
26. ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ. «Հատընտիր»: Ֆրանսերեն, Երևան. 2007:
27. «Ժամանակի հրամայականը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Երևան, 2008:
28. Թուրքերուն [իբր թէ] չգիտցած իրականութիւնները (Լրացված վերահրատարակություն), Բ հատոր, հայերեն, Երևան, 2009:
29. Թուրքերուն [իբր թէ] չգիտցած իրականութիւնները (Լրացված վերահրատարակություն), Բ հատոր, թուրքերեն, Երևան, 2009:
30. Ռուբեն Սևակի աչքերով: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Երևան, 2010:
31. Վերադարձ Հայաստան, Երևան, 2011:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՋԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅԱՍՏԱՆ

Նկարները պատճենահանված են
«ՆԱՅԻՐԻ» չաբաթաթերթերի էջերից

Սրբագրիչ **Վ. Վ. Դերձյան**
Համակարգչային շարվածքը **Թ. Շ. Վարդանյանի**
Համակարգչային ձևավորումը՝ **Թ. Շ. Վարդանյանի**
Ա. Խ. Աղուզումցյանի

Ստորագրված է տպագրության՝ 01.06.2011 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագր. 10 մամուլ: Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 34:

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52